ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՂՈՐԴՈՒՄ

2024 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025 թ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1.1 Վարքագծի կանոններ

1.2 Անհամատեղելիության պահանջներ

1.3 Շահերի բախում

1.4 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում ստացված նվերների հաշվառման գործընթացի կազմակերպումը

1.5 Կոռուպցիայի կանխարգելման ոլորտի վիճակագրության վարման կառուցակարգերի ներդրում

II. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

2.1 Հայտարարագրերի ռեեստրի վարում

2.2 Աջակցություն հայտարարատուներին,

2.3 Ներկայացված հայատարարագրեր

2.4 Հայտարարագրված տվյալների փոփոխություններ

III. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 Հայտարարագրերի ստուգում

3.2 Հայտարարագրերի վերլուծություն

3.3 Հայտարարագրերի ստուգման և վերլուծության արդյունքում իրականացված վարույթներ

IV.ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

4.1 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգում

4.2 Կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների հրապարակում և ներկայացում

V. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

5.1 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացված վարույթների վիճակագրական արդյունք
5.2 Դատական ներկայացուցչության ապահովում
5.3 Այլ իրավական ապահովման աշխատանքներ

VI. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ
6.1 Բարեվարքության եզրակացությունների և դրանց հիման վրա կատարված նշանակումների վերաբերյալ տեղեկություններ
6.2 Բարեվարքության ուսումնասիրության նոր կառուցակարգերի ներդրումն ու կիրարկումը
6.3 Բարեվարքության ուսումնասիրության գործընթացի զարգացման և առաջընթացի արդյունքները

VII. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԶՍՊՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

VIII. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
8.1 Կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրերը և համագործակցային շրջանակը
8.2 Հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերը

IX. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ
9.1 Հայտարարագրման էլեկտրոնային համակարգ
9.2. Կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների հարթակ
9.3 Նվերների հաշվառման ռեեստր
9.4 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պաշտոնական կայք
9.5 Կրթական էլեկտրոնային հարթակ

X. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1.1 Վարքագծի կանոններ

Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների տեղայնացում

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով Հանձնաժողովին է վերապահվել հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի սկզբունքների մեկնաբանման, ինչպես նաև հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների միասնականության ապահովման լիազորությունը: Սույն լիազորությունն անմիջականորեն բխում է հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների սահմանման և դրանց հետագա տեղայնացման օրենսդրական պահանջից:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից հաստատված՝ Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները (այսուհետ՝ Տիպային կանոններ) հիմք են հանրային ծառայության առանձին տեսակների համար վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման համար: Հանրային ծառայության առանձին տեսակները ղեկավարող մարմինները, ոլորտային առանձնահատկությունների առկայության դեպքում, կարող են սահմանել վարքագծի ոլորտային կանոնագրքեր:

Վերոգրյալի շրջանակներում՝ Հանձնաժողովը 2024 թվականի երկրորդ կիսամյակում Տիպային կանոններին համապատասխանության վերաբերյալ դիրքորոշում է տրամադրել Ներքին գործերի նախարարության կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության ծառայողների վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» ՀՀ ներքին գործերի նախարարի հրամանի նախագծի, ինչպես նաև «Հայաստանի հանրապետության ազգային անվտանգության մարմինների ծառայողների վարքագծի կանոնները սահմանելու մասին» ՀՀ ԱԱԾ տնօրենի հրամանի նախագծի

վերաբերյալ: Հանձնաժողովը կանոնագրքերի նախագծերի ուսումնասիրությամբ արձանագրել է, որ դրանցով առավելապես պահպանված են ոլորտային կանոնագրքերի մշակմանը ներկայացվող՝ վերը թվարկված պահանջները, միաժամանակ, առաջարկել է առանձին շտկումներ՝ Տիպային կանոններին նախագծերով սահմանվող կանոնների համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի կիրառում

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովին վերապահված է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքն (այսուհետ՝ Կանոնագիրք) ընդունելու լիազորություն:

Սույն լիազորության շրջանակներում Հանձնաժողովը մշակել և 2024 թվականի փետրվարի 6-ին ընդունել է Կանոնագիրքը, որն ուժի մեջ է մտել 2024 թվականի ապրիլի 1-ից: Կանոնագիրքը հասանելի է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ հայերեն և անգլերեն տարբերակներով, ինչպես նաև իրավական տեղեկատվական arlis համակարգում:

Կանոնագրքով սահմանված նորմերի չպահպանումը օրենքով սահմանված դեպքերում առաջացնում է կարգապահական պատասխանատվություն:

Կանոնագրքի, դրանով սահմանվող նորմերի, ինչպես նաև կիրառման և հետևանքների մասին իրազեկվածության բարձրացումը կարևորելով՝ Հանձնաժողովը նախքան Կանոնագրքի ուժի մեջ մտնելը, ապա նաև դրա կիրառման ընթացքում Կանոնագրքի սուբյեկտ հանդիսացող անձանց շրջանում իրականացրել է իրազեկման աշխատանքներ:

Հաշվի առնելով Կանոնագրքի ուժի մեջ մտնելու ժամկետը՝ Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում արդեն իսկ հնարավորություն է ունեցել քննության առնել համապատասխան պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների խախտման դեպքերը և ապահովելու դրանց համապատասխան իրավական ընթացքը: Կանոնագրքի ուժի մեջ մտնելուց հետո արդեն իսկ նկատելի է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոններին վերաբերելի մեդիա հրապարակումների և Հանձնաժողով հասցեագրվող դիմումների թվի աճ: Որպես օրինակ՝ հարկ է նշել, որ 2023 թվականին վարքագծի կանոնների վերաբերյալ դիմումներ չեն ստացվել, իսկ արդեն

2024 թվականին դրանց թիվը կազմել է 8, նույն հիմքով իրականացվել է 10-ը հրապարակման ուսումնասիրություն, որից 5-ը՝ 2024 թվականի երկրորդ կիսամյակում:

Անդրադառնալով Կանոնագրքի կիրառմանը՝ հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովն ընդունել է վարքագծի կանոնի խախտման վերաբերյալ երկու եզրակացություն Երևանի քաղաքապետի և ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալի-ոստիկանապետի վերաբերյալ: Հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրված խախտման վերաբերյալ Երևանի քաղաքապետը հանդես է եկել հայտարարությամբ՝ հրապարակելով այն համայնքապետարանի կայքէջում: Մյուս դեպքում՝ Ներքին գործերի նախարարի տեղակալը վիճարկել է Հանձնաժողովի եզրակացությունը դատական կարգով, որը մասնակի բավարարվել է: Նշված եզրակացությունները հասանելի են Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ հետևյալ հղումներով՝՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/09/1709.pdf, https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/10/00-26.pdf:

Վարքագծի կանոնի առերևույթ խախտման հիմքով ևս մեկ վարույթ գտնվում է ընթացքի մեջ:

Առանձին դեպքերում վարքագծի կանոններին վերաբերելի մեդիա հրապարակումները Հանձնաժողովի կողմից քննության չեն առնվել՝ հաշվի առնելով Կանոնագրքի սուբյեկտների շարքից պաշտոնատար անձանց դուրս լինելու հանգամանքը, իսկ երեք դեպքում Հանձնաժողովն ուսումնասիրել է պաշտոնատար անձանց վարքագծի հնարավոր խախտումներին վերաբերելի հրապարակումներ, այդուհանդերձ, դրանցով վարույթներ չեն հարուցվել՝ առերևույթ խախտումների վերաբերյալ բավարար փաստական հիմքերի բացակայությամբ պայմանավորված:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ վարքագծի կանոնների համակարգի միասնականության ապահովման տեսանկյունից դեռևս առկա են որոշակի մարտահրավերներ, որոնց պայմաններում անգամ հաստատված կանոնագրքերի կիրառումը գործնականում խոչընդոտների է հանդիպում: Մասնավորապես, սահմանված չեն համայնքի ավագանու անդամների, ինչպես նաև Ազգային ժողովի պատգամավորների վարքագծի կանոնները, ինչը, Հանձնաժողովի գնահատմամբ, զգալիորեն խաթարում է վարքագծի կանոնների միասնական համակարգի ձևավորման ջանքերը:

Ինչ վերաբերում է համայնքային վարչական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների սահմանմանը՝ այս ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են շահագրգիռ մարմինների միջև քննարկումներ, որոնց Հանձնաժողովը ևս մասնակցություն է ունեցել:

Պաշտոնատար անձանց՝ վերը թվարկված խմբերի համար

վարքականոնների սահմանմամբ հնարավոր կլինի ամբողջացնել վարքագծի կանոնների միասնական համակարգը և բոլոր սուբյեկտների կողմից վարքագծի կանոնների խախտումների համակողմանի և արդյունավետ քննությունները:

Վարքագծի կանոնների վերաբերյալ ուսումնասիրություններ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է վարքագծի կանոնների վերաբերյալ թվով 5 մեդիա հրապարակման ուսումնասիրություն: Երկու դեպքում վարքագծի կանոնի խախտման հիմքով Հանձնաժողովը հարուցել է համապատասխան վարույթ, ևս մեկ հրապարակման հիման վրա որոշվել է հարուցել վարույթ, որն ընթացքի մեջ է:

1. «Քաշքշուք, հայհոյանքներ՝ Նոյեմբերյանի համայնքապետարանում. համայնքապետը բռնություն է կիրառել», https://armlur.am/1380343/, «Armlur.am» լրատվական կայք, հունիսի 28, 2024 թ.:

Համաձայն հրապարակման՝ Նոյեմբերյանի համայնքապետարանի առաջատար մասնագետը դիմել է իրավապահ մարմիններին այն բանից հետո, երբ համայնքապետարանում միջադեպ է տեղի ունեցել՝ հաճախումների հետ կապված, ինչի արդյունքում համայնքի ղեկավարը բռնություն է գործադրել մասնագետի նկատմամբ՝ հարվածել է վերջինիս և հայհոյել:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Հանձնաժողովի՝ «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (…), համայնքների ղեկավարների, (...) վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» N 02-Ն որոշմամբ սահմանված համապատասխան Կանոնագրքի համատեքստում, որի 13-րդ կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է չչարաշահել վերադաս լիազորությունը՝ չտալ ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին հակասող կամ իր կամ կատարողի լիազորությունների շրջանակից դուրս բանավոր կամ գրավոր հանձնարարականներ, որոնց կատարումը հանգեցնում է մարդու իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ հեղինակազրկման: Կանոնագրքի մեկ այլ՝ 36-րդ կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ի պաշտոնե հանդես գալիս, ցանկացած իրավիճակում, ցուցաբերել բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն: Միաժամանակ, հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հարգել վերադասի, (...) հանրային ծառայողների և այլ աշխատողների, ինչպես նաև այլոց պատիվն ու արժանապատվությունը: Կանոնագրքի 39-րդ կանոնի սահմանմամբ՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը, պաշտոնեական (ծառայողական) լիազորություններն իրականացնելիս, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, պարտավոր է չգործադրել ֆիզիկական ուժ կամ չներկայացնել դրա կիրառման սպառնալիք,

չգործադրել հոգեբանական կամ այլ տեսակի բռնություն կամ չներկայացնել դրա կիրառման սպառնալիք, ինչպես նաև՝ զերծ մնալ այլ անձանց նկատմամբ ոտնձգության ցանկացած դրսևորումից:

Ուսումնասիրության շրջանակներում պարզվել է, որ դեպքի առթիվ Քննչական կոմիտեում ՀՀ քրեական օրենսգրքի 460-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի հատկանիշներով (ինքնաիրավչություն) նախաձեռնվել է վարույթ և կատարվում է նախաքննություն: Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրել է, որ Արսեն Աղաբաբյանի ենթադրյալ վարքագիծը, այն է՝ համայնքային ծառայողի նկատմամբ բռնության կիրառումը, պարունակում է վարքագծի կանոնների առերևույթ խախտում: Դեպքի առթիվ հարուցվել է վարույթ, որը կասեցվել է՝ պայմանավորված նույն դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի առկայությամբ:

2. «Արտակարգ դեպք՝ Արագածոտնի մարզում. քաղաքացին դիմել է ոստիկանություն և հայտնել, որ Թալինի քաղաքապետի տեղակալն իրեն ծեծի է ենթարկել և վնասել իր «Opel»-ը», https://www.aysor.am/am/news/2024/07/15/%D4%B9%D5%A1%D5%AC%D5%AB%D5%B6/2304317, «Aysor.am» լրատվական կայք, հուլիսի 15, 2024 թ.:

Հրապարակման համաձայն՝ 2024 թվականի հուլիսի 12-ին Արագածոտնի մարզի բնակիչը դիմել է ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Թալինի բաժին և հայտնել, որ իր, Թալինի համայնքի ղեկավարի տեղակալ Գուրգեն Թադևոսյանի և մեկ այլ անձի միջև տեղի է ունեցել վիճաբանություն, որի ժամանակ վերջիններս իրեն ծեծի են ենթարկել և կոտրել իր ավտոմեքենայի ապակին:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Կանոնագրքի դրույթների մասնավորապես, Կանոնագրքի 36-րդ կետի համատեքստում, համաձայն որի՝ պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ի պաշտոնե հանդես գալիս, ցանկացած իրավիճակում, ցուցաբերել բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ դեպքի առթիվ Քննչական կոմիտեում ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասով (ֆիզիկական ներգործությունը) նախաձեռնվել է քրեական վարույթ և կատարվում է նախաքննություն: Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրել է, որ Գուրգեն Թադևոսյանի ենթադրյալ վարքագիծը, այն է՝ քաղաքացու նկատմամբ բռնության կիրառումը և նրա գույքի վնասումը, պարունակում է վարքագծի կանոնների առերևույթ խախտում: Դեպքի առթիվ հարուցվել է վարույթ, որը կասեցվել է՝ պայմանավորված նույն դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի առկայությամբ:

3. «Փոխքաղաքապետը մի ճլոտի է տվել քաղաքացուն իր վարքի համար. Թալինի քաղաքապետ», https://168.am/2024/07/15/2073048.html, «168.am» լրատվական կայք, հուլիսի 15, 2024 թ.:

Հրապարակման համաձայն՝ «24News» լրատվամիջոցի հետ զրույցում Թալին համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանը նշել է, որ տեղյակ է քաղաքացու նկատմամբ իր տեղակալի կողմից ենթադրյալ բռնություն կիրառելու դեպքի մասին և որ ըստ իրեն հասած տեղեկությունների՝ համայնքի ղեկավարի տեղակալն «ընդամենը մեկ ճլոտի է տվել քաղաքացուն իր դրսևորած վարքի համար»:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Կանոնագրքի դրույթների համատեքստում: Ուսումնասիրության արդյունքներով արձանագրվել է, որ առկա չէ Տավրոս Սափեյանի կողմից նշված արտահայտությունը կատարված լինելը փաստող որևէ ապացույց, այդ թվում՝ առկա չէ լրատվամիջոցի ներկայացուցչի և Տավրոս Սափեյանի՝ հիշյալ զրույցի որևէ տեսագրություն կամ ձայնագրություն:

Հանձնաժողովը, համապատասխան փաստերի բացակայության հիմքով սույն դեպքի առթիվ որոշել է վարույթ չհարուցել:

4. «ՏԵՍԱՆՅՈՒԹ. «Գլուխդ պատին ես տալու… տրորելու եմ… համբալ». ինչ տեղի ունեցավ գիշերը», https://armlur.am/1406245/, «Ժողովուրդ» լրատվական կայք, հոկտեմբերի 3, 2024 թ.:

Հրապարակման համաձայն՝ 2024 թվականի հոկտեմբերի 2-ին տեղի ունեցած հավաքի ընթացքում Ներքին գործերի նախարարի տեղակալ, ոստիկանապետ Արամ Հովհաննիսյանի և հավաքի կազմակերպիչ Տ. Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի միջև վիճաբանություն է տեղի ունեցել: Մասնավորապես, ըստ լրատվամիջոցների հրապարակած տեղեկատվության՝ Ա.Հովհաննիսյանը Տ. Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանին կոչել է «համբալ»: Տ. Բագրատ արքեպիսոկոպոս Գալստանյանը ոստիկանապետին ասել է՝ քեզ տրորելու եմ, ինչին ի պատասխան՝ Արամ Հովհաննիսյանը նշել է. «Գլուխդ պատին ես տալու»: Նույն օրը՝ ավելի ուշ, լրագրողների հարցին, թե ում էր Ա.Հովհաննիսյանը «համբալ» կոչում, նա պատասխանել է՝ համբալին:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Կանոնագրքի դրույթների համատեքստում: Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ դիտարկված դրվագների փաստական հանգամանքները համադրելի են Հանձնաժողովի՝ թիվ 10/2024-Վ/Վ վարույթի շրջանակներում քննարկված դեպքի հանգամանքների հետ: Մասնավորապես, Հանձնաժողովն արձանագրել է, որ նշված դեպքը ևս տեղի է ունեցել հավաքի ընթացքում սկսված վիճաբանության շրջանակներում, որի ընթացքում երկու կողմերն էլ հնչեցրել են վիրավորական արտահայտություններ: Ընդ որում, վիճաբանությունն սկսել է հավաքի կազմակերպչի նախաձեռնմամբ: Ինչ վերաբերում է լրագրողների հարցին

Ա.Հովհաննիսյանի արձագանքին, ապա Հանձնաժողովն արձանագրել է, որ այն հաջորդել է առաջին դրվագին, ժամանակային առումով բավականին մոտ է եղել դրան, իսկ խնդրո առարկա արտահայտությունը կատարելուց հետո Ա.Հովհաննիսյանը բարեկիրթ և հարգալիր կերպով դիմել է լրագրողներին:

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովն արձանագրել է վարքագծի կանոնների առերևույթ խախտման բացակայություն և որոշել է նշված դեպքի առթիվ չհարուցել վարույթ:

5. «Էթիկայի հանձնաժողովը տեղյակ չէ Տարոն Չախոյանի վիրավորական գրառումից», https://oragir.news/hy/material/2024/10/21/133403, «Օրագիր. News» լրատվական կայք, հոկտեմբերի 21, 2024 թ.:

Հրապարակման համաձայն՝ սույն թվականի հոկտեմբերի 21-ին Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տարոն Չախոյանը «Facebook» սոցիալական կայքի իր էջում կատարել է հետևյալ բովանդակությամբ գրառում. «Ամեն հաչացող շան վրա պետք չէ քար նետել: Մեքենայի հետևից վազող շունն էլ է հաչում, բայց չի նշանակում, թե կարող է նստել ղեկին ու քշել: Սա ի պատասխան այն հարցմանը, թե ինչու չեմ արձագանքում իմ հասցեին էժան ստերին: Մի քանի ծակ դաշնակի կաղկանձոցը ապացույց է, որ ամեն շնագայլ իր տեղում է»:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Կանոնագրքի դրույթների համատեքստում, մասնավորապես՝ կանոնագրքի 48-րդ կետի, որի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է սոցիալական մեդիայում իր աշխատավայր հանդիսացող կամ հանրային իշխանության այլ մարմնի գործունեությունը հեղինակազրկող մեկնաբանություններով հանդես չգալ: Նույն կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պետք է զերծ մնա սոցիալական մեդիայի օգտահաշիվներից այնպիսի գրառումներ, հավանումներ անելուց կամ վերաբերմունք արտահայտող այլ նշաններ կիրառելուց, որոնք կարող են վնասել, նսեմացնել կամ այլ եղանակով արատավորել հանրային ծառայության հեղինակությունը, կասկածի տակ առնել հանրային ծառայությունում իր լիազորությունների անաչառ և պատշաճ իրականացումը:

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ Տ. Չախոյանի վարքագիծը պարունակում է նշված կանոնի առերևույթ խախտում, քանի որ սոցիալական մեդիայում վիրավորական արտահայտություններ պարունակող հրապարակման կատարումը առերևույթ կերպով կարող է հանգեցնել հանրային իշխանության հեղինակազրկման կամ հեղինակության արատավորման: Ըստ այդմ, Հանձնաժողովը որոշել է նշված դեպքի առթիվ հարուցել վարույթ:

1.2 Անհամատեղելիության պահանջներ

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովն իրականացվել է անհամատեղելիության պահանջների վերաբերյալ 14 ուսումնասիրություն՝ մեդիա հրապարակումների և դիմումների հիման վրա:

Ուսումնասիրված հրապարակումներ

1. «Մի քանի անշարժ գույք, տպավորիչ դրամական միջոցներ, արժեթղթեր ու բաժնեմասեր. փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի և նրա ընտանիքի անդամների հայտարարագրերի ուշագրավ դրվագները», https://168.am/2024/08/26/2089542.html, «168.am» լրատվական կայք, օգոստոսի 26, 2024 թ.:

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը հանդիսանում է «Տնօրենների հայկական ինստիտուտ» հասարակական կազմակերպության անդամ: Միաժամանակ, Տիգրան Խաչատրյանի ընտանիքի անդամի՝ հարսի՝ Սյուզաննա Բաբաջանյանի մասնակցությամբ «ԿՈԴԵՈԳՌԱՄ» ՍՊ ընկերությունը տեղ է գտել Կառավարության որոշմամբ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում պետական աջակցության մասին» օրենքով սահմանված արտոնությունից օգտվող կազմակերպությունների ցանկում:

Սույն հրապարակումը Հանձնաժողովն ուսումնասիրել է անհամատեղելիության պահանջների և շահերի բախման կարգավորումների համատեքստում: «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Միաժամանակ, «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձ) և (կամ) իրավաբանական անձանց

հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ: Հետևապես՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով ոչ առևտրային կազմակերպությանը չվճարվող հիմունքներով անդամության արգելք փոխվարչապետի պաշտոնը զբաղեցնող անձի համար նախատեսված չէ: Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների տվյալների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ նշված հասարակական կազմակերպությունից Տիգրան Խաչատրյանը որևէ վարձատրություն կամ եկամուտ չի ստացել, հետևապես՝ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների խախտում չի արձանագրվել:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է նաև, որ «ԿՈԴԵՈԳՌԱՄ» ՍՊԸ-ն 2019 թվականի հուլիսի 10-ին վերոնշյալ արտոնությունից օգտվելու համար հավաստագիրը ստացել է «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի և Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 312-Ն որոշմամբ հաստատված ընթացակարգերին համաձայն՝ հավաստագրող հանձնաժողովի կողմից, որի կազմում ընդգրկվում են ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալը, ՀՀ վարչապետի աշխատակազմի, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մեկական ներկայացուցիչ, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի շահերը ներկայացնող միավորումների և ոչ առևտրային կազմակերպությունների երեք ներկայացուցիչ: Տիգրան Խաչատրյանը, ի պաշտոնե, հավաստագրի տրամադրման գործընթացում որևիցե ներգրավվածություն չի ունեցել: Վերոգրյալի հաշվառմամբ՝ շահերի բախման կարգավորումների խախտում չի արձանագրվել:

2. «Ինչպես է Կոտայքի մարզպետի կինը աշխատում մեկ պետական, երկու համայնքային պաշտոններում և ՓԲԸ-ում, հայտարարագրերի հետքերով.ժողովուրդ», https://news.am/arm/news/838931.html, «Armlur.am» լրատվական կայք, օգոստոսի 22, 2024 թ.:

Հրապարակման համաձայն՝ Կոտայքի մարզպետի կինը՝ Ռոզա Ասատրյանը, միաժամանակ աշխատում է մեկ պետական հիմնարկում, երկու համայնքային կազմակերպությունում և մեկ առևտրային ընկերությունում: Հրապարակման ուսումնասիրության շրջանակներում Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական աղբյուրների տվյալների ուսումնասիրությամբ պարզել է, որ Ռոզա Ասատրյանը 2019 թվականի հունվարից մինչ 2024 թվականի ապրիլն աշխատել է Վարչապետի աշխատակազմում՝ որպես գնումների ավագ մասնագետ, և նշված ժամանակահատվածում համատեղությամբ աշխատել է նաև «Ծաղկահովիտի առողջության կենտրոն» ՓԲ ընկերությունում, ինչպես նաև

քաղաքացիական պայմանագրերի հիման վրա մատուցել է վճարովի ծառայություններ «Գառնի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին, «Գառնի մանկապարտեզ» նախադպրոցական ուսումնական հաստատություն, «Երևանի Ալ. Հեքիմյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ներին և «Գառնիի Բանավանի հիմնական դպրոց», «Քաղսիի միջնակարգ դպրոց», «Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամ, «Կոտայքի մարզային գրադարան», «Գորիսի Վ. Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ներին: Միաժամանակ, Վարչապետի աշխատակազմում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի՝ 2018 թվականի հունիսի 13-ի N 333-Ա հրամանի և հավելվածի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Վարչապետի աշխատակազմի գնումների ավագ մասնագետի աշխատանքը քաղաքացիական աշխատանք է: Քաղաքացիական աշխատանքը, ըստ «Հանրային ծառայության մասին» օրենքի կարգավորումների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացումն է պայմանագրային հիմունքներով: Քաղաքացիական աշխատանք կատարող անձի և տեխնիկական սպասարկում իրականացնող անձի աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ: Վերջիններս «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով չեն հանդիսանում հանրային կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձ, իսկ նույն օրենքով սահմանվող անհամատեղելիության պահանջները վերջիներիս նկատմամբ կիրառելի չեն: Միաժամանակ, քաղաքացիական աշխատանք իրականացնող անձանց համար առկա չէ այլ աշխատանք իրականացնելու կամ այլ պաշտոններ զբաղեցնելու օրենսդրական արգելք, հետևապես՝ անհամատեղելիության պահանջի խախտման արձանագրման հիմքեր առկա չեն եղել, ուսումնասիրությունն այդպիսով ավարտվել է:

3. *Անհամատեղելիության պահանջների վերաբերյալ, ի լրումն նշված մեդիա հրապարակումների, ուսումնասիրություն է իրականացվել նաև Հանձնաժողովի՝ օրենքով սահմանված այլ լիազորությունների իրականացման շրջանակներում ձեռքբերված տվյալների հիման վրա.*

Հանձնաժողովի կողմից 2024 թվականի նոյեմբերի 1-ին «ԲԵՍՏ ՀԱՌԻՉ» ՍՊ ընկերության տնօրեն Դավիթ Գուրգենի Կարապետյանի նկատմամբ ընդունվել է «Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին» թիվ ՎԻՎ/365/2024 որոշումը: Միաժամանակ, սույն գործի շրջանակներում

էլեկտրոնային շտեմարանների տվյալների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել, որ Դավիթ Կարապետյանը, զբաղեցնելով հանրային պաշտոն, միաժամանակ 2022 թվականի հունիսի 2-ից հանդիսանում է «ԲԵՍՏ ՀԱՌԻԶ» ՍՊ ընկերության տնօրեն և 100 տոկոս բաժնետեր:

Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական աղբյուրների տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ Դավիթ Կարապետյանը 2024 թվականի մարտի 7-ին ստանձնել է Ազգային ժողովի պատգամավորի մանդատը, միաժամանակ, Դ. Կարապետյանը 2022 թվականի հունիսի 2-ից առ այսօր հանդիսանում է «ԲԵՍՏ ՀԱՌԻԶ» ՍՊ ընկերության տնօրեն և 100 տոկոս բաժնետեր: Հանձնաժողովն ուսումնասիրության ընթացքում ձեռք է բերել տեղեկություններ առ այն, որ նշված ընկերությունը 2024 թվականի փետրվարի 26-ին ներկայացրել է գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ հայտարարություն: Հիմք ընդունելով Դ. Կարապետյանի՝ Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնը ստանձնելու ամսաթիվը՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ ընկերության գործունեությունը ժամանակավոր դադարեցվել է նախքան վերջինիս կողմից պատգամավորի մանդատի ստանձնումը, ուստի պաշտոնավարման ընթացքում անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման դեպք չի արձանագրվել:

Անհամատեղելիության պահանջների մեկնաբանում

Անհամատեղելիության պահանջների մեկնաբանման միասնականության ապահովման պրակտիկայի տեսանկյունից հաշվետու ժամանակահատվածում ստացված դիմումների համատեքստում կարելի է առանձնացնել պաշտոնների համատեղման վերաբերյալ հետևյալ դեպքերը, որոնց վերաբերյալ դիմումները կրել են պարբերական բնույթ.

Զինվորական ծառայություն իրականացնող անձի կողմից որպես խնամատար ծնող դառնալ ցանկացող անձ հաշվառվելու և խնամատարություն իրականացնելու վերաբերյալ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» և «Զինվորական ծառայության մասին» օրենքների իրավակարգավորումները, ինչպես նաև «Ընտանեկան օրենսգրքի» և «Խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց ընտրության, հաշվառման, երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու, խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց ուսուցման, որակավորման և վերապատրաստման, խնամատար ընտանիքում հոգեզավակի խնամքի նկատմամբ վերահսկողության կարգերը, խնամատար ընտանիքին ամսական ժամանակահատվածով դրամական միջոցների վճարման կարգը» հաստատելու

մասին ՀՀ Կառավարության՝ 2019 թվականի հունիսի 13-ի N 751-Ն որոշման կարգավորումները առաջ է քաշել դիրքորոշում առ այն, որ խնամատար ընտանիքներում երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպումը պայմանագրային հիմունքներով իրականացվող վճարովի գործունեություն է՝ ծառայությունների մատուցում, ինչը, միաժամանակ, չի հանդիսանում «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով թույլատրելի՝ այլ վճարովի աշխատանք, ուստի հանրային ծառայողի, այդ թվում՝ զինվորական ծառայողի կողմից անձամբ խնամատարություն ստանձնելը և խնամատարության պայմանագրի կողմ հանդիսանալը գործող իրավակարգավորումների պայմաններում համատեղելի չէ։

Հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից հասարակական կազմակերպությունների հիմնադրման, դրանց անդամակցության կամ ղեկավարման թույլատրելիության վերաբերյալ դիմումների շրջանակներում Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» և «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքների իրավակարգավորումները, մեկնաբանել է, որ ոչ առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու կամ վերջինիս անդամակցելու արգելք հանրային ծառայողի, այդ թվում՝ քաղաքացիական ծառայողի համար օրենսդրությամբ նախատեսված չէ՝ բացառությամբ այն դեպքերը, երբ նշվածի դիմաց հանրային ծառայողը ստանում է վարձատրություն կամ այլ եկամուտ: Կրթական աշխատանքի համատեքստում Հանձնաժողովը դիրքորոշում է ներկայացրել «Թումո» կենտրոնում (Սիմոնյան կրթական հիմնադրամ) կրթական ոլորտի ուսուցանողի աշխատանքի՝ հանրային ծառայության հետ համատեղելիության վերաբերյալ: Նույն համատեքստում դիրքորոշում է տրվել նաև ուսուսչի օգնականի պաշտոնի՝ հանրային ծառայության պաշտոնի հետ համատեղման թույլատրելիության վերաբերյալ: Հանձնաժողովը երկու դեպքում վերլուծելով վերջիններիս աշխատանքային գործառույթները և վերաբերելի իրավակարգավորումները մեկնաբանել է նշված աշխատանքները որպես կրթական աշխատանք:

Անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում

Հանձնաժողովը, համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, հետևում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից Օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը։

Սույն գործառույթի ապահովման շրջանակներում Հանձնաժողովը 2024 թվականին նախաձեռնել է տարածքային և տեղական մակարդակում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկում:

Մշտադիտարկումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից հաստատված պլանի համաձայն, որը հրապարակվել է 2024 թվականի հունիսի 5-ին՝ http://cpcarmenia.am/hy/news/item/2024/06/05/1/:

Ուսումնասիրության սուբյեկտ են սահմանվել ՀՀ բոլոր խոշորացված համայնքների ղեկավարները, ինչպես նաև ՀՀ բոլոր մարզպետները և նրանց տեղակալները՝ ընդհանուր թվով 102 պաշտոնատար անձ:

Մշտադիտարկման նպատակն է ուսումնասիրության և տվյալների համադրման միջոցով դուրս բերել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում առկա անհամատեղելիության պահանջների խախտումները, վերլուծել դրանց հնարավոր պատճառները և, որպես վերջնանպատակ, ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ նվազեցնելու խախտումների քանակը, ինչպես նաև իրազեկման և վերապատրաստումների միջոցով հնարավորինս կառավարելի դարձնելու անհամատեղելիության պահանջների պահպանմանն առնչվող խնդիրները:

Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են նշված անձանց՝ առևտրային արժեթղթերի տիրապետման, այլ աղբյուրից վարձատրության ստացման, առևտրային կազմակերպություններում մասնակցություն կամ ներկայացվածություն ունենալու կամ այլ եղանակով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, իրենց կարգավիճակով չպայմանավորված այլ պաշտոններ զբաղեցնելու վերաբերյալ տվյալները: Զուգահեռաբար՝ ուսումնասիրվել է պաշտոնատար անձանց հետ փոխկապակցված առևտրային կազմակերպությունների՝ պետական գնումների գործընթացներին մասնակցությունը:

Արձանագրված խախտումների առնչությամբ իրականացվում են Հանձնաժողովի լիազորություններից բխող համապատասխան գործընթացներ, միաժամանակ, աշխատանքների ամփոփումից հետո դրանց վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը կհրապարակվի համապատասխան զեկույցի տեսքով՝ 2025 թվականի առաջին եռամսյակում:

Ի թիվս անհամատեղելիության պահանջների խախտումների և շահերի բախման դեպքերի՝ մշտադիտարկման շրջանակներում արձանագրվել են հայտարարագրման գործընթացին առնչվող խախտումներ պաշտոնատար

անձանցից 32-ի մոտ՝ կապված հայտարարագրման ենթակա տվյալների, այդ թվում՝ առևտրային կազմակերպություններում մասնակցության կամ ներկայացվածության վերաբերյալ տեղեկությունների չհայտարարագրման կամ պաշտոնատար անձի և ընտանիքի անդամների կողից առանձին տարիների հայտարարագրերի չներկայացման հետ, ինչի հիմքով ևս իրականացվում են համապատասխան վարութային գործընթացներ:
Հարկ է նշել, որ Հաշվետու ժամանակահատվածում եզրափակվել է Ազգային ժողովի պատգամավորի օգնականի նկատմամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցված թվով 1 վարույթ՝ խախտման առկայության մասին եզրակացության ընդունմամբ:

Նշված վարույթը հարուցվել էր լրատվամիջոցի հրապարակման հիման վրա:

1.3 Շահերի բախում

Հաշվետու ժամանակահատվածում շահերի բախման վերաբերյալ իրականացվել է թվով 13 ուսումնասիրություն՝ մեդիա հրապարակումների հիման վրա, որից 4-ի դեպքում Հանձնաժողովի կողմից արձանագրվել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման հիմքեր: Երեք դեպքով Հանձնաժողովի կողմից հաշվետու ժամանակահատվածում հարուցվել է շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողովին գրավոր հայտարարություն չներկայացնելու հիմքով համապատասխան վարույթ, ևս մեկ հրապարակման հիման վրա Հանձնաժողովը 2024 թվականի դեկտեմբերի 27-ին որոշում է կայացրել վարույթի հարուցման վերաբերյալ, որն ընթացքի մեջ է:

1. «Վեդու համայնքապետի հայրը անհայտ ծագման գումար է նվիրաբերել որդուն», https://infocom.am/hy/article/135360, «Infocom.am» լրատվական կայք, հուլիսի 31, 2024 թ.:

Հրապարակման համաձայն՝ 2023 թվականին Վեդի համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանը 53 մլն դրամի նվիրատվություն է ստացել, որից 10 միլիոնը՝ հորից, իսկ 43 միլիոնը՝ ազգականից: Նույն հրապարակման համաձայն՝ վերջինիս ազգական Արմեն Եղյայանը ոչ մասնագիտացված մեծածախ առևտրով զբաղվող և այժմ գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած «Արտինա» ՍՊ ընկերության սեփականատերն է, ինչպես նաև ՌԴ-ում գրանցված «ՕՆԻԿՍ-ՄՌ»

ճանապարհաշինարարական ընկերության գլխավոր տնօրենը:

Հանձնաժողովը հրապարակման առարկան ուսումնասիրել է շահերի բախման կարգավորումների համատեքստում: Բաց աղբյուրների ուսումնասիրմամբ՝ Վեդի համայնքի ավագանու կամ համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանի կողմից Արմեն Եղյայանի և/կամ նշված ընկերության վերաբերյալ կամ օգտին կայացված որոշումներ և հնարավոր գործարքների վերաբերյալ տեղեկություններ չեն հայտնաբերվել, միաժամանակ, տեղեկությունների ստացման նպատակով Հանձնաժողովը դիմել է Վեդիի համայնքապետարան: Համայնքապետարանի ներկայացրած տեղեկությունների արդյունքում արձանագրվել է, որ համայնքապետարանի և «Արտինա» ու «ՕՆԻԿՍ-ՄՌ» ՍՊ ընկերությունների միջև գնման պայմանագրեր չեն կնքվել, «Արտինա» ՍՊ ընկերության բաժնետեր և «ՕՆԻԿՍ-ՄՌ» ՍՊ ընկերության գործադիր տնօրեն Արմեն Եղյայանի վերաբերյալ համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու որոշումներ առկա չեն (չեն կայացվել): Վերոգրյալից ելնելով՝ շահերի բախման իրավիճակի առկայություն չի արձանագրվել: Միաժամանակ, կատարված նվիրատվությունների առնչությամբ հրապարակմամբ նշված տեղեկությունների հիման վրա Հանձնաժողովը որոշել է իրականացնել Գարիկ Սարգսյանի հայտարարագրերի համալիր վերլուծություն:

2. «Վահե Հովհաննիսյանը թաքցնում է իր հյուրատան և նախարարության միջև կատարված գործարքն ու իր ստացած եկամուտները», https://factor.am/799147.html, «Factor.am» լրատվական կայք, օգոստոսի 6, 2024 թ.:

Հրապարակումը վերաբերում է 2024 թվականի հուլիսի 27-ին Ֆինանսների նախարարության աշխատակազմի համար թիմակառուցողության խաղ-վարժանքների կազմակերպմանը Ֆինանսների նախարարի անվան հետ կապվող՝ Հրազդան քաղաքի «Վարդենի» հյուրատանը: Հրապարակման ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ նախարարության աշխատակազմի համար թիմակառուցողական միջոցառման շրջանակներում միջոցառման անցկացման վայրի ապահովման նպատակով՝ Ֆինանսների նախարարության և «Անուշ Բաղալյան Թովմասի» Ա/Ձ-ի միջև կնքվել են պայմանագրեր: Ներկայացված տեղեկությունները ստուգելու նպատակով Հանձնաժողովը գրավոր հարցումներ է կատարել Ֆինանսների նախարարությանը, ինչպես նաև «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամին, ինչի արդյունքում պարզվել է, որ «Քաունթերփարթ Ինթերնեյշնլ» կազմակերպության օժանդակությամբ՝ «Աջակցություն Օրենսդրության զարգացման կենտրոն հիմնադրամին» ծրագրի շրջանակներում Ֆինանսների նախարարության աշխատակազմի կարողությունների զարգացման համար կազմակերպված միջոցառման

Ֆինանսական աջակցությունը տրամադրվել է տարածքի վարձակալության և մասնակիցների համար սուրճի և ճաշի ապահովման համար: Միջոցառման անցկացման վայրի ընտրության համար հաշվի են առնվել Երևան քաղաքից հեռավորությունը, բաց և փակ տարածքների տրամադրման հնարավորությունը, վարժանքներ իրականացնելու հարմարավետությունը, հյուրանոցների ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև միջոցառման շահառու հանդիսացող Ֆինանսների նախարարության հետ խորհրդակցությունների արդյունքները:

Հանձնաժողովը, քննարկելով մեդիա հրապարակման առարկան ՀՀ ֆինանսների նախարարի շահերի բախման կարգավորումների համատեքստում, հաշվի առնելով ստացված պարզաբանումները, միջոցառման կազմակերպման ու անցկացման ընթացակարգը, տարածքի ընտրության համար որոշակի չափանիշների առկայության առնչությամբ հիմնադրամի ներկայացրած տեղեկությունները, շահերի բախման կարգավորումների առերևույթ խախտում չի արձանագրել:

3. «Փարաքար համայնքի ավագանու անդամն առաջարկել է համայնքային հողն աճուրդով վաճառել, ու ինքն էլ գնել է», https://hetq.am/hy/article/168960, «Hetq.am» լրատվական կայք, օգոստոսի 24, 2024 թ.:

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Փարաքար համայնքի ավագանու անդամ Գևորգ Խաչատրյանը 2023 թվականի նոյեմբերի 15-ին կայացած ավագանու նիստի ժամանակ առաջարկ է ներկայացրել՝ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդով օտարելու մասին, որն ընդունվել է ավագանու կողմից: Հողամասի ձեռքբերման համար 2024 թվականի հունվարի 29-ին կայացած աճուրդի ժամանակ 0.25 հա մակերեսով, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը մոտ 400 000 դրամով ձեռք է բերել Գևորգ Խաչատրյանը:

Հանձնաժողովը հրապարակման ուսումնասիրության շրջանակներում պարզել է, որ Փարաքար համայնքի ավագանին 2023 թվականի նոյեմբերի 15-ին կայացրել է համայնքի սեփականություն հանդիսացող՝ Բաղրամյան գյուղում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից՝ 04-030-0173-0016 կադաստրային ծածկագրով, 0.25 հա մակերեսով այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին N 77-Ա որոշումը, որի հիմք է հանդիսացել Գևորգ Խաչատրյանի առաջարկությունը: Վերջինս անձամբ մասնակցել և քվեարկել է նաև որոշմանը: Ուսումնասիրության առարկա հողատարածքի աճուրդը կայացել է 2024 թվականի հունվարի 29-ին: Աճուրդի արձանագրության ուսումնասիրությամբ պարզվել է, որ աճուրդին մասնակցել է միայն 1 քաղաքացի՝ Գևորգ Լյովայի Խաչատրյանը: Աճուրդին առաջարկված հողամասի առավելագույն գին սահմանվել է 385.000 դրամը:

Առկա փաստական հանգամանքների և վերաբերելի իրավակարգավորումների վերլուծությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ Փարաքար համայնքի նախկին ղեկավար Դավիթ Մինասյանի՝ 2024 թվականի հունվարի 30-ին կայացրած N 53-Ա որոշումը և օտարման պայմանագրի կնքումը կարող էր հանգեցրել շահերի բախման իրավիճակի առաջացման, ինչի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարը պարտավորություն է կրել գրավոր հայտարարություն ներկայացնել Հանձնաժողով: Այդուհանդերձ, Դավիթ Մինասյանի լիազորությունները 2024 թվականի մայիսի 21-ին դադարեցվել են, ինչով պայմանավորված՝ վերջինիս կողմից շահերի բախման կարգավորումների հնարավոր խախտման դեպքը հավելյալ քննության առարկա չի դարձվել: Միաժամանակ, քննարկելով հարցը նաև ավագանու անդամի շահերի բախման կարգավորումների համատեքստում՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման» մասին օրենքի դրույթները, արձանագրել է, որ ավագանու անդամի շահերի բախման հարցը քննելու իրավասությունը վերապահված է համայնքի ղեկավարին և ավագանուն, ինչի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը 2024 թվականի հոկտեմբերի 22-ին գրավոր դիմել է Փարաքար համայնքի ղեկավարին և համայնքի ավագանու խմբակցություններին՝ ավագանու անդամ Գևորգ Խաչատրյանի կողմից շահերի բախման կարգավորումների խախտման հարցը քննելու առաջարկով: 2024 թվականի նոյեմբերի 6-ին Գևորգ Խաչատրյանի լիազորությունները դադարեցվել են՝ վերջինիս հրաժարականի հիմքով:

4. *«Հանրայինի ու «Իմ քայլը» հիմնադրամի ամերիկյան մասնաճյուղերը «տնավորվել են» նախարար Սիմիդյանի քրոջ տանը», https://hetq.am/hy/article/168952, «Hetq.am» լրատվական կայք, օգոստոսի 26, 2024 թ.:*

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանի քրոջ՝ Արաքսի Սիմիդյանի՝ Լոս Անջելեսի Նորթ Հոլիվուդ թաղամասում գտնվող տանն է գրանցված վարչապետ Նիկոլ Փաշինյանի կնոջ ղեկավարած «Իմ քայլը» հիմնադրամի ամերիկյան մասնաճյուղը և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության ամերիկյան դուստր ընկերությունը՝ First Channel America-ն: Նույն հրապարակման համաձայն՝ Ա. Սիմիդյանը հանդիսանում է «Իմ քայլը» հիմնադրամի ամերիկյան մասնաճյուղի ֆինանսական ղեկավարը և First Channel America-ն դուստր ընկերության գործադիր և ֆինանսական ղեկավարը, նաև քարտուղարը:
Հանձնաժողովը հրապարակման առարկան քննության է առել շահերի բախման կարգավորումների համատեքստում: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Իմ քայլը» հիմնադրամի և «Առաջին ալիք Ամերիկա» ընկերության դուստր

ընկերությունները գրանցված են միևնույն հասցեում, ինչի առնչությամբ, սակայն որևէ օրենսդրական արգելք նախատեսված չէ: Ինչ վերաբերում է Արաքսի Սիմիդյանին «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության «Առաջին ալիք Ամերիկա» դուստր ընկերության գործադիր տնօրեն նշանակելուն, հարկ է նշել, որ նշված իրավահարաբերությունը կարգավորվում է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, համաձայն որի՝ Հանրային հեռարձակողների աշխատողներին նշանակում և ազատում են հանրային հեռարձակողների գործադիր տնօրենները: Միաժամանակ, Արաքսի Սիմիդյանի նշանակումն իրականացվել է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության գործադիր տնօրենի կողմից: Միևնույն ժամանակ, էական է համարվել այն հանգամանքը, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով ո՛չ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության գործադիր տնօրենը, ո՛չ դուստր ընկերության տնօրենը չեն հանդիսանում հանրային պաշտոն զբաղեցնող անձ, հետևապես, շահերի բախման իրավակարգավորումները վերջիններիս նկատմամբ կիրառելի չեն:

5. «Ալավերդի համայնքի՝ ՌԴ քաղաքացի ղեկավարը Ռուսաստանում սնանկ է ճանաչվում. մոտ մեկ տասնյակի գույք չի հայտարարագրել» https://hetq.am/hy/article/168383, «Hetq.am» լրատվական կայք, հուլիսի 25, 2024 թ.:

«Ալավերդու համայնքապետարանը 3.8 մլն դրամի պայմանագրեր է կնքել ավագանու անդամի մոր ԱՁ-ի հետ» https://hetq.am/hy/article/169068, «Hetq.am» լրատվական կայքի , օգոստոսի 30, 2024 թ.:

Համաձայն 1-ին հրապարակման՝ Ալավերդու համայնքապետարանը՝ ի դեմս համայնքի ղեկավար Դավիթ Ղումաշյանի, համայնքային կարիքների համար 2024 թվականի ընթացքում ապրանքների ձեռքբերման թվով **5** պայմանագիր է կնքել նույն համայնքի ավագանու անդամ Արեն Դալլաքյանի մոր՝ «Մանուշակ Դալլաքյան» ԱՁ-ի հետ: Պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 4 մլն 300 հազար ՀՀ դրամ:
«Մանուշակ Դալլաքյան» ԱՁ-ին 2024 թվականի հուլիսի 7-ին Լոռու մարզպետարանը հատկացրել է 4.047.000 ՀՀ դրամ՝ 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղի ունեցած հեղեղումների պատճառով առաջացած սոցիալական խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու ընթացքում առաջացած ծախսերը փոխհատուցելու համար: Գումարը հատկացվել է Ալավերդու համայնքապետարանի տրամադրված հաշիվ-ապրանքագրերի հիման վրա:
2-րդ հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Դավիթ Ղումաշյանը զբաղեցնելով Լոռու մարզի Շնող համայնքի, այնուհետև՝ Ալավերդի համայնքի ղեկավարի պաշտոնը, միաժամանակ զբաղվել է ձեռնարկատիրական

գործունեությամբ, հանդիսացել է Ռուսաստանի դաշնությունում գրանցված առևտրային ընկերությունների սեփականատեր և զբաղեցրել պաշտոններ առևտրային կազմակերպություններում:

Հանձնաժողովն ուսումնասիրել է Ալավերդու համայնքապետարանի կողմից պատվիրված՝ հրապարակման առարկա գնման գործընթացները: Իրականացված գնումների գործընթացում պահպանված են եղել համապատասխան ընթացակարգային պահանջները: Այդուհանդերձ, գնման գործընթացները քննարկվել են համայնքի ղեկավարի շահերի բախման համատեքստում: Անդրադառնալով համայնքի ղեկավարի և ավագանու անդամ Արեն Դալլաքյանի միջև հարաբերությունների բնույթին՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 2022 թվականի ՏԻՄ ընտրություններում վերջիններս ընդգրկված են եղել միևնույն ընտրացուցակում և հանդիսացել նույն կուսակցության առաջադրած թեկնածուներ, արձանագրել է, որ նրանց միջև առկա է քաղաքական փոխկապակցվածություն՝ գործնական կապին զուգահեռ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ համայնքի ղեկավարը, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով պարտավորություն է կրել շահերի բախման իրավիճակի վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնելու Հանձնաժողով, ինչի չկատարումը հանգեցրել է «Հանրային ծառայության մասին» օրենքի և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի համապատասխան կարգավորումների խախտման: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշել է Դավիթ Ղումաշյանի նկատմամբ ՎԻՎ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով հարուցել վարչական վարույթ:

Ինչ վերաբերում է «Մանուշ Դալլաքյան» ԱՁ-ին դրամական միջոցներ հատկացնելուն, Հանձնաժողովն արձանագրել է, որ որոշման կայացման հիմքում դրված է եղել Կառավարության 2024 թվականի մայիսի 27-ի N 771-Ն որոշումը, որն ունի համընդհանուր կիրառելիություն և վերաբերել է անձանց (տվյալ դեպքում՝ տնտեսվարողների) լայն շրջանակի: «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով՝ պաշտոն զբաղեցնող անձի կամ իր հետ փոխկապակցված անձի մասնավոր շահերով առաջնորդվել չի համարվում այն դեպքը, երբ տվյալ գործողությունը (անգործությունը) կամ որոշումն ունի համընդհանուր կիրառելիություն կամ անդրադառնում է անձանց լայն շրջանակի վրա (…):

Հանձնաժողովը 2-րդ հրապարակման առարկան քննության է առել համայնքի ղեկավարի անհամատեղելիության պահանջների համատեքստում: Հրապարակման ուսումնասիրության շրջանակներում Հանձնաժողովն իրեն հասանելի, այդ թվում՝ ռուսական, տեղեկատվական աղբյուրների, տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ Դավիթ Ղումաշյանն իր նախորդ

պաշտոնավարման ընթացքում՝ 2016-2017, ապա՝ 2018-2022 թվականներին հանդիսանալով Շնող համայնքի ղեկավար, փաստացի զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ՝ զբաղեցնելով գործադիր մարմնի ղեկավարի պաշտոն Ռուսաստանի Դաշնությունումում գրանցված «Յունիտի» ՍՊԸ-ում, որը լուծարվել է 2023 թվականի հունվարի 9-ին (ընկերության իրավանախորդներն են՝ «Գրուզ-Լոգիստ» և «Եվրոպա Կոմտրեյդ» ՍՊ ընկերությունները, որոնք հիմանդրվել են 2015 թվականին Դավիթ Ղումաշյանի կողմից և վերակազմակերպվել (միաձուլվել) 18.08.2017 թվականին), «Ստիմուլ» ՍՊԸ-ում՝ 02.11.2015-13.01.2019թթ. և «Դեկոր Բուրժու» ՍՊԸ-ում՝ 21.10.2015-15.08.2018թթ.: Հանձնաժողովն արձանագրել է, որ Դավիթ Ղումաշյանը հանդիսացել է գլխավոր տնօրեն վերոգրյալ առևտրային կազմակերպություններում՝ այդպիսով առերևույթ խախտելով հանրային պաշտոն զբաղեցնող անձի անհամատեղելիության պահանջները: Միաժամանակ, Շնող համայնքի ղեկավարի պաշտոնում պաշտոնավարման դադարեցման հանգամանքով պայմանավորված՝ անհամատեղելիության պահանջի խախտման դեպքը հետագա քննության հիմք չի դարձվել: Միաժամանակ, հրապարակումների հիման վրա Հանձնաժողովը որոշել է իրականացնել Դավիթ Ղումաշյանի հայտարարագրերի համալիր վերլուծություն:

6. «Արտաշատի համայնքապետը հողամասեր է գնել ու ինքն իրեն թույլտվություն տվել եղած շինությունները քանդելու վերաբերյալ», https://factor.am/803988.html, «Factor.am» լրատվական կայք, օգոստոսի 27, 2024 թ.:

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Արտաշատ համայնքի ղեկավար Կառլեն Մկրտչյանը 2023 թվականին հիփոթեքային վարկով 2 հողամաս է գնել նույն համայնքում: 2024 թվականին համայնքապետն ինքն իրեն նշված հողամասերի վրա առկա շինությունները քանդելու թույլտվություն է տվել:

Ուսումնասիրելով առկա փաստական հանգամանքները, ինչպես նաև օրենսդրական կարգավորումները՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ քանդման թույլտվության տրամադրումը հաստատում է սեփականատիրոջ կամ նրա կողմից սահմանված կարգով լիազորված անձի՝ շենքերն ու շինությունները քանդելու իրավունքը: Սույն գործի շրջանակներում Կառլեն Մկրտչյանը՝ համայնքի ղեկավարը, միաժամանակ հանդիսացել է և՛ քանդման թույլտվություն տվող իրավասու մարմինը, և՛ կառուցապատվող հողատարածքի սեփականատերերից մեկը: Հանձնաժողովը պարզել է, որ 2023 թվականի դեկտեմբերի 12-ին Արտաշատ քաղաքում Սերինե Գալուբյանի հետ համատեղ համայնքի ղեկավարը ձեռք է բերել 2 տնամերձ հողատարածք՝ ընդհանուր՝ 1.257 քմ մակերեսով: Համայնքի ղեկավարի՝ 2024 թվականի ապրիլի 23-ի N 1957-Ա որոշմամբ՝ Սերինե Գալուբյանին և Կառլեն Մկրտչյանին տրամադրվել է նշված հողամասում թվով 8 շինությունների

ամբողջությամբ քանդման թույլտվություն: Թեև նշված թույլտվությունների տրամադրման գործընթացը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով և Կառավարության համապատասխան որոշմամբ և ընթացակարգային առումով առերևույթ խախտումներ առկա չեն եղել, համայնքի ղեկավարը, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, թույլտվությունների տրամադրման վերաբերյալ որոշման կայացման համատեքստում պարտավորություն է կրել շահերի բախման իրավիճակի վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնել Հանձնաժողով: Վերոգրյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է Կառլեն Մկրտչյանի նկատմամբ հարուցել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

Հարկ է նշել, որ 2024 թվականի առաջին կիսամյակում իրականացված ուսումնասիրությունների շրջանակներում «Hetq.am» լրատվականի՝ «Արտաշատի ավագանու անդամի ընկերությունը՝ նույն համայնքի սուբվենցիոն ծրագրերի հաղթող» վերտառությամբ հրապարակման հիման վրա Կառլեն Մկրտչյանի նկատմամբ մեկ այլ վարույթ է հարուցվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով: Հանձնաժողովը սույն գործով արձանագրել է, որ Արտաշատ համայնքի ղեկավար Կառլեն Մկրտչյանի հետ քաղաքական հարաբերություններով կապված անձ (Արտաշատ համայնքի ավագանու անդամ)՝ «Գարանտ Կապիտալ Ստրոյ» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր և տնօրեն հանդիսացող Նարեկ Բաղդասարյանի հետ իրականացված գնման գործընթացի արդյունքում 2023 թվականի նոյեմբերի 7-ին թիվ ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-23/78 կապալային աշխատանքների կատարման պայմանագրի կնքմամբ Կառլեն Մկրտչյանն իր լիազորությունների շրջանակում կատարել է գործողություն (անգործություն), որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ այդ մասին «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով, այդ կերպ թույլ տալով «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի առերևույթ խախտում: 2024 թվականի հուլիսի 30-ին Հանձնաժողովը որոշել է վերջինիս նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ **300 000** (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

7. «Տաշիրի համայնքապետի տեղակալի կնոջ ԱՁ-ի հետ համայնքապետարանը կնքել է 5,9 մլն դրամի պայմանագրեր», https://www.hetq.am/hy/article/169148, «Hetq.am» լրատվական կայք, սեպտեմբերի 4, 2024 թ.:

Հրապարակման համաձայն՝ Տաշիրի համայնքապետարանը՝ ի դեմս համայնքի ղեկավար Էդգար Արշակյանի, համայնքային կարիքների համար ծառայությունների ձեռքբերման պայմանագրեր է կնքել նույն համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Նարեկ Բաղդասարյանի կնոջ՝ Անետա Շահբազյանի ԱՁ-ի հետ:

Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական աղբյուրների, գնումների տեղեկագրի, այլ բաց աղբյուրների տվյալների ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ Էդգար Արշակյանը, որպես համայնքի ղեկավար և պատվիրատուի ղեկավար, 2023 և 2024 թվականներին համայնքի փողոցների գծանշման աշխատանքների ձեռքբերման 2 պայմանագիր է կնքել «Անետա Շահբազյան» ԱՁ-ի հետ՝ համապատասխանաբար՝ 2 մլն 945 և 2 մլն 960 հազար ՀՀ դրամ արժեքով: Անդրադառնալով համայնքի ղեկավարի և վերջինիս տեղակալի միջև հարաբերությունների բնույթին, Հանձնաժողովը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 2022 թվականի ՏԻՄ ընտրություններում Էդգար Արշակյանը և Նորայր Բաղդասարյանը ընդգրկված են եղել միևնույն ընտրացուցակում, հանդիսացել են նույն քաղաքական դաշինքի կողմից առաջադրված թեկնածուներ, արձանագրել է, որ վերջիններիս միջև առկա է քաղաքական փոխկապակցվածություն՝ գործնական կապին զուգահեռ: Գնումների քննարկվող գործընթացների վերաբերյալ առկա տվյալների ուսումնասիրմամբ ընթացակարգային պահանջների խախտում Հանձնաժողովը չի արձանագրել, այդուհանդերձ, փոխկապակցված անձի հետ պայմանագրերի կնքման համատեքստում շահերի բախմանը վերաբերող հանգամանքների վերաբերյալ Հանձնաժողովին գրավոր հայտարարություն չներկայացնելու հիմքով Հանձնաժողովը որոշել է Էդգար Արշակյանի նկատմամբ հարուցել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

8. «Արամ Հովհաննիսյանի որդին զավթել է համայնքային հողը, տիրացել Ոստիկանության կայանատեղիին», https://hetq.am/hy/article/169180, «Hetq.am» լրատվական կայք, սեպտեմբեր 5, 2024 թ.:

Հրապարակման համաձայն՝ ոստիկանապետ Արամ Հովհաննիսյանի որդուն հասարակական շինություն կառուցելու նպատակով աճուրդով վաճառվել է Ոստիկանության կողմից օգտագործվող կայանատեղիի տարածքի 81.66 քմ հողամաս: Հրաչյա Հովհաննիսյանը հողամասը գնել է 2 միլիոն 143 հազար 575 դրամով: Համայնքին պատկանող հողամասը ոստիկանությունն օգտագործել է

փաստացի՝ առանց հողահատկացման կամ վարձակալության պայմանագրի։ Հրաչյա Հովհաննիսյանը նախկին կայանատեղիի մյուս մասի՝ 70 քմ և 4 քմ հողամասերի վրա ապօրինի շինարարություն է իրականացրել։ 2021-2022 թվականներին Երևան համայնքի ղեկավարների որոշումներով օրինականացվել են համայնքային հողի վրա ինքնակամ կառուցված շինությունները և ուղիղ վաճառքով՝ 2 միլիոն 8 հազար 692 դրամ արժեքով օտարվել Հրաչյա Հովհաննիսյանին։

Հանձնաժողովը հրապարկման առարկան ուսումնասիրել է շահերի բախման կարգավորումների համատեքստում։

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ 2015 թվականի դեկտեմբերի 21-ին կայացած հողատարածքի օտարման աճուրդը, այնուհետև, 2021 և 2022 թվականներին Երևանի նախկին քաղաքապետերի ընդունած համապատասխան որոշումները՝ ինքնակամ շինությունները օրինականացնելու և օտարելու մասին, համապատասխանել են այդ ժամանակ գործող իրավակարգավորումներով սահմանված ընթացակարգերին։ Միաժամանակ, թեև Շենգավիթ վարչական շրջանի Գարեգին Նժդեհ փողոցի հ. 25/8 հողամասի՝ Ոստիկանության կողմից օգտագործելու կապակցությամբ որևէ փաստաթուղթ կամ հավաստող տեղեկություն Ոստիկանության, Երևանի քաղաքապետարանի կայքէջով, ինչպես նաև տարբեր բաց աղբյուրներով չի գտնվել, այնուամենայնիվ, համապատասխան իրավակարգավորումների իմաստով՝ տարածքների փաստացի օգտագործումը՝ առանց որևէ փաստաթղթավորման, չէր կարող խոչընդոտել կամ արգելք հանդիսանալ հողամասերի՝ համայնքի կողմից տնօրինման կամ օտարման համար։

Շահերի բախման օրենսդրական կարգավորումների համատեքստում քննարկելով Արամ Հովհաննիսյանի հնարավոր մասնակցությունը կայացած աճուրդին և ապա՝ ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացներին, պետք է հաշվի առնել, որ 2015 թվականին աճուրդով օտարված տարածքը եղել է համայնքային։ Որոշման ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ այն տրվել է ՀՀ Հողային օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ համայնքի ղեկավարի կողմից՝ համապատասխան ընթացակարգով անցկացված աճուրդի արդյունքների հիման վրա, ուստի Արամ Հովհանիսյանն ի պաշտոնե որևէ մասնակցություն չի ունեցել այդ գործընթացին։

9. «Շահերի բախում Վանաձորի համայնքապետարանում. Փելեշյանի խորհրդականի ընկերությունը մասնակցում ու հաղթում է գնումների գործընթացին»,https://fip.am/39409, «Fip.am» լրատվական կայք, հոկտեմբերի 24, 2024 թ.:

Հրապարակման համաձայն՝ Վանաձորի համայնքապետարանի կողմից հայտարարված գնման մրցույթի միակ մասնակիցը և հաղթողը եղել է «Փյունիկ» ՍՊԸ-ն, որի 100 % բաժնեմասը պատկանում է Վանաձոր համայնքի ղեկավարի խորհրդական Էդիկ Հունանյանին։

Ուսումնասիրելով առկա փաստական հանգամանքները՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ 2023 թվականի օգոստոսի 23-ին և նույն թվականի նոյեմբերի 8-ին Վանաձոր համայնքի Բանյո-Նալբանդյան փողոցի լուսավորության վերականգնման աշխատանքների իրականացման համար «գնանշման հարցում» ընթացակարգով անցկացված մրցույթների միակ մասնակիցը է հանդիսացել «Փյունիկ» ՍՊԸ-ն, որի 100 % բաժնեմասը պատկանում է համայնքի ղեկավարի խորհրդական Էդիկ Հունանյանին։ Պայմանագրերի արժեքները կազմել են համապատասխանաբար՝ 9 900 000 և 980 000 դրամ։ Համայնքապետարանը նշված պայմանագրերը կնքել է՝ ի դեմս համայնքի ղեկավար Արկադի Փելեշյանի, իսկ կապալառուի՝ «Փյունիկ» ՍՊԸ-ի կողմից ստորագրել է պայմանագրի կնքման ժամանակ տնօրեն հանդիսացող Գևորգ Հունանյանը։ Թեև համայնքի կողմից իրականացված գնումների գործընթացում պահպանված են եղել համապատասխան ընթացակարգերը, այնուամենայնիվ, Հանձնաժողովը գործարքները քննարկել է համայնքի ղեկավար Արկադի Փելեշյանի շահերի բախման համատեքստում։

Հաշվի առնելով, որ Էդիկ Հունանյանը զբաղեցնում է համայնքի ղեկավարի խորհրդականի համայնքային հայեցողական նշանակովի պաշտոնը, որն զբաղեցնող անձն իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում կատարում է իր անմիջական ղեկավարի հանձնարարականները և պատասխանատվություն է կրում այդ հանձնարարականների կատարման համար, Հանձնաժողովն արձանագրել է, որ նշվածով պայմանավորված՝ վերջիններիս միջև առկա են գործնական հարաբերություններ, ուստի «Փյունիկ» ՍՊԸ-ի հետ պայմանագրերի կնքման շրջանակներում Արկադի Փելեշյանը, «Հանրային ծառայության մասին» օրենքի համատեքստում, պարտավորություն է կրել նախքան պայմանագրի կնքումը Հանձնաժողով ներկայացնել շահերի բախման վերաբերյալ հայտարարություն, ինչի չկատարումը հանգեցրել է «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.31. հոդվածի պահանջների խախտման։ Այդուհանդերձ, Արկադի Փելեշյանի և «Փյունիկ» ՍՊԸ-ի միջև պայմանագրերը կնքվել են 2023 թվականի օգոստոսի 23-ին և նոյեմբերի 8-ին, ուստի, պայմանավորված վարչական տույժի կիրառման ժամկետի անցած լինելու հանգամանքով, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ չի հարուցվել։

Միաժամանակ, Հանձնաժողովն ուսումնասիրության շրջանակներում անդրադարձել է համայնքի ղեկավարի խորհրդականի անհամատեղելիության պահանջներին: Ըստ այդմ՝ զբաղեցնելով համայնքային հայեցողական պաշտոն՝ Էդիկ Հունանյանը, պաշտոնը ստանձնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իր բաժնեմասը «Փյունիկ» ՍՊԸ-ում օրենքով սահմանված կարգով պարտավորություն է ունեցել հանձնելու հավատարմագրային կառավարման, որի վերաբերյալ տեղեկություններ չեն հայտնաբերվել: Վերոգրյալից բացի՝ վերջինս 2024 թվականի հունիսի 25-ից ստանձնել է նույն ընկերության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը՝ այդպիսով թույլ տալով «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտում: Հաշվի առնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված լիազորությունները՝ Հանձնաժողովը Էդիկ Հունանյանի կողմից անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտման հարցը քննելու առաջարկով դիմել է իրավասու մարմնին՝ համայնքի ղեկավարին:

10. «Ճամբարակի համայնքապետին առնչվող ընկերությունը հաղթում է համայնքապետարանի գնումներում», https://infocom.am/hy/article/141532, «Infocom.am» լրատվական կայք, հոկտեմբերի 30, 2024 թ.:

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Ճամբարակ համայնքի ղեկավար Վազգեն Ադամյանի պաշտոնական կենսագրության մեջ նշվել է, որ վերջինս 2014 թվականին հիմնադրել է «Շինտեխնիկա» ՍՊԸ-ն: 2018-2024 թվականների ընթացքում «Շինտեխնիկա» ՍՊԸ-ն մասնակցել է Ճամբարակի համայնքապետարանի կողմից իրականացված 41 գնման ընթացակարգի, որից 19-ում ճանաչվել է հաղթող: Համայնքապետարանը «Շինտեխնիկա» ՍՊԸ-ի հետ վերջին անգամ պայմանագիր է կնքել 2024 թվականի սեպտեմբերի 20-ին, որի արժեքը կազմել է 61.2 մլն դրամ:

Հանձնաժողովը հրապարակման առարկան ուսումնասիրել է համայնքի ղեկավարի շահերի բախման շրջանակներում: Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ Ճամբարակ համայնքի ղեկավար Վազգեն Ադամյանի և «Շինտեխնիկա» ՍՊ ընկերության մասնակիցների և/կամ ընկերության գործադիր տնօրենի միջև փոխկապակցվածություն առկա չէ, իսկ հնարավոր կապի վերաբերյալ տեղեկություններ չեն ստացվել Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական շտեմարանների տվյալների ստուգմամբ: Ուսումնասիրության շրջանակներում հրապարակմամբ նշված տեղեկությունների վերաբերյալ այլ փաստական հիմքերի ձեռքբերման նպատակով Հանձնաժողովը կապ է հաստատել նաև նշված լրատվական ընկերության հետ: Միաժամանակ, վերջիններիս միջև

կապի բնույթը հավաստող տեղեկությունների բացակայությամբ պայմանավորված՝ ուսումնասիրությունը շարունակելու հիմքեր առկա չեն եղել։

11. «Վեդու համայնքապետ Գարիկ Սարգսյանը 1 մլն դոլարի պայմանագրեր է կնքել մորեղբոր հետ», https://hetq.am/hy/article/170772, «Hetq.am» լրատվական կայք, նոյեմբերի 11, 2024 թ.։

Հրապարակման համաձայն՝ 2018-2024 թվականներին Վեդու համայնքապետարանը «Նոյավան» ՍՊԸ-ի հետ կնքել է գնման 15 պայմանագիր։ «Նոյավան» ՍՊԸ-ի բաժնետեր Գրիգոր Մանուկյանը հանդիսանում է Վեդի համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանի մորեղբայրը։

Հրապարակման առարկան Հանձնաժողովն ուսումնասիրության է առել համայնքի ղեկավարի շահերի բախման համատեքստում։ Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Գարիկ Սարգսյանի՝ համայնքի ղեկավարի պաշտոնում ընտրվելուց հետո «Նոյավան» ՍՊԸ-ի հետ համայնքապետարանը 2022 և 2023 թվականներին կնքել է գնման երկու պայմանագիր։ 2022 թվականին գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է 109 000 000 դրամ։ Մրցույթն անցկացվել է «Հրատապ բաց մրցույթ» ընթացակարգով՝ 2 չափաբաժինների համար։ Մրցույթին գնային առաջարկ են ներկայացրել 13 կազմակերպություններ։ Պայմանագրի կնքման հիմք է հանդիսացել բանակցային փուլի արդյունքում ներկայացված նվազ գնառաջարկը։ 2023 թվականին խմելու ջրագծի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է 279 999 972 դրամ։ Մրցույթն անցկացվել է «Բաց մրցույթ» ընթացակարգով։ Հրավերի պահանջների նկատմամբ բավարար են գնահատվել «Նոյավան» ՍՊԸ-ի և «Արտաշատ ԷՑՇ» ՍՊԸ-ի հայտերը։ Մրցույթի հաղթող է ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ընկերությունը՝ «Նոյավան» ՍՊԸ-ն, որի հետ կնքվել է գնման պայմանագիրը։ Համայնքապետարանը նշված պայմանագրերը կնքել է ի դեմս համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանի։ Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական շտեմարանների ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ Գրիգոր Մանուկյանը հանդիսանում է Վեդի համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանի մորեղբայրը։ Ըստ այդմ, առկա փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ Վեդի համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանը 2022 և 2023 թվականներին ստորագրել է գնման թվով 2 պայմանագիր իր հետ օրենքի իմաստով փոխկապակցված անձի՝ մորեղբոր բաժնեմասնակցությամբ և վերջինիս կողմից ղեկավարվող ընկերության հետ։ Միաժամանակ, 2022 թվականին «Հանրային ծառայության մասին» օրենքով իմպերատիվ պահանջ չի եղել Հանձնաժողովին շահերի բախման վերաբերյալ

հայտարարություն ներկայացնելու: Համապատասխան իրավակարգավորումներն ուժի մեջ են մտել 2023 թվականի հունվարի 2-ից, հետևապես, 2022 թվականին կնքված պայմանագրի համատեքստում Հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել քննելու նշված դեպքը շահերի բախման կարգավորումների խախտման համատեքստում: Ինչ վերաբերում է 2023 թվականի օգոստոսի 30-ին կնքված պայմանագրին՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանը, որպես համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, պայմանագրի կնքման պահին գործող իրավակարգավորումների պայմաններում պարտավոր էր Հանձնաժողով ներկայացնել շահերի բախման վերաբերյալ հայտարարություն նախքան պայմանագրի կնքումը, ինչի չկատարումը հանգեցրել է «Հանրային ծառայության մասին» օրենքի և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի համապատասխան պահանջների խախտման: Այդուհանդերձ, հաշվի առնելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքով սահմանված վարչական տույժի կիրառման ժամկետները՝ Հանձնաժողովը սույն դեպքում վարույթ չի հարուցել:

12. «50 մլն դրամի շինաշխատանքը՝ պաշտոնյայի եղբոր, վերահսկողությունը՝ որդու ընկերությանը. Ստեփանավան համայնքի գնումները», https://infocom.am/hy/article/143165, «Infocom.am» լրատվական կայք, նոյեմբերի 18, 2024 թ.:

Հրապարակումը համալիր անդրադարձ է կատարում Ստեփանավանի համայնքապետարանի կողմից պատվիրված մի շարք գնման գործընթացների՝ իրականացված համայնքի ղեկավարի հետ փոխկապակցված մի շարք անձանց մասնակցությամբ: Այսպես՝

Ըստ հրապարակման՝ Ստեփանավանի համայնքապետարանը 2022 թվականի հուլիսի 21-ին գնման պայմանագիր է կնքել համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի նախկին պետ, այժմ՝ համայնքի ղեկավարի օգնական Լևոն Քալանթարյանի եղբոր մասնակցությամբ «Տրիտոն» ՍՊԸ-ի հետ՝ բազմաբնակարան շենքում էներգաարդյունավետ արդիականացման աշխատանքների իրականացման համար: Համայնքապետարանը նշված աշխատանքների տեխնիկական հսկողությունը մեկ այլ պայմանագրով վստահել է «Ստեփ պլաստ» ՍՊԸ-ին, որի 100% բաժնետերը և տնօրենը Լևոն Քալանթարյանի որդին է՝ Աշոտ Քալանթարյանը:

Հրապարակումը նաև նշում է, որ Ստեփանավանի համայնքապետարանը համայնքի ղեկավարի ներկայիս տեղակալ՝ նախկին օգնական Արսեն Հարությունյանի կնոջ՝ Աննա Բունիաթյանի հետ 2022 և 2023 թվականներին կնքել է 9 պայմանագիր:

Վերոգրյալից բացի՝ համայնքապետարանի և Ստեփանավան համայնքի ավագանու անդամ Արծրուն Հակոբյանի Ա/Ձ-ի միջև 2022 թվականի դեկտեմբերին կնքված պայմանագրով ապրանք է մատակարարել համայնքային չորս մանկապարտեզներին:

Հրապարակումն անդրադարձել է նաև համայնքապետարանի և ավագանու մեկ այլ անդամի՝ Արթուր Պապյանի կնոջ՝ Կարինե Բախշինյանի Ա/Ձ-ի հետ կնքված՝ քարտրիջների և պատճենահանող սարքերի լիցքավորման ծառայությունների ձեռքբերման պայմանագրերին:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է համալիր ուսումնասիրություն՝ քննարկված բոլոր դրվագներով: Հարկ է նշել, որ Հանձնաժողովը հրապարակման առարկան ուսումնասիրել է իրականացված գնումների ընթացակարգերի և համայնքի ղեկավարի շահերի բախման կարգավորումների համատեքստում: Ներկայացված դեպքերում գնման ընթացակարգերի առերևույթ խախտումներ չեն արձանագրվել, այդուհանդերձ, նշված դեպքերը քննարկվել են համայնքի ղեկավարի շահերի բախման համատեքստում:

Արդյունքում՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Արմեն Գրիգորյանի, 2022-2024 թվականների ընթացքում գնման 3 պայմանագիր է կնքել «Ստեփպլաստ» ՍՊ ընկերության հետ: «Ստեփպլաստ» ՍՊԸ-ն հանդիսանում է համայնքապետարանի ստորաբաժանումներից մեկի ղեկավարի, ներկայիս՝ համայնքի ղեկավարի օգնական Լևոն Քալանթարյանի որդու՝ Աշոտ Քալանթարյանի 100 տոկոս բաժնեմասնակցությամբ ընկերությունը:

Հանձնաժողովն արձանագրել է, որ 2023 և 2024 թվականներին ԼՄՍՀ-ՄԱԱՇՁԲ-23/02 և ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԾՁԲ-24/25 ծածկագրերով պայմանագրերի կնքման շրջանակներում համայնքի ղեկավարը պարտավորություն է կրել շահերի բախման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնելու Հանձնաժողով, ինչի չկատարումը հանգեցրել է «Հանրային ծառայության մասին» օրենքի և «Վարչական իրավախախումների վերաբերյալ» օրենսգրքի կարգավորումների խախտման: Միաժամանակ, հիմք ընդունելով վարչական տույժ կիրառելու ժամկետները՝ Հանձնաժողովը որոշել է Արմեն Գրիգորյանի նկատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցել 2024 թվականի հուլիսի 12-ին կնքված՝ ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԾՁԲ-24/25 ծածկագրով պայմանագրի շրջանակներում հայտարարություն չներկայացնելու հիմքով:

Հրապարակման մյուս դրվագով Հանձնաժողովն արձանագրել է, որ 2023 թվականին Ստեփանավանի համայնքի ղեկավար Արմեն Գրիգորյանը համայնքապետարանի կարիքների համար գրենական պիտույքների և

գրասենյակային նյութերի ձեռքբերման՝ ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԱՊՁԲ-23/02, ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԱՊՁԲ-23/03, ՀՀ- ԼՄՍՀ-ԿՍ-ԷԱՃԱՊՁԲ-23/5-3 ծածկագրերով պայմանագրեր է կնքել իր հետ գործնական կապով փոխկապակցված անձի՝ իր օգնականի՝ Արսեն Հարությունյանի հետ օրենքի իմաստով փոխկապակցված անձի՝ վերջինիս կնոջ ԱՁ-ի հետ: Վերոգրյալի շրջանակներում Արմեն Գրիգորյանը Հանձնաժողով չի ներկայացրել շահերի բախման վերաբերյալ հայտարարություն, թեև որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասով, կրել է այդպիսի պարտավորություն: Այդուհանդերձ հաշվի առնելով վարչական տույժ նշանակելու սահմանված ժամկետի անցած լինելու հանգամանքը՝ Հանձնաժողովի կողմից նշված դեպքը վարչական վարույթի առարկա չի դարձվել:

Հրապարակման հաջորդ դրվագով Հանձնաժողովն արձանագրել է, որ համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Արմեն Գրիգորյանի, 2022 թվականին ԼՄՍՀ-ԷԱՃՁԲ-23/1 ծածկագրով գնման պայմանագիր է կնքել նույն համայնքի ավագանու անդամ՝ Արծրուն Հակոբյանի Ա/Ձ-ի հետ: Հանձնաժողովը նաև արձանագրել է, որ գործնական կապին զուգահեռ համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամի միջև առկա է քաղաքական կապ/փոխկապակցվածություն՝ հաշվի առնելով վերջիններիս՝ միևնույն կուսակցության և միևնույն ընտրացուցակով առաջադրված լինելու, ինչպես նաև միևնույն քաղաքական ուժը ներկայացնելու հանգամանքը: Միաժամանակ, հաշվի առնելով, որ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից Հանձնաժողով գրավոր հայտարարություն ներկայացնելու իմպերատիվ պահանջ 2022թ թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ չի եղել, իսկ վարչական իրավախախտման վերաբերյալ քննարկված իրավակարգավորումներն ուժի մեջ են մտել միայն 2023 թվականի հունվարի 2-ից, տվյալ դեպքով վարույթ հարուցելու հիմքեր առկա չեն եղել:

Հրապարակման վերջին դրվագի ուսումնասիրությամբ Հանձնաժողովը պարզել է, որ Ստեփանավանի համայնքապետարանի՝ ի դեմս համայնքի ղեկավար Արմեն Գրիգորյանի, և ավագանու մեկ այլ անդամ Արթուր Պապյանի կնոջ՝ Կարինե Բախշինյան Ա/Ձ-ի միջև 2023-2024 թվականներին կնքվել են ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԾՁԲ-23/07 և ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԾՁԲ-24/09 ծածկագրերով համայնքապետարանի կարիքների համար պատճենահանվող և տպող սարքերի քարտրիջների լիցքավորման ծառայությունների ձեռքբերման պայմանագրեր: Հանձնաժողովն արձանագրել է, որ համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամի միջև գործնական կապին զուգահեռ առկա է քաղաքական կապ/փոխկապակցվածություն՝ հաշվի առնելով վերջիններիս՝ միևնույն կուսակցության և միևնույն ընտրացուցակով առաջադրված լինելու, ինչպես նաև միևնույն քաղաքական ուժը ներկայացնելու հանգամանքը:

Վերոգրյալի շրջանակներում Արմեն Գրիգորյանը Հանձնաժողով չի ներկայացրել շահերի բախման վերաբերյալ գրավոր հայտարարություն, թեև որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասով, կրել է այդպիսի պարտավորություն: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշել է փոխկապակցված անձի՝ համայնքի ավագանու անդամի կնոջ ԱՁ-ի հետ պայմանագրի կնքման համատեքստում շահերի բախմանը վերաբերող հանգամանքների վերաբերյալ Հանձնաժողովին գրավոր հայտարարություն չներկայացնելու հիմքով Արմեն Գրիգորյանի նկատմամբ հարուցել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ՝ 2024 թվականին կնքված պայմանագրի շրջանակներում:

13. «Կոռուպցիան Դիլիջանում, «արու» համայնքապետը հող է ծախել հարազատ եղբորը. Ոսկան Սարգսյան», https://lurer.com/?p=579524&l=am, «Lurer.com», հունիսի 8, 2024:

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի՝ 2024 թվականի մայիսի 2-ի թիվ 538-Ա որոշմամբ 2024 թ. հունիսի 3-ին աճուրդի է ներկայացվել Դիլիջան համայնքի 1650.0 քմ հողամասը շուկայական արժեքից ցածր՝ 11.550.000 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում նույն՝ առավելագույն գնով, հաղթել է համայնքի ղեկավարի եղբայրը՝ Սասուն Սարգսյանը: Հանձնաժողովը քննության է առել հրապարակման առարկան շահերի բախման կարգավորումների համատեքստում: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2024 թվականի ապրիլի 12-ի թիվ 687-Ա և Դիլիջանի համայնքի ղեկավարի՝ 2024 թվականի մայիսի 2-ի թիվ 538-Ա որոշումներով՝ 2024 թվականի մայիսի 3-ին Դիլիջան համայնքի պաշտոնական կայքէջում ներկայացված աճուրդ-վաճառքում ներառված հողամասերից մեկը՝ Դիլիջան քաղաքի Թբիլիսյան խճող. թիվ 11/4 հասցեում գտնվող հասարակական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով օտարվող հողամասը, աճուրդով վաճառվել է աճուրդի միակ մասնակից Սասուն Մարտունի Սարգսյանին: Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական շտեմարանների ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ վերջինս հանդիսանում է Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի եղբայրը: Ըստ այդմ՝ 2024 թվականի հունիսի 6-ի N 689 որոշմամբ համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը հողամասն օտարել է «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձին՝ եղբորը: Հանձնաժողովն արձանագրել է, որ համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, պարտավոր էր Հանձնաժողով ներկայացնել շահերի բախման վերաբերյալ գրավոր հայտարարություն՝ նախքան օտարման պայմանագրի

կնքումը: Ուստի Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ 2024 թվականի նոյեմբերի 18-ին որոշել է Դավիթ Սարգսյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Հատկանշական է, որ հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրված մեդիա հրապարակումների գերակշիռ մասն առնչվել է համայնքային գնումների գործընթացներին, դրանցում համայնքների ղեկավարների հետ փոխկապակցված առևտրային կազմակերպությունների մասնակցությանը կամ փոխկապակցված անձանց վերաբերյալ որոշումների կայացմանը: Շահերի բախման և հատկապես գնումների գործընթացներին վերաբերելի հրապարակումների հիման վրա իրականացված ուսումնասիրությունների թիվը նախորդ տարիների համեմատ աճել է ավելի քան տասն անգամ՝ 2024 թվականին կազմելով շուրջ 50: 2023 և 2022 թվականներին շահերի բախմանը վերաբերող մեդիա հրապարակումների թիվը եղել է 5-ը:

Շահերի բախման կարգավորումների խախտումներին առնչվող, նախորդ կիսամյակի ուսումնասիրությունների հիման վրա եզրափակված վարույթներ

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից եզրափակվել են շահերի բախման կարգավորումներին առնչվող՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված թվով 3 վարույթներ: Հարկ է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածով նախատեսված՝ վերոնշյալ վարույթներով զանցանքի օբյեկտիվ կողմը դրսևորվում է վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելու արարքով, ինչից հետևում է, որ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա իր մասնավոր շահի ազդեցության չեզոքացում ապահովելու անհրաժեշտությունից ելնելով պարտավոր է յուրաքանչյուր դեպքում ձեռնպահ մնալ գործողություն կատարելուց, և պարտավոր է օրենքով սահմանված ժամկետում այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Հանձնաժողով, որն էլ, իր հերթին, առաջարկում է ձեռնարկել առաջացած իրավիճակի լուծմանն

ուղղված քայլեր: Եթե Հանձնաժողովը եզրահանգում է, որ նշված իրավիճակում առկա չէ շահերի բախում, ապա այդ դեպքում Հանձնաժողովն առաջարկում է շարունակել կամ վերսկսել պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարումը: Իսկ մինչ Հանձնաժողովի կողմից իրավիճակի լուծմանն ուղղված քայլերի վերաբերյալ առաջարկ ներկայացնելը, պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ձեռնպահ մնալ հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց:

Նշվածից հետևում է, որ վերադաս կամ անմիջական վերադաս չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց պարագայում Օրենսդիրը շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության վերաբերյալ եզրահանգում իրականացնելու բացառիկ լիազորությունը վերապահել է Հանձնաժողովին, ինչը նշանակում է, որ պաշտոն զբաղեցնող անձը չպետք է ինքնուրույն գնահատականներ տա շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության վերաբերյալ, այլ պետք է օրենքով սահմանված ընթացակարգով ապահովի Հանձնաժողովին համապատասխան գրավոր հայտարարության ներկայացումը, որից հետո առաջնորդվի լիազոր մարմնի կողմից ներկայացված առաջարկով: Մինչդեռ վերոնշյալ բոլոր դեպքերում պաշտոնատար անձանց կողմից չէր ներկայացվել գրավոր հայտարարություն Հանձնաժողովին՝ հնարավոր շահերի բախման իրավիճակի առկայության վերաբերյալ:

Վերոնշյալ երեք վարույթների իրականացման առիթ են հանդիսացել լրատվամիջոցների հրապարակումները:

Նշված հիմքով հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովն ընդունել է «Վարչական տույժ կիրառելու մասին» թվով 5 որոշումներ, որոնցից 3-ը՝ հաշվետու ժամանակահատվածին նախորդող ժամանակահատվածում կատարված ուսումնասիրությունների արդյունքում, մասնավորապես.

1. Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով սահմանված գործառույթների իրականացման շրջանակներում, հիմք ընդունելով «Հետք» լրատվամիջոցի՝ «Դիանա Գասպարյանի սկեսուրն Էջմիածնում ապօրինի շինարարություն է սկսել» վերտառությամբ հրապարակումը և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244.17-րդ հոդվածի 1-ին մասով, իրականացրել է վերոնշյալ հրապարակմամբ ներկայացված տեղեկատվության հիման վրա վեր հանված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Մնացականի Գասպարյանի կողմից դրսևորված առերևույթ խախտմանն

առնչվող նյութերի ուսումնասիրություն, որի արդյունքում պարզել է, որ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Մնացականի Գասպարյանը 2023 թվականի նոյեմբերի 24-ին, նոյեմբերի 28-ին, և դեկտեմբերի 13-ին «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձ (ամուսնու մայր), «Նարե պլյուս» ՍՊԸ-ի տնօրեն Ռուզաննա Ասատրյանին տրված թվով 20 շինարարության թույլտվություններով իր լիազորությունների շրջանակում կատարել է գործողություն, որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ այդ մասին «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով 10-օրյա ժամկետում գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով:

Հանձնաժողովը, 2024 թվականի հուլիսի 15-ին քննելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Մնացականի Գասպարյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ 2024 թվականի ապրիլի 15-ի թիվ ՎԻՎ/66/2024 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, որոշել է ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Մնացականի Գասպարյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Հաջորդ վարույթով Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով սահմանված գործառույթների իրականացման շրջանակներում հիմք ընդունելով «Հետք» լրատվամիջոցի՝ «Գազը՝ համայնքապետի եղբոր, ճանապարհների վերանորոգումը՝ եղբոր աներորդու ընկերություններից» վերտառությամբ հրապարակումը իրականացրել է հրապարակմամբ ներկայացված տեղեկատվության հիման վրա վեր հանված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավար Սևակ Միքայելյանի կողմից դրսևորված առերևույթ խախտմանն առնչվող նյութերի ուսումնասիրություն, որի արդյունքում պարզել է, որ Իրականացված գնման գործընթացի (Էլեկտրոնային աճուրդի) արդյունքում Կոտայքի համայնքապետարանի՝ ի դեմս պատվիրատուի ղեկավար Սևակ Սասունի Միքայելյանի և վերջինիս հետ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով փոխկապակցված անձ Մեխակ Սասունի Միքայելյանի բաժնեմասնակցությամբ «Լարգո-Վինչ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի հունվարի 30-ին կնքվել է թիվ ԷԱՃԱՊՁԲ

ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/03 սեղմված բնական գազի մատակարարման պայմանագիրը: Նշված պայմանագրի կնքմամբ Սևակ Միքայելյանն իր լիազորությունների շրջանակում կատարել է գործողություն, որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ այդ մասին «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով 10-օրյա ժամկետում գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով:

Հանձնաժողովը, 2024 թվականի հուլիսի 29-ին քննելով Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավար Սևակ Սասունի Միքայելյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ 2024 թվականի հուլիսի 4-ի թիվ ՎԻՎ/143/2024 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, որոշել է Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավար Սևակ Միքայելյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

3. Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով սահմանված գործառույթների իրականացման շրջանակներում հիմք ընդունելով «Հետք Մեդիա Գործարան» լրատվամիջոցի՝ «Տեղի գնումները՝ համայնքի ղեկավարի կնոջից, քեռուց ու քեռակնոջից» վերտառությամբ և «Տեղի համայնքապետը 378 մլն դրամի պայմանագրեր է կնքել եղբոր ԱՁ-ի հետ» վերտառությամբ հրապարակումները և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244.17-րդ հոդվածի 1-ին մասով, իրականացրել է հրապարակումներով ներկայացված տեղեկատվության հիման վրա վեր հանված ՎԻՎ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար Դավիթ Արամայիսի Ղուլունցի կողմից դրսևորված առերևույթ խախտմանն առնչվող նյութերի ուսումնասիրություն, որի արդյունքում պարզել է, որ Իրականացված գնման գործընթացների արդյունքում Սյունիքի համայնքապետարանի՝ ի դեմս պատվիրատուի ղեկավար Դավիթ Ղուլունցի և վերջինիս հետ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով փոխկապակցված անձանց՝ Մարտունիկ Պողոսյանի բաժնեմասնակցությամբ «ԶԱՆԳԵԶՈՒՐ ԳԱԶ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի հունվարի 31-ին կնքվել է թիվ ՍՄՏՀ-ԳՀ-ԱՊՁԲ-24/2 պայմանագիրը, իսկ վերջինիս և «Սասուն Ղուլունց Արամայիսի» ԱՁ-ի միջև՝ 2023 թվականի դեկտեմբերի 7-ին թիվ ՍՄՏՀ-ԳՀ-ԱՇՁԲ-23/11, 2024 թվականի հունվարի 31-ին թիվ ՍՄՏՀ-ԲՀ-ԱՇՁԲ-24/01 և 2024 թվականի փետրվարի 23-ին թիվ ՍՄՏՀ-ԳՀ-ԱՇՁԲ-24/02-2 պայմանագրերը: Նշված պայմանագրերի կնքմամբ Դավիթ Արամայիսի Ղուլունցն իր լիազորությունների

շրջանակում կատարել է գործողություն, որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ այդ մասին «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով 10-օրյա ժամկետում գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով:

2024 թվականի հուլիսի 22-ին քննելով Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար Դավիթ Արամայիսի Ղուլունցի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ 2024 թվականի հուլիսի 4-ի թիվ ՎԻՎ/144/2024 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, որոշել է Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար Դավիթ Արամայիսի Ղուլունցի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Բացի վերոնշյալ վարույթներից, Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից եզրափակվել է նաև շահերի բախման առերևույթ դեպքի վերաբերյալ համապատասխան վարույթ՝ վարույթը կարճելու մասին որոշման ընդունմամբ:

1.4 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում ստացված նվերների հաշվառման գործընթացի կազմակերպումը

2024 թվականի ապրիլի 11-ին ընդունված՝ ««Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-148-Ն, «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-149-Ն, «Պետական արարողակարգի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-150-Ն օրենքներով օրենսդիրը վերանայեց հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ

ընդունելու արգելքին առնչվող իրավակարգավորումները, թույլատրելի համարվող նվերների շրջանակը, արարողակարգային նվերների հաշվառման առանձնահատկությունները:

Նշված օրենսդրական փոփոխությունների, ինչպես նաև նվերների ընդունման սահմանափակումների կիրառման և հաշվառման գործընթացում վերհանված իրավական և գործառնական խնդիրների հիման վրա Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում նախաձեռնել է Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը հաստատելու մասին իր՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 01-Ն որոշման փոփոխություններ:

Հանձնաժողովի՝ 2024 թվականի օգոստոսի 2-ի N 05-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Պետական արարողակարգի ծառայության՝ նվերների հաշվառման լիազորության ամրագրումը, վերանայվել է նվերների հաշվառման գործընթացը, հաշվառման ենթակա նվերների շրջանակը համապատասխանեցվել է «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված կարգավորումներին, սահմանվել են շուտ փչացող կամ պահպանման էական ծախսեր պահանջող գույքի հանձնման կարգավորումներ և կատարվել վերը նշված օրենսդրական փոփոխություններից բխող այլ ներդաշնակեցումներ:

2024 թվականի նոյեմբերի 15-ի N 06-Ն որոշմամբ վերանայվել են նաև նվերների հանձնման գործընթացին առնչվող նորմերը՝ նախատեսելով առավել ճկուն ընթացակարգ վարչապետի, փոխվարչապետների, Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի նախագահի կողմից ստացվող նվերների հանձնման համար:

Կատարված փոփոխությունները հնարավորություն են տվել ապահովել հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ստացված նվերների հաշվառումը՝ հաշվառման ձևաթղթերի միջոցով և, սահմանված դեպքերում, պետության հանձնումը:

Հարկ է նշել, որ 2024 թվականի 2-րդ կիսամյակում՝ համապատասխան կարգավորումների ուժի մեջ մտնելուց հետո, Հանձնաժողով են ներկայացվել նվերների հաշվառման ընդհանուր թվով 30 ձևաթղթեր, որոնց կարելի է ծանոթանալ Հանձնաժողովի կայքէջում՝ https://shorturl.at/KsU3p:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են տարվել նաև Նվերների հաշվառման էլեկտրոնային ռեեստրի կառուցման ուղղությամբ: 2024 թվականի նոյեմբերի 1-ին Հանձնաժողովը կնքել է համակարգի կառուցման

աշխատանքների պայմանագիրը՝ հայտերի գնահատման արդյունքում դրա պահանջներին բավարարած և հաղթող ընտրված ընկերության հետ: 2024 թվականի նոյեմբերին իրականացվել է Հանձնաժողովի կարիքների գնահատում, իսկ արդեն դեկտեմբերի 30-ի դրությամբ ավարտին է հասցվել համակարգի դիզայնի փաստաթղթի մշակումը (system design document): Նախատեսվում է համակարգի կառուցումն ավարտին հասցնել 2025 թվականի առաջին կիսամյակում: Այն ամբողջությամբ հիմնված է լինելու Հանձնաժողովի էլեկտրոնային համակարգի վրա՝ որպես առանձին ինտեգրվող մոդուլ, ինչը կապահովի հայտարարագրման համակարգի հետ փոխգործելիությունը: Միաժամանակ, նախատեսվում է ապահովել ռեեստրի՝ այլ պետական մարմինների էլեկտրոնային շտեմարանների հետ փոխգործելիությունը՝ տվյալների առավել արդյունավետ փոխանցման նպատակով:

Մինչ այդ նվերների հաշվառման գործընթացը կշարունակի իրականացվել Հանձնաժողովի կողմից մշակված էլեկտրոնային ձևաթղթերի լրացման և ներկայացման միջոցով:

Հարկ է հավելել, որ Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում, հաշվառման գործընթացի կազմակերպմանը զուգահեռ, շարունակել է խորհրդատվություն և մեթոդական աջակցություն տրամադրել հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային իշխանության մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչներին՝ նվերների ընդունման սահմանափակումներին առնչվող հարցերի շուրջ:

1.5 Կոռուպցիայի կանխարգելման ոլորտի վիճակագրության վարման կառուցակարգերի ներդրում

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են տարվել կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարման, մասնավորապես՝ բարեվարքության համակարգի տարրերին առնչվող խախտումների վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրման և մշակման ընթացակարգերի ներդրման ուղղությամբ: Այս համատեքստում 2024 թվականին Հանձնաժողովը համագործակցություն է հաստատել Վիճակագրական կոմիտեի հետ:

Քննարկումների արդյունքում մշակվել և Հանձնաժողովի՝ 2024 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ հաստատվել է Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում թվային վիճակագրության վարման մեթոդաբանական ուղեցույցը:

Ուղեցույցը նախատեսված է կարգավորելու կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարման հետ կապված հարաբերությունները՝ ապահովելով տվյալների ամբողջականությունը և համակարգվածությունը։ Վիճակագրության վարման արդյունքում հնարավոր կլինի վերհանել հանրային իշխանության առանձին մարմիններում կոռուպցիայի կանխարգելման ոլորտում ձևավորվող պրակտիկան, ապահովել նորմերի կիրառման միասնականությունը, ինչպես նաև գնահատել ոլորտի վիճակը և հետագա լավարկման հնարավորությունները։

Հարկ է նշել, որ վիճակագրության վարման անհրաժեշտությունը բխում է «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքների պահանջներից և Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության և դրա գործողությունների ծրագրի ներքո ստանձնած հանձնառություններից։

Թեև նախորդող տարիներին ևս Հանձնաժողովի կողմից հավաքագրվել են համապատասխան վիճակագրական տվյալներ՝ տարբեր մարմիններում իրականացվող քննությունների և դրանց արդյունքների վերաբերյալ, որոնք ներկայացվել են Բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդման շրջանակներում, մեթոդաբանական ուղեցույցի հաստատումը թույլ կտա արդեն 2025 թվականին առավել համակարգված եղանակով ձեռք բերել և մշակել տվյալները։

Ի լրումն վերոգրյալի՝ Վիճակագրության պետական խորհրդի՝ 2024 թվականի դեկտեմբերի 9-ի 63-Ա որոշմամբ հաստավել է «Բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով իրականացված քննությունների մասին» տարեկան վիճակագրական ամփոփ ձևը, որով Հանձնաժողովը տարեկան կտրվածքով պաշտոնական վիճակագրություն է ներկայացնելու Վիճակագրական կոմիտե։

Ցուցանիշների կազմման հիմնական աղբյուրը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով Հանձնաժողովին տրամադրվող տեղեկատվությունն է, ինչպես նաև պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության համար ձևավորվող էթիկայի հանձնաժողովների կողմից տրամադրվող տեղեկատվությունը։

Ընդ որում՝ բարեվարքության համակարգի վերաբերյալ առանձին գերատեսչություններ վարում են սեփական վիճակագրությունը, իսկ Հանձնաժողովը հանդես է գալիս որպես կենտրոնական դերակատար՝ հանրային ծառայության համակարգում ձևավորված պրակտիկան ամբողջացնելու և ներկայացնելու հարցում։ Հետևապես՝ միասնական կառուցակարգերի ներդրումը

էականորեն կնպաստի բարեվարքության համակարգի համալիր գնահատման, մարմիններում ձևավորված պրակտիկայի, խախտումների բնույթի, դրանց պատճառների գնահատման համար:
Տարեկան վիճակագրության վարման նպատակով Հանձնաժողովը 2024 թվականի դեկտեմբեր ամսին մշակել և շրջանառել է էլեկտրոնային հարցաթերթեր: 2024 թվականի վերաբերյալ վիճակագրությունը Հանձնաժողովի կողմից կհրապարակվի 2025 թվականի առաջին կիսամյակում:

Միաժամանակ, Հանձնաժողովը շարունակում է Վիճակագրական կոմիտեի հետ քննարկումները՝ վիճակագրության վարման գործընթացի թվայնացման հնարավորության և թվային վիճակագրության ուղղությամբ աշխատանքների համատեղման ուղղությամբ:

Ուսումնասիրությունների ամփոփ վիճակագրություն

Այսպիսով, 2024 թվականի երկրորդ կիսամյակում բարեվարքության համակարգի տարրերի առնչությամբ դիմումների և մեդիա հրապարակումների հիման վրա իրականացվել է 55 ուսումնասիրություն, ևս 108 ուսումնասիրություն իրականացվել է անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկման շրջանակներում:

Հաշվետու ժամանակահատվածում ստացվել է թվով 32 դիմում, որից 11-ը վերաբերել են անհամատեղելիության պահանջներին, 12-ը՝ շահերի բախման իրավիճակներին, 4-ը՝ վարքագծի կանոնների, 2-ը՝ նվերների ընդունման սահմանափակումներին: 3 դեպքում ուսումնասիրության առարկան վերաբերել է

այլ սահմանափակումներին: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ստացված դիմումների թիվն աճել է երկու անգամ (2023 թվականին կազմել է 17):

Ուսումնասիրված հրապարակումներից 3-ը վերաբերել են անհամատեղելիության պահանջներին, 13-ը՝ շահերի բախման իրավիճակներին, 5-ը՝ վարքագծի կանոններին: Մեկ դեպքում ուսումնասիրության առարկան վերաբերել է նվերների ընդունման սահմանափակումներին:

2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ մեդիա հրապարակումների ուսումնասիրություններ





II. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

2.1 Հայտարարագրերի ռեեստրի վարում

Հանձնաժողովը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից հաշվետու ժամանակահատվածում 477 ծանուցումների (ռեեստրներ) հիման վրա ստացել և հայտարարագրման էլեկտրոնային նոր համակարգ (այսուհետ՝ Համակարգ) է մուտքագրել 1349 հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ տվյալներ, որոնք վերաբերել են 1876 փոփոխությունների:

Վերը նշված փոփոխություններից 978-ը եղել են պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, 898-ը՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու մասին:

Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ Համակարգում գրանցված գործող պաշտոնատար անձանց թիվը կազմել է 6186:

Հանձնաժողովի կողմից իրականացված իրազեկման միջոցառումների արդյունքում հաշվետու ժամանակահատվածում ստացվել է 94 պաշտոնատար անձանց վերաբերյալ՝ նախորդ տարիների ընթացքում չներկայացված 101 տվյալ, որից՝ 95-ը պաշտոնական պարտականություններն ստանձնելու, իսկ 6-ը՝ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու մասին:

Միաժամանակ հաշվետվության ներկայացման դրությամբ հայտարարագրման էլեկտրոնային համակարգում գրանցված պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների թիվը 7429 է: Հարկ է նշել, որ ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալները լրացվում են պաշտոնատար անձանց կողմից և հնարավոր են շեղումներ իրական վիճակագրությունից:

2.2 Աջակցություն հայտարարատուներին

2024 թվականի 2-րդ կիսամյակում Հանձնաժողովը հայտարարագրման գործընթացի վերաբերյալ հայտարարատուներին աջակցություն է տրամադրել հետևյալ գործիքներով.

- contact@cpcarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով, որով ստացվել է 160 հարցում:
- հեռախոսազանգերով, որոնց թիվը կազմել է շուրջ 1500,
- Համակարգի «Օգնություն» բաժնի միջոցով, որով ստացվել է 52 գրավոր հարցում:

Բոլոր այն հայտարարատուները, ովքեր չեն ստացել Համակարգ մուտք գործելու համար տվյալներ կամ ում չի հաջողվել ստացված տվյալներով մուտք գործել Համակարգ, հնարավորություն են ունեցել պահանջվող տվյալները լրացնել Հանձնաժողովի կայքում հրապարակված հղումով ներկայացված ձևաթղթում, ինչի արդյունքում լրացված տվյալների համաձայն հայտարարատուներին ուղարկվել է օգտանուն և նոր գաղտնաբառ: Հաշվետու ժամանակահատվածում այս գործիքի միջոցով հայտարարատուների կողմից ներկայացվել է շուրջ 400 հայտ:

2.3 Ներկայացված հայտարարագրեր

2024 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում ներկայացվել է 3044 հայտարարագիր, որից 1134-ը՝ հայտարարատու պաշտոնատար անձանց, իսկ 1910-ը՝ նրանց ընտանիքի անդամների կողմից։

Հաշվետու ժամանակահատվածում հայտարարագիրն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու անհնարինության պատճառով Հանձնաժողովի հատուկ թույլտվությամբ ոչ էլեկտրոնային (թղթային) տարբերակով ներկայացվել է 91 հայտարարագիր, այդ թվում՝ 6 հայտարարագիր մուտքագրվել է Համակարգ և սահմանված կարգով հրապարակվել, իսկ մյուս հայտարարագրերը չեն մուտքագրվել՝ Հայտարարագրման հին էլեկտրոնային համակարգի ֆունկցիոնալության բացակայության պատճառով։

Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում ապահովել է 2024 թվականի ընթացքում ներկայացման ենթակա՝ սակայն չներկայացված հայտարարագրերի հավաքագրումը՝ գրավոր ծանուցումների և վարչական վարույթների հարուցման գործընթացի միջոցով։

Միաժամանակ շարունակվել է նախորդող տարիների ընթացքում չներկայացված հայտարարագրերի հավաքագրման գործընթացը։

Այսպես՝ 2024 թվականին ներկայացման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չներկայացված հայտարարագրերի հավաքագրման նպատակով ուղարկվել է 231 ծանուցում, 226՝ պաշտոնատար անձանց, իսկ 5-ը՝ նրանց ընտանիքի անդամներին։ Նախորդող տարիներին ներկայացման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չներկայացված հայտարարագրերի հավաքագրման նպատակով ուղարկվել է 275 ծանուցում, 197՝ պաշտոնատար անձանց, իսկ 78-ը՝ նրանց ընտանիքի անդամներին։

Ուղարկված ծանուցումների և նախաձեռնված վարչական վարույթների արդյունքում ներկայացվել են 322 հայտարարագրեր, 264-ը պաշտոնատար անձանց կողմից, իսկ 58-ը՝ նրանց ընտանիքի անդամների։

Հաշվետու ժամանակահատվածում հայտարարագրերը օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու առնչությամբ հարուցված վարույթներից եզրափակվել են 323-ը։ Դրանից 25-ը եզրափակվել է 200,000 ՀՀ դրամի չափով վարչական տույժ կիրառելու մասին որոշումների ընդունմամբ։ 298 գործերով համապատասխան հայտարարատու անձանց հայտարարվել է բանավոր դիտողություն՝ կարճելով գործերի վարույթը արարքի նվազ նշանակության հիմքով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց կողմից գործի քննության ընթացքում ներկայացվել են այն հայտարարագրերը, որոնց կապակցությամբ հարուցվել էին արույթները։



2.4 Հայտարարագրված տվյալների փոփոխություններ

2024 թվականի հուլիսի 1-ից հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգում ապահովվել է հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմումների ստացման, ինչպես նաև հայտարարագրված տվյալների փոփոխությունների իրականացման ֆունկցիոնալությունը, իսկ 2024 թվականի օգոստոսի 23-ից հայտարարագրված տվյալների փոփոխությունների իրականացման ֆունկցիոնալությունը վերականգնվել է նաև հայտարարագրման հին էլեկտրոնային համակարգում:

2024 թվականի երկրորդ կիսամյակում ստացվել է հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ 203 դիմում, որից 140 դիմումը ստացվել է հայտարարատու պաշտոնատար անձանց, իսկ 63-ը՝ նրանց ընտանիքի անդամների կողմից: Ներկայացված 203 դիմումներով նախատեսվել է փոփոխություն կատարել ընդհանուր 387 հայտարարագրերում:

Հաշվետու ժամանակահատվածում ընթացք է տրվել նաև նախորդիվ ստացված, սակայն համակարգի ֆունկցիոնալության բացակայությամբ պայմանավորված կասեցված 611 դիմումի: Նշված 611 դիմումներով նախատեսվել են փոփոխություններ 1037 հայտարարագրերում:

Այսպիսով՝ 2024 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում Հանձնաժողովը ապահովել է ընդհանուր 814 դիմումի ընթացք, արդյունքում փոփոխություն կատարելով 1424 հայտարարագրերում:

Նշված դիմումներից 16-ը մերժվել են փոփոխման ենթակա տվյալները այլ կերպ Հանձնաժողովին հայտնի դառնալու հիմնավորմամբ, մասնավորապես որոշ դեպքերում մամուլի մշտադիտարկումների արդյունքում կամ սեփական նախաձեռնությամբ փոփոխման ենթակա հայտարարագրերը գտնվել են Հանձնաժողովի ուսումնասիրության ներքո, իսկ որոշ դեպքերում դրանք հանդիսացել են արտավարութային փաստաթղթեր:

III. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 Հայտարարագրերի ստուգում

ԶԼՄ մոնիթորինգի արդյունքում հայտնաբերված՝ հաշվետու ժամանակահատվածում կատարված 27 հրապարակումներում արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների հիման վրա Հանձնաժողովի կողմից նախաձեռնվել են ուսումնասիրություններ 87 հայտարարատուների (61 պաշտոնատար անձ և ընտանիքի 26 անդամ) վերաբերյալ:

Միաժամանակ, հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են դրան նախորդող ժամանակահատվածում կատարված հրապարակումների հիման վրա նախաձեռնված ուսումնասիրությունները, որոնց արդյունքում՝

1. 34 ուսումնասիրություններ ավարտվել են, որոնցից՝
   1.1. 27-ի դեպքում հայտարարատուների նկատմամբ հետագա գործընթաց չի նախաձեռնվել՝ հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանությունների բնույթը, վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետների սպառված լինելը, Հանձնաժողովի կասկածների փարատված լինելու հանգամանքը,

ինչպես նաև հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքների բացակայությունը: Ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների առնչությամբ հայտարարատուներին առաջարկվել է Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմումներ,

1.2. 1-ի դեպքում նախաձեռնվել է վարչական վարույթ,

1.3. 6-ի դեպքում որոշվել է իրականացնել պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի համալիր վերլուծություն,

2. Մյուս ուսումնասիրությունների դեպքում որոշվել է հայտարարատուներից հայցել պարզաբանումներ, որոնց գնահատումը հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ ավարտված չէ:

Միաժամանակ, պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2023 թվականների տարեկան հաշվետվությունների ստուգման ընթացքում հաշվետվությամբ ներկայացված նվիրատվությունների վերաբերյալ տվյալների արժանահավատությունն ստուգելու համար իրականացվել է կուսակցությանը նվիրատվություն կատարած՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարատու անձանց, մասնավորապես՝ 36 պաշտոնատար անձանց և ընտանիքի 32 անդամների՝ 68 հայտարարագրերում հայտարարագրված տվյալների ստուգման արդյունքում դեպքում նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 6 վարույթ:

3.2 Հայտարարագրերի վերլուծություն

Հիմք ընդունելով Հանձնաժողովի՝ 2022 թվականի հոկտեմբերի 19-ի՝ «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա պետական պաշտոնների ցանկը հաստատելու մասին» թիվ N 02-Լ, Հանձնաժողովի՝ 2023 թվականի մայիսի 29-ի՝ «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա պետական պաշտոնների շրջանակը հաստատելու մասին» N 01-Լ որոշումները, ինչպես նաև ՁԼՄ հրապարակումները՝ իրականացվել են համապատասխան անձանց հայտարարագրերի վերլուծություններ հետևյալ գործողությունների հաջորդականությամբ՝

1. Հարցումներ պետական մարմիններին, բոլոր ապահովագրական ընկերություններին, Կենտրոնական բանկ, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիա,

2. Վերլուծության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների ամփոփում և ներկայացում Հանձնաժողովի քննարկմանը,

3. Հանձնաժողովի որոշմամբ, պարզաբանման ենթակա հարցերի առկայության դեպքում, արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ գրավոր պարզաբանումների հայցում հայտարարատուներից,

4. Պարզաբանումների գնահատում և վերլուծության վերջնական արդյունքների ներկայացում Հանձնաժողովի հաստատմանը,

5. Հանձնաժողովի որոշմամբ սահմանված համապատասխան գործողությունների իրականացում (վերլուծության ավարտ, վարույթի հարուցում կամ գործի նյութերի ուղարկում Գլխավոր դատախազություն)։

Իրականացված վերլուծությունների արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում՝

1. 95 հայտարարատուների 240 հայտարարագրերի վերլուծությունն ավարտվել է՝ գույքային դրության արժանահավատության վերաբերյալ կասկածները փարատվելու (այդ թվում՝ գույքային դրության վերաբերյալ ներկայացված տվյալների անարժանահավատությունը հիմնավորող բավարար հիմքերի բացակայության) հանգամանքով, ինչպես նաև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու հիմքերի բացակայությամբ պայմանավորված,
2. 1 անձի նկատմամբ նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ,
3. 4 դեպքով գործի նյութերն ուղարկվել են Գլխավոր դատախազություն,
4. մյուս դեպքերով Հանձնաժողով ներկայացված պարզաբանումները հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ գնահատման փուլում են։

3.3 Հայտարարգրերի ստուգման և վերուծության արդյունքում իրականացված վարույթներ

Հաշվետու ժամանակահատվածում հայտարարագրերի ստուգման և վերլուծության արդյունքում հարուցված վարույթներից եզրափակվել են թվով 328

վարույթներ։ Դրանից 26-ը եզրափակվել է 200,000 ՀՀ դրամի չափով վարչական տույժ կիրառելու մասին որոշումների ընդունմամբ, որոնցից 25-ը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, այն է՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու, 1-ը՝ 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի հատկանիշներով։ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված վարույթներից թվով 298 գործերով համապատասխան հայտարարատու անձանց հայտարարվել է բանավոր դիտողություն՝ կարճելով գործերի վարույթը արարքի նվազ նշանակության հիմքով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց կողմից գործի քննության ընթացքում ներկայացվել են այն հայտարարագրերը, որոնց կապակցությամբ հարուցվել էին կոնկրետ վարույթները։

Նշված գործերով Հանձնաժողովի կողմից պատճառաբանվել են կայացված որոշումները՝ արձանագրելով, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովն անհրաժեշտ է համարել յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյո՞ք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը, այս առնչությամբ էական է համարվել խախտման (արարքի) որակական կողմն այն առումով արդյո՞ք այն ունի նվազ նշանակություն, թե ոչ։ Նշվածով պայմանավորված՝ մինչև գործի քննության օրը հայտարարագիրը ներկայացնելու դեպքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը, Հանձնաժողովի գնահատմամբ չի խաթարվում։

Հաշվետու ժամանակահատվածում Օրենսգքրի 169.28-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված թվով 2 վարույթներ կարճվել են՝ դեպքի բացակայության հիմքով։

Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ թվով 1 գործի (*Ա. Դ.*) քննության արդյունքում Հանձնաժողովի կողմից որոշում չի կայացվել։ Տվյալ գործի հանգամանքների քննարկման վերաբերյալ նիստի արձանագրությունը հրապարակված է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում հետևյալ հղումով։ Նշված հիմքով թվով մեկ վարույթ եզրափակվել է բանավոր դիտողություն հայտարարելով և արարքի նվազ նշանակության հիմքով գործի վարույթը կարճելու մասին որոշման ընդունմամբ, իսկ 1-ը՝ վարչական տույժ կիրառելու մասին որոշման ընդունմամբ։

Հարկ է նաև նշել, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 2.1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում կարգապահական վարույթ է հարուցում դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ (...):

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից հարուցվել է մեկ կարգապահական վարույթ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավորի նկատմամբ*:*

Նշված վարույթը հարուցվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 6.1-րդ մասի ուժով՝ հայտարարագրերի վերլուծության արդյունքում հայտնաբերված՝ հայտարարագրման ենթակա տվյալներին առնչվող առերևույթ խախտման հիմքով հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցմանը զուգահեռ: Նշված կարգապահական վարույթը հաշվետու ժամանակահատվածում կարճվել է:

IV. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

4.1 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգում

Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության գործառույթի շրջանակներում Հանձնաժողովի կողմից իրականացված՝ պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների՝ 2022 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքներն ամփոփվել են 2024 թվականի 2-րդ կիսամյակում, համաձայն որի՝

Պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2022 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքներ.

1. «Հանրապետություն» կուսակցության 2022 թվականի Տարեկան հաշվետվության ստուգման արդյունքում վարչական կամ քրեական

իրավախախտման վերաբերյալ դեպքեր չեն հայտնաբերվել, և ստուգումն ավարտվել է:

2. «Վերածնվող Հայաստան» կուսակցության 2022 թվականի տարեկան հաշվետվության ստուգմամբ հայտնաբերված՝ իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու, ինչպես նաև կուսակցության կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու դեպքերի առթիվ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ երկու վարույթ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարույթը եզրափակվել է կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ բանավոր դիտողության հայտարարմամբ՝ արարքի նվազ նշանակության հիմքով կարճելով գործի վարույթը: Նման որոշման ընդունման համար հիմք է հանդիսացել հետևյալ հանգամանքների միաժամանակյա առկայությունը՝

- Չթույլատրված նվիրատվության չափը չի գերազանցել Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավախախտումների գործերով նշանակվող տուգանքի նվազագույն չափին (100,000 ՀՀ դրամ),
- Մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրը կուսակցության կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ հաստատված՝ օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվությունները վերադարձվել են պետական բյուջե:

Ինչ վերաբերում է Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հարուցված վարույթին, ապա այն հարուցվել էր հասարակական կազմակերպության կողմից կուսակցությանը չթույլատրված նվիրատվություն կատարելու հիմքով, և եզրափակվել է՝ հայտարարելով կազմակերպության նախագահին բանավոր դիտողություն և արարքի նվազ նշանակության հիմքով կարճելով գործի վարույթը: Հարկ նշել, որ նվազ նշանակության որակման համար հիմք է հանդիսացել այն էական հանգամանքը, որ կազմակերպության կողմից կուսակցությանը բնեղենով կատարված նվիրատվության չափը չի գերազանցել 100,000 ՀՀ դրամը:

3. «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցության 2022 թվականի տարեկան հաշվետվության ստուգմամբ հայտնաբերված՝ կուսակցության կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու դեպքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ

օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ։

Նշված վարույթը եզրափակվել է կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ բանավոր դիտողության հայտարարմամբ՝ կարճելով գործի վարույթը։ Նման որոշման ընդունման համար հիմք է հանդիսացել հետևյալ հանգամանքների միաժամանակյա առկայությունը՝

-Օրենսգրքի 189.16-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման գործով քննության իրավասությունը Հանձնաժողովին վերապահելուց հետո նշված դրույթը խախտված լինելու առնչությամբ արարքը հայտնաբերվել և ծանուցում է ներկայացվել առաջին անգամ.

-Մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրը Կուսակցության կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ հաստատված՝ օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվությունները վերադարձվել են նվիրատուներին, որի վերաբերյալ ապացույցը ներկայացվել է Հանձնաժողով։

4. «Բարգավաճ Հայաստան» կուսակցության 2022 թվականի տարեկան հաշվետվության ստուգմամբ հայտնաբերված՝ իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու դեպքի առթիվ 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ։

Միաժամանակ, կուսակցության կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու դեպքի առթիվ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ 2024 թվականի հուլիսի 2-ին հարուցվել է մեկ այլ վարույթ։

Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնված վարույթը եզրափակվել է կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ բանավոր դիտողության հայտարարմամբ՝ արարքի նվազ նշանակության հիմքով կարճելով գործի վարույթը։ Նման որոշման ընդունման համար հիմք է հանդիսացել հետևյալ հանգամանքների միաժամանակյա առկայությունը՝

- Չթույլատրված նվիրատվության չափը չի գերազանցել Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավախախտումների գործերով նշանակվող տուգանքի նվազագույն չափին (100,000 ՀՀ դրամ)
- Մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրը կուսակցության կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ հաստատված՝ օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվությունը վերադարձվել է նվիրատուին։

Ինչ վերաբերում է Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հարուցված վարույթին, ապա այն եզրափակվել է օրենքով չթույատրված նվիրատվության աղբյուր՝ իրավաբանական անձի պաշտոնատար անձի նկատմամբ 792,786 ՀՀ դրամի չափով վարչական տույժի կիրառմամբ։

5. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 2022 թվականի տարեկան հաշվետվության ստուգմամբ հայտնաբերված՝ Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու, կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելու և նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելու դեպքերի առթիվ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համապատասխանաբար 189.16-րդ հոդվածի 1-ին մասով, 189.15-րդ հոդվածի 3-րդ մասով և 189.20-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 5 վարույթ։

Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հարուցված վարույթը եզրափակվել է Նշված վարույթը եզրափակվել է կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ բանավոր դիտողության հայտարարմամբ՝ կարճելով գործի վարույթը։ Նման որոշման ընդունման համար հիմք է հանդիսացել հետևյալ հանգամանքների միաժամանակյա առկայությունը՝

-Օրենսգրքի 189.16-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման գործով քննության իրավասությունը Հանձնաժողովին վերապահելուց հետո նշված դրույթը խախտված լինելու առնչությամբ արարքը հայտնաբերվել և ծանուցում է ներկայացվել առաջին անգամ

-Մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրը Կուսակցության կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ հաստատված՝ օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվությունները վերադարձվել են նվիրատուներին և պետական բյուջե, որի վերաբերյալ ապացույցները ներկայացվել են Հանձնաժողով։

Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով նախաձեռնված վարույթը եզրափակվել է կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ 100,000 ՀՀ դրամի չափով վարչական տույժ նշանակելու մասին որոշման ընդունմամբ՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կուսակցության բանկային հաշիվներից կատարվել են՝ 10,907,000 ՀՀ դրամի չափով կանխիկացումներ։

Ինչ վերաբերում է Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնված թվով 3 վարույթներին, ապա հարկ է նշել, որ դրանցից մեկի վարույթը կասեցվել է և գործի նյութերն ուղարկվել են Գլխավոր դատախազություն,

իսկ մյուս 2 վարույթների արդյունքում ընդունվել են նվիրատուների նկատմամբ 500,000-ական ՀՀ դրամի չափով վարչական տույժ կիրառելու մասին որոշումներ:

6. «Քաղաքացիական պայմանագիր» և «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցությունների կողմից Հանձնաժողովի պահանջով ոչ ամբողջական փաստաթղթեր տրամադրելու դեպքերի առթիվ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներ չեն նախաձեռնել հաշվի առնելով գործընթացի՝ առաջին անգամ իրականացման փաստը, ինչպես նաև գնահատելով չներկայացված տվյալների էականության, ինչպես նաև տվյալների գնահատման փուլում ստուգման արդյունքների վրա դրանց հավանական ազդեցության հանգամանքը:

Միաժամանակ, Հանձնաժողովի կողմից պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցություններին ուղարկվել են համապատասխան գրություններ՝ տարեկան հաշվետվությունների մեջ առկա սխալ կամ ոչ ամբողջական տվյալները շտկելու (արձանագրված այնպիսի անհամապատասխանություններ, որոնք չեն առաջացնում վարչական կամ քրեական պատասխանատվություն), իսկ դրանց հետ համաձայն չլինելու դեպքում դիրքորոշում ներկայացնելու նպատակով:

Նախաձեռնված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթների շրջանակներում պետական ֆինանսավորում ստացող կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվությունների և չթույլատրված նվիրատվությունների դեպքերով կուսակցությունների ստացած նվիրատվությունները բոլոր կուսակցությունների կողմից վերադարձվել են նվիրատուներին կամ պետական բյուջե, մասնավորապես՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից 4,900,000 ՀՀ դրամ օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվությունը վերադարձվել է նվիրատուներին: 3,464,728 ՀՀ դրամ գումար փոխանցվել է պետական բյուջե, որից՝ 2,464,728ՀՀ դրամը, որպես չթույլատրված նվիրատվություն, իսկ 1,000,000 ՀՀ դրամը՝ օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվություն, որը հնարավոր չի եղել վերադարձնել նվիրատուին:

Պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների՝ 2022 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում հայտնաբերված՝ չթույլատրված կամ օրենքով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունների, ինչպես նաև կանխիկացումների վերաբերյալ ամփոփ տվյալները ներկայացված են ստորև.



Պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների՝ 2022 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում պետական բյուջե վերադարձվել է ընդհանուր՝ 4,286,999 ՀՀ դրամ, իսկ նվիրատվություններին՝ 18,512,500 ՀՀ դրամ գումար:

Հաշվետու ժամանակահատվածում՝ պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2022 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման գործընթացում հայտնաբերվել են նաև առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող դեպքեր, որոնց վերաբերյալ գործի նյութերն ուղարկվել են Գլխավոր դատախազություն: Առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող 3 դեպքերից 2-ով նախաձեռնվել են քրեական վարույթներ:

Նշված վարույթները կարճվել են քրեական իրավասու մարմինների կողմից Նշված որոշումների դեմ Հանձնաժողովի կողմից տարվել են բողոքներ՝ վերադասության և դատական կարգով:

Պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգում

1. «Հանրապետություն» կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգման արդյունքում վարչական կամ քրեական

իրավախախտման վերաբերյալ դեպքեր չեն հայտնաբերվել, և ստուգումն ավարտվել է:

2. «Վերածնվող Հայաստան» կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգման արդյունքում վարչական կամ քրեական իրավախախտման վերաբերյալ դեպքեր չեն հայտնաբերվել, և ստուգումն ավարտվել է:

3. «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգման արդյունքում վարչական կամ քրեական իրավախախտման վերաբերյալ դեպքեր չեն հայտնաբերվել, և ստուգումն ավարտվել է:

4. «Բարգավաճ Հայաստան» կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգմամբ հայտնաբերված՝ կուսակցության կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու դեպքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

Նշված վարույթը եզրափակվել է կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ 100,000 ՀՀ դրամի չափով վարչական տույժ կիրառելու մասին որոշման ընդունմամբ:

Միաժամանակ, կուսակցության կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու դեպքի առթիվ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից հարուցվել են թվով 2 վարույթներ, որոնց արդյունքում նվիրատուներին հայտարարվել է բանավոր դիտողություն՝ կարճելով գործերի վարույթը: Նման որոշումների ընդունման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ նվիրատվության չափը չի գերազանցել 100,000 ՀՀ դրամը: Հարկ է նշել, որ բոլոր այն դեպքերում, երբ Հանձնաժողովի կողմից որպես էական հանգամանք է դիտարկվել նվիրատվության չափը 100,000 ՀՀ դրամից պակաս լինելու հանգամանքը, Հանձնաժողովը նշված հիմքում դրել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի՝ պատասխանատվություն սահմանող, վարույթի

հարուցման համար հիմք հանդիսացած նորմի սանկցիայի նվազագույն շեմը՝ 100,000 ՀՀ դրամը չգերազանցելու հանգամանքը:

5. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգմամբ հայտնաբերված՝ Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու, կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելու, իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու, նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելու դեպքերի առթիվ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համապատասխանաբար 189.16-րդ հոդվածի 1-ին մասով, 189.15-րդ հոդվածի 3-րդ մասով, 189.21-րդ հոդվածի 1-ին մասով և 189.20-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 14 վարույթ:

Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հարուցված վարույթը եզրափակվել է կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ 100,000 ՀՀ դրամի չափով վարչական տույժի կիրառմամբ:

Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով հարուցված վարույթը եզրափակվել է կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ բանավոր դիտողության հայտարարմամբ՝ կարճելով գործի վարույթը արարքի նվազ նշանակության հիմքով: Նման որոշման հիմքում ընկել է այն հանգամանքը, որ կանխիկացումների չափը չի գերազանցել 100,000 ՀՀ դրամը:

Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հարուցված թվով 7 վարույթներից 2-ը կարճվել են օրենքով նվիրատվության չթույլատրված աղբյուր համարվող իրավաբանական անձանց պաշտոնատար անձանց նկատմամբ բանավոր դիտողության հայտարարմամբ՝ կարճելով գործերի վարույթը արարքի նվազ նշանակության հիմքով: Նման որոշումներից մեկի ընդունման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ թեև իրավաբանական անձի անունից կուսակցության բանկային հաշվին փաստացի կատարվել է փոխանցում, սակայն ըստ էության, ներկայացվել են ապացույցներ, որ բովանդակային առումով փոխանցումը կատարվել է ֆիզիկական անձի անունից՝ չնայած գործարքի ընթացակարգային սխալ իրականացման՝ փաստացի կուսակցության կողմից այն իրականացնելով:

Իսկ նույն հիմքով հարուցված մյուս վարույթի կարճման հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ նվիրատվության չափը չի գերազանցել 100,000 ՀՀ դրամը: Մնացյալ 5 վարույթների արդյունքներով կիրառվել են վարչական տույժեր՝ 2,000,000 ՀՀ դրամի, 700,000 ՀՀ դրամի, 400,000 ՀՀ դրամի, և 2 տույժ՝ 300,000-ական ՀՀ դրամի չափով:

189.20-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հարուցված թվով 2 վարույթները եզրափակվել են վարչական տույժ կիրառելու մասին որոշումների ընդունմամբ՝ 199,000 ՀՀ դրամ և 259,050 ՀՀ դրամի չափերով։

Միաժամանակ, կուսակցությունների՝ 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում կուսակցությունների տարեկան հաշվետվությունների մեջ առկա սխալ կամ ոչ ամբողջական տվյալները շտկելու (այնպիսի անհամապատասխանություններ, որոնք չեն առաջացնում վարչական կամ քրեական պատասխանատվություն), պետական նպատակային ֆինանսավորումը տրամադրելու հիմքերի առկայության կամ բացակայության, պետական նպատակային ֆինանսավորման միջոցների օգտագործման, ինչպես նաև պետական նպատակային ֆինանսավորման գումարից՝ Հանձնաժողովի ստուգման արդյունքներով նախատեսվող նվազեցումների վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու նպատակով, պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցություններին Հանձնաժողովի կողմից ուղարկվել են համապատասխան գրություններ և ստացվել պետական ֆինանսավորման իրավունք ունեցող կուսակցությունների կողմից ներկայացված դիրքորոշումները։

Նախաձեռնված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթների շրջանակներում պետական ֆինանսավորում ստացող կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվությունների և չթույլատրված նվիրատվությունների դեպքերով կուսակցությունների ստացած նվիրատվությունները բոլոր կուսակցությունների կողմից վերադարձվել են նվիրատուներին կամ պետական բյուջե, մասնավորապես՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից 8,725,000 ՀՀ դրամ օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվությունը վերադարձվել է նվիրատուներին, իսկ 12,477,028 ՀՀ դրամը, որպես օրենքով սահմանված չթույլատրված նվիրատվություն փոխանցվել է պետական բյուջե՝ վարչական տույժ կիրառելու մասին որոշում կայացնելուց հետո, իսկ մինչ վարչական տույժ կիրառելու մասին որոշման կայացումը 12,477,028 ՀՀ դրամ օրենքով սահմանված չթույլատրված նվիրատվությունից 4,336,560 ՀՀ դրամը արդեն իսկ փոխանցված է եղել պետական բյուջե։

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն կողմից՝ 600,870 ՀՀ դրամ օրենքով սահմանված չթույլատրված նվիրատվությունը վերադարձվել է պետական բյուջե՝ վարչական տույժ կիրառելու մասին որոշում ընդունելուց հետո։

Պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների՝ 2023 թավականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում հայտնաբերված՝ չթույլատրված կամ օրենքով սահմանված չափը գերազանցող

նվիրատվությունների, ինչպես նաև կանխիկացումների վերաբերյալ ամփոփ տվյալները ներկայացված են ստորև.



Պետական ֆինանսավորման ենթակա կուսկացությունների՝ 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում պետական բյուջե է վերադարձվել ընդհանուր՝ 13,077,898 ՀՀ դրամ, իսկ նվիրատվություններին՝ 8,725,000 ՀՀ դրամ գումար:

Միաժամանակ, պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման գործընթացում հայտնաբերվել է առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող դեպք, որի վերաբերյալ գործի նյութերն ուղարկվել են Գլխավոր դատախազություն, որի հիման վրա նախաձեռնվել է քրեական վարույթ և այժմ գտնվում է քննության փուլում:

«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) համաձայն՝ *Պետական նպատակային ֆինանսավորումը տրամադրելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ընդունում է որոշում, որի մասին ընդունման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը:*

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովի կողմից իրականացված՝ պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցությունների՝ 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում ընդունվել

են պետական նպատակային ֆինանսավորում տրամադրելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին համապատասխան որոշումներ՝ հիմք ընդունելով Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-9-րդ մասերը: Այդ որոշումների համաձայն՝

1. Առկա են եղել հիմքեր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը տրամադրելու պետական նպատակային ֆինանսավորման կեսը՝ Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերով սահմանված դրույթներին համապատասխանը, որը կազմում՝ 53,661,800 ՀՀ դրամ:
2. Առկա են եղել հիմքեր «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցությանը տրամադրելու պետական նպատակային ֆինանսավորման կեսը՝ Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերով սահմանված դրույթներին համապատասխանը, որը կազմում՝ 30,500,000 ՀՀ դրամ: Հարկ է նշել, որ «Հայաստան» խմբակցության N 25/12/23 որոշման հիման վրա 2023 թվականին տրամադրվող պետական նպատակային ֆինանսավորման գումարը բաշխվել է «Հայաստան» դաշինքի կազմում ընդգրկված կուսակցությունների միջև, որի արդյունքում «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցությանը հասանելիք պետական նպատակային ֆինանսավորման մասը կազմել է 61,000,000 ՀՀ դրամ:
3. Առկա են եղել հիմքեր «Վերածնվող Հայաստան» կուսակցությանը տրամադրելու պետական նպատակային ֆինանսավորման մեկ քառորդ մասը՝ Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված դրույթներին համապատասխանը, որը կազմում՝ 1,072,000 ՀՀ դրամ: Հարկ է նշել, որ «Հայաստան» խմբակցության N 25/12/23 որոշման հիման վրա 2023 թվականին տրամադրվող պետական նպատակային ֆինանսավորման գումարը բաշխվել է «Հայաստան» դաշինքի կազմում ընդգրկված կուսակցությունների միջև, որի արդյունքում «Վերածնվող Հայաստան» կուսակցությանը հասանելիք պետական նպատակային ֆինանսավորման մասը կազմել է 4,288,000 ՀՀ դրամ:
4. Առկա են եղել հիմքեր «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը տրամադրելու պետական նպատակային ֆինանսավորման երեք քառորդը՝ Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-9-րդ մասերով սահմանված դրույթներին համապատասխանը, որը կազմում՝ 15,133,200 ՀՀ դրամ:
5. Առկա են եղել հիմքեր «Հանրապետություն» կուսակցությանը տրամադրելու պետական նպատակային ֆինանսավորումն ամբողջությամբ՝ Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-9-րդ մասերով սահմանված դրույթներին համապատասխանը, որը կազմում՝ 15,503,200 ՀՀ դրամ:

Վերոգրյալի վերաբերյալ ամփոփ տվյալները ներկայացված են ստորև.



Ինչ վերաբերում է պետական նպատակային ֆինանսավորման միջոցների օգտագործմանը, ապա 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունվել է *««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին»* սահմանադրական օրենքը, որի 1-ին հոդվածով փոփոխություն է կատարվել *««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»* 2020 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՕ-1-Ն սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասում, որով սահմանվել է, որ *կուսակցությունների պետական նպատակային ֆինանսավորումը 2022 և 2023 թվականների համար տրամադրվում է ամբողջությամբ՝ առանց Օրենքի 26-րդ հոդվածի 7-9-րդ մասերով սահմանված պահանջների ապահովման*: Նման պայմաններում, պետական ֆինանսավորումը նվազեցնելու վերաբերյալ կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքները որևէ կերպ չեն անդրադառնում կուսակցությունների 2023 թվականի համար տրամադրված պետական նպատակային ֆինանսավորման միջոցների վրա:

Հարկ է նշել, որ կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման շրջանակներում նվիրատվություն կատարելու դեպքերի առթիվ Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության բաժնի կողմից, ինչպես նաև մամուլի մի շարք

հրապարակումների հիման վրա, ուսումնասիրվել են նաև այն անձանց հայտարարագրերը, որոնք նվիրատվություն են կատարել կուսակցությանը և, միաժամանակ, հանդիսացել են «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարատու, պարզելու, թե արդյո՞ք կուսակցության տարեկան հաշվետվությամբ ներկայացված չափով կուսակցությանը նվիրատվություն կատարելը հիմնավորվում է այդ անձանց և իրենց ընտանիքի անդամների հայտարարագրած համապատասխան տվյալներով:

Ուսումնասիրության արդյունքում, բոլոր այն դեպքերում, երբ նվիրատվությունների արժանահավատության առնչությամբ առերևույթ առկա են եղել կասկածներ, այդ անձանց ուղարկվել են գրություններ՝ կատարված նվիրատվությունների՝ օրինական եկամուտներով և դրամական միջոցներով հիմնավորված լինելը հավաստող տեղեկություններ և փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային հաշիվների քաղվածքներ ներկայացնելու պահանջով: Հանձնաժողովի կողմից նման գրություններ են ուղարկվել 10 նվիրատուների, որոնց վերաբերյալ մանրամասները ներկայացված են 3.1 ենթակետում:

Միաժամանակ, 2024 թվականի սեպտեմբերի 18-ին Հանձնաժողովի նիստի քննարկման արդյունքում որոշվել է, որ նվիրատուների կողմից նվիրատվությունների՝ օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափը մինչև 100,000 ՀՀ դրամի չափով գերազանցելու դեպքերով վարույթ չնախաձեռնել և նման իրավախախտումները դիտարկել նվազ նշանակություն ունեցող: Այս հիմքով 15 նվիրատուների նկատմամբ վարչական իրավախատման վերաբերյալ վարույթ չի նախաձեռնվել, միաժամանակ այդ անձանց ուղարկվել են գրություններ՝ իրազեկելով գրծող կարգավորումների և սահմանաչափերի մասին:

Հարկ է նշել, որ 2023 թվականի հաշվետու տարվա ընթացքում կուսակցության մուտքերը կամ ելքերն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգհազարապատիկը գերազանցելու հիմքով աուդիտի են ենթարկվել նաև 3 կուսակցությունների տարեկան հաշվետվություններ, դրանք են՝ «Հայաստանի հանրապետական», «Հայրենիք» և «Ապրելու երկիր» կուսակցությունները: Պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգումն ավարտելուց հետո, նախաձեռնվել է նաև վերոնշյալ 3 կուսակցությունների՝ 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման գործընթացը, մասնավորապես՝ անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր ստանալու նպատակով համապատասխան գրություններ են ուղարկվել ինչպես կուսակցություններին, այնպես էլ համապատասխան պետական մարմիններին և ստացված տեղեկությունները համադրվել են կուսակցությունների կողմից հրապարակված և Հանձնաժողով ներկայացված տարեկան հաշվետվությունների

հետ, միաժամանակ հիմք ընդունելով նաև աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունները:

Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ «Հայաստանի հանրապետական», «Հայրենիք» և «Ապրելու երկիր» կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման գործընթացն ընթացքի մեջ է:

4.2 Կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների հրապարակում և ներկայացում

«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մայիսի 31-ից ոչ ուշ, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը (այսուհետ՝ տարեկան հաշվետվություն), իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը:*

Կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվություններն օրենքով սահմանված կարգով և ժամկետում հրապարակելու, ինչպես նաև Հանձնաժողով ներկայացնելու՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված պահանջների պահպանվածությունը ուսումնասիրելու արդյունքում 2023 թվականի տարեկան հաշվետվություններն օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակած կամ Հանձնաժողով չներկայացրած 32 կուսակցությունների պաշտոնատար անձանց նկատմամբ նախաձեռնվել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներ: 32 կուսակցությունների պաշտոնատար անձանցից 21-ի նկատմամբ կայացվել են վարչական տույժ նշանակելու մասին որոշումներ, իսկ 11 կուսակցությունների պաշտոնատար անձանց նկատմամբ կայացվել են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին որոշումներ, ստորև նշված հիմքերից առնվազն երկուսի միաժամանակյա համադրությամբ՝ հետևյալ հիմքերով՝

1. Հակահիրավական վարքագիծը վարույթի մասնակցի կողմից դրսևորվել է առաջին անգամ:

2. Մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ավարտը Հանձնաժողով են ներկայացվել կուսակցությունների տարեկան հաշվետվությունները և դրանց հրապարակման փաստը վկայող ապացույցները։

3. 2023 թվականի ընթացքում կուսակցությունները ընթացիկ ֆինանսական գործունեություն չեն ծավալել:

Մեկ այլ վարույթի կարճման հիմք է հանդիսացել, բացի վերոնշյալ փաստական հանգամանքներից նաև այն հանգամանքը, որ կուսակցության պաշտոնատար անձի կողմից ներկայացվել է ապացույց առ այն, որ կուսակցությունը գտնվում է լուծարման գործընթացում:

Մեկ այլ վարույթով էլ Հանձնաժողովը վարույթի կարճման համար էական է գնահատել հետևյալ հանգամանքների միաժամանակյա առկայությունը՝ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ավարտը ներկայացվել են Տարեկան հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը, վարույթի մասնակցի կողմից մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ավարտը ներկայացված Տարեկան հաշվետվությամբ ներկայացված տվյալների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում Կուսակցությունը ընթացիկ ֆինանսական գործունեություն չի ծավալել, միաժամանակ, թեև Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերով քննության իրավասությունը Հանձնաժողովին վերապահելուց հետո, նշված դրույթը խախտված լինելու առնչությամբ տվյալ հակահիրավական վարքագիծը վարույթի մասնակցի կողմից չի դրսևորվել առաջին անգամ, այնուամենայնիվ Հանձնաժողովն էական է համարել վարույթի մասնակցի կողմից Կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվությունը օրենքով սահմանված ժամկետում հրապարակելուն և դա Հանձնաժողով ներկայացնելուն ուղղված գործողությունները, հաշվի առնելով պարտավորությունների կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքները, մասնավորապես՝ Հանձնաժողովն ուսումնասիրել է վարույթի մասնակցի կողմից ներկայացված բժշկական փաստաթղթերը, որոնցով հավաստվել է, որ Կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվությունը Հանձնաժողով չներկայացնելը օրենքով սահմանված ժամկետում պայմանավորված է եղել վարույթի մասնակցի կամքից անկախ հանգամանքներից՝ առողջական խնդիրներով պայմանավորված բժշկական հաստատություն տեղափոխվելու պատճառով:

Միաժամանակ, վարչական տույժի կիրառումից հետո 21 կուսակցություններից 17-ը Հանձնաժողով են ներկայացրել կուսակցության տարեկան հաշվետվությունները, իսկ 4-ը չեն ներկայացրել։ Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ նշված 4 դեպքերում վարչական տույժ կիրառելու մասին որոշումները պատվիրակված նամակով ուղարկվել են կուսակցությունների

պաշտոնատար անձանց և ուղարկելու օրվանից երկշաբաթյա ժամկետում հետադարձ ծանուցումը չստանալու հանգամանքով պայմանավորված՝ 4 կուսակցությունների պաշտոնատար անձանց նկատմամբ կայացված վարչական տույժ կիրառելու մասին որոշումները տեղադրվել են Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի կարգավորումները։ :

Նախաձեռնված վարչական իրավախախտման վարույթների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից կայացված վերջնական որոշումները հրապարակված են Հանձնաժողովի պաշտոնական կայքէջի «Վարույթներ» բաժնի «Հանձնաժողովի որոշումներ» ենթաբաժնում։

V. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

5.1 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացված վարույթների վիճակագրական արդյունք

Հանձնաժողովն օրենսդրությամբ սահմանված հիմքերով և կարգով **հաշվետու ժամանակատվածում** իրականացրել է՝

- Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված՝

- հայտարարագրմանն առնչվող վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթներ,

- շահերի բախման վերաբերյալ կարգավորումները խախտելու վերաբերյալ վարույթներ,

- կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման հետ կապված իրավախախտումների վերաբերյալ վարույթներ,

- կուսակցությանն օրենքով սահմանված նվիրատվությունները կամ կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելու հետ կապված իրավախախտումների վերաբերյալ վարույթներ,

- կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու հետ կապված իրավախախտումների վերաբերյալ վարույթներ,

- նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելու հետ կապված իրավախախտումների վերաբերյալ վարույթներ

- իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու հետ կապված իրավախախտումների վերաբերյալ վարույթներ։

- «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված կարգապահական վարույթ։

- «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված առերևույթ խախտումների վերաբերյալ հետևյալ վարույթները՝

  - անհամատեղելիության պահանջների,
  - շահերի բախման դեպքի,
  - վարքագծի կանոնների։

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից իրականացվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված խախտումների հիմքով թվով 388 վարույթներ, որոնց համար հիմք են հանդիսացել Վարչական իրավախախատումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, 169.31-րդ հոդվածի 1-ին մասով, 189.13-րդ հոդվածի 1-ին մասով, 189.15-րդ հոդվածի 3-րդ մասով, 189.16-րդ հոդվածի 1-ին մասով, 189.20-րդ հոդվածի 1-ին մասով, 189.21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավախախտումները:

Հարկ է նշել, որ նշված ցուցանիշը գերազանցում է 2023 թվականի երկրորդ կիսամյակում իրականացված վարույթների թիվն ավելի քան 5 անգամ՝ 72 վարույթի համեմատությամբ եզրափակելով 388 վարույթ։

Նշված վարույթներով իրականացված գործերի քննության արդյունքում Հանձնաժողովը կիրառել է թվով **66 տույժ**, որից **25**-ը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, այն է՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված

հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու, **1**-ը՝ 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի հատկանիշներով, այն է՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու, իսկ **5**-ը՝ 169.31-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, այն է՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելու հատկանիշով, **21**-ը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 189.13-րդ հոդվածով սահմանված՝ Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին պետական լիազոր մարմին հաշվետվություն չներկայացնելու կամ դա չհրապարակելու հիման վրա, **4**-ը՝ Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, այն է՝ Նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելու հատկանիշներով, **6-ը**՝ Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, այն է՝ իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու հատկանիշներով, **1-ը**՝ Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, այն է՝ իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու հատկանիշներով, **3-ը**՝ Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, այն է՝ Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու հատկանիշներով:

Ինչ վերաբերում է հաշվետու ժամանակահատվածում «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված հայտարարագրերը չներկայացնելու խախտումների կապակցությամբ իրականացված վարույթների արդյունքում վարչական իրավախախտումների վերաբերյալ կարճված գործերին, ապա նշված ժամանակահատվածում թվով **298** գործերով համապատասխան հայտարարատու անձանց հայտարարվել է բանավոր դիտողություն՝ կարճելով գործերի վարույթը արարքի նվազ նշանակության հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում Օրենսգքրի 169.28-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված թվով **2** վարույթներ կարճվել են՝ դեպքի բացակայության հիմքով:

Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ թվով **1 գործի** (*Ա. Դ.*) քննության արդյունքում Հանձնաժողովի կողմից որոշում չի կայացվել: Տվյալ գործի հանգամանքների քննարկման վերաբերյալ նիստի արձանագրությունը հրապարակված է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում հետևյալ հղումով: Նշված հիմքով թվով **1** վարույթ եզրափակվել է բանավոր դիտողություն հայտարարելով և արարքի նվազ նշանակության հիմքով գործի վարույթը կարճելու մասին որոշման ընդունմամբ:Հանձնաժողովի կողմից Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով իրականացվել են թվով 32 վարույթներ: Նշված վարչական

իրավախախտումների վերաբերյալ գործերից թվով 21-ի պարագայում վարույթները եզրափակվել են կուսակցությունների պատասխանատու պաշտոնատար անձանց նկատմամբ վարչական տույժերի կիրառման մասին որոշումների ընդունմամբ, իսկ 9-ը՝ վարույթը կարճելու մասին և բանավոր դիտողություն հայտարարելու մասին որոշումների ընդունմամբ: Հանձնաժողովի կողմից Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված, այն է՝ կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելու հիմքով հաշվետու ժամանակահատվածում հարուցվել և եզրափակվել են թվով 2 վարույթներ: Նշված վարույթներից մեկը եզրափակվել է վարույթի կարճմամբ արարքի նվազ նշանակության հիմքով, որի արդյունքում կուսակցության պատասխանատու պաշտոնատար անձն ազատվել է պատասխանատվությունից և վերջինիս օրենքով սահմանված կարգով հայտարարվել է բանավոր դիտողություն, իսկ1-ի պարագայում վարույթը եզրափակվել է կուսակցության պատասխանատու պաշտոնատար անձի նկատմամբ վարչական տույժի կիրառման մասին որոշման ընդունմամբ:

Հանձնաժողովի կողմից Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվածհիմքով հաշվետու ժամանակահատվածում հարուցվել և եզրափակվել են թվով 7 վարույթներ: Նշված վարույթներից թվով 4-ը եզրափակվել են վարույթը կարճելու մասին և բանավոր դիտողություն հայտարարելու մասին որոշումների ընդունմամբ՝ արարքի նվազ նշանակության հիմքով:

Նշված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերից թվով 3-ի պարագայում վարույթները եզրափակվել են կուսակցության պատասխանատու պաշտոնատար անձանց նկատմամբ վարչական տույժի (տուգանքի) կիրառման մասին որոշումների ընդունմամբ:

Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվածհիմքով Հանձնաժողովի կողմից հաշվետու ժամանակահատվածում հարուցվել են թվով 5 վարույթներ, որոնցից եզրափակվել են թվով 4-ը, իսկ 1-ի պարագայում վարույթը կասեցվել և ուղարկվել է Գլխավոր դատախազություն: Նշված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերից թվով 4-ի պարագայում վարույթները եզրափակվել են ֆիզիկական անձանց նկատմամբ վարչական տույժերի կիրառման մասին որոշումների ընդունմամբ:

Հանձնաժողովի կողմից Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով հաշվետու ժամանակահատվածում հարուցվել և եզրափակվել են թվով 11 վարույթներ: Նշված վարույթներից թվով 5-ը եզրափակվել են վարույթը կարճելու և բանավոր դիտողություն հայտարարելու վերաբերյալ որոշումների ընդունմամբ՝ արարքի նվազ նշանակության հիմքով, իսկ 6-ի պարագայում վարույթները եզրափակվել են իրավաբանական անձանց գործադիր մարմնի ղեկավարների նկատմամբ վարչական տույժերի կիրառման մասին որոշումների ընդունմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից իրականացվել են նաև ՎԻՎ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ թվով 5 վարույթներ:

Վերոնշյալ հինգ վարույթների իրականացման առիթ են հանդիսացել լրատվամիջոցների հրապարակումները:

Նշված հիմքով հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովն ընդունել է «Վարչական տույժ կիրառելու մասին» թվով 5 որոշումներ՝ 300,000 ՀՀ դրամի չափով:

Անհամատեղելիության պահանջների, շահերի բախման դեպքերի, վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ, ինչպես նաև կարգապահական վարույթներ

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից հարուցվել են թվով 4 համապատասխան վարույթներ, որոնցից 3-ը՝ վարքագծի կանոնների առերևույթ խախտման հիմքով, 1-ը՝ շահերի բախման առերևույթ դեպքի հիմքով: Վարքագծի կանոնների առերևույթ խախտման հիմքով հարուցված վարույթներից 1-ը եզրափակվել է հաշվետու ժամանակահատվածում՝ խախտման առկայության մասին եզրակացության ընդունմամբ (հղումը՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/10/00-26.pdf), 1-ի վարույթը կասեցվել է և գործի նյութերն ուղարկվել են Գլխավոր դատախազություն, իսկ 1-ը՝ գտնվում է քննության ընթացիկ փուլում: Ինչ վերաբերում է շահերի բախման առերևույթ հիմքով հարուցված վարույթին, ապա հաշվետու ժամանակահատվածում այն եզրափակվել է վարույթը կարճելու մասին որոշման ընդունմամբ

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից իրականացվել է թվով 1 կարգապահական վարույթ, ինչպես նաև եզրափակվել են թվով 2 համապատասխան վարույթներ, որոնք հարուցվել էին հաշվետու ժամանակահատվածին նախորդող ժամանակահատվածում:

Մասնավորապես, եզրափակվել են վարքագծի կանոնների խախտման հիմքով համայնքային ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ հարուցված թվով 1 վարույթ (հղումը՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/09/1709.pdf) և Ազգային ժողովի պատգամավորի օգնականի նկատմամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցված թվով 1 վարույթ (հղումը՝ http://surl.li/huknai) խախտման առկայության մասին եզրակացությունների ընդունմամբ:

Նշված վարույթները հարուցվել էին լրատվամիջոցի հրապարակման հիման վրա:

5.2 Դատական ներկայացուցչության ապահովում

Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է Հանձնաժողովի շահերի ներկայացումը դատական ատյաններում: Նշված գործառույթի շրջանակում, մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ներկայացվել են Հանձնաժողովի շահերը դատական ատյաններում:

1. Հօգուտ Հանձնաժողովի կայացվել են գործն ըստ էության լուծող դատական ակտեր: Մասնավորապես, ուժի մեջ է մտել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից Հանձնաժողովի օգտին կայացված՝ թիվ ՎԴ/7946/05/22 վարչական գործով որոշումը: Նշված վարչական գործը վերաբերում էր հայտարարագիրը լրացնելու ժամկետի բաց թողումը հարգելի համարելու և 24.10.2022 թվականի թիվ ՎԻՎ/68/22 որոշումը վերացնելու պահանջներին: Վարչական դատարանը մերժել էր Հանձնաժողովի դեմ ներկայացված հայցը, իսկ Վերաքննիչ վարչական դատարանը վճիռը թողել է անփոփոխ՝ Վարչական դատարանի վճիռը համարելով հիմնավոր:

2. Մեկ այլ՝ թիվ ՎԴ/5087/05/24 վարչական գործով կրկին ՀՀ վարչական դատարանը կայացրել է ի օգուտ Հանձնաժողովի վարչական ակտ՝ մերժելով Հանձնաժողովի դեմ ներկայացված հայցը: Նշված վարչական գործը, մասնավորապես վերաբերում էր Հանձնաժողովի՝ վարչական տույժ կիրառելու մասին թիվ ՎԻՎ 65/2024 որոշումն անվավեր ճանաչելու պահանջին: Հայցվոր՝ Վայք համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանը հայցի հիմքում դրել էր այն հանգամանքը, որ Հանձնաժողովը, ընդունելով եզրակացություն, վերջինիս վրա դրել էր ոչ իրավաչափ պարտականություն: Վարչական դատարանը, հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից ներկայացված փաստարկները, ինչպես նաև վարչական վարույթի նյութերը, դատական ակտում արձանագրել է, որ հայցադիմումով հայցվորի կողմից վիճարկվող վարչական ակտի անվավերության հիմքում դրված փաստարկները հերքվում են վարչական գործում առկա և դատարանի կողմից դատական ակտով արձանագրված փաստերով, ուստի մերժել է հայցը:

3. Մեկ այլ՝ թիվ ՎԴ/4977/05/24 վարչական գործով ևս ՀՀ վարչական դատարանի կողմից կայացվել է հօգուտ Հանձնաժողովի դատական ակտ: Մասնավորապես, մերժվել է հայցվոր Հայկ Ալումյանի հայցն ընդդեմ Հանձնաժողովի՝ Հանձնաժողովի ՎԻՎ/63/2024 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցապահանջը: Հայցվորը գտել էր, որ ինքը՝որպես անհատ ձեռնարկատեր, օրենքով սահմանված կարգով, ամեն եռամսյակը մեկ անգամ

հարկային մարմնին ներկայացնում է իր եկամուտների վերաբերյալ հայտարարագիր,անշարժ գույքի, ինչպես նաև՝ ավտոմեքենայի վերաբերյալ տվյալները գրանցված են պետության կողմից, որի վերաբերյալ իրեն տրամադրվել են համապատասխան վկայականներ: 2021-2022 թվականներին օրենքի գործողությունը տարածվում էր հանրային իշխանության մարմինների վրա, ինչպես նաև հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վրա (այլ կերպ ասած՝ չէր տարածվում հանրային իշխանության մարմին, ինչպես նաև հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձ չհանդիսացող անձանց վրա): Բացի այդ, հայտարարագիր ներկայացնելու ժամկետը սահմանված է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով: Մինչդեռ նշված նորմը վերաբերում է միայն հայտարարատու պաշտոնատար անձանց: Հայցվորը նշել էր նաև, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը հստակորեն տարանջատում է «հայտարարատու պաշտոնատար անձ» և «հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամ» հասկացությունները, ավելին, երկրորդ հասկացությունը պարզաբանելիս օգտագործում է առաջին հասկացությունը, ինչը նշանակում է, որ դրանք a priori չեն կարող նույնական լինել: Միաժամանակ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը հայտարարագիր ներկայացնելու ժամկետ է սահմանում հայտարարատու պաշտոնատար անձանց համար, սակայն հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի համար այդպիսի ժամկետ չի սահմանում:

Նշված վարչական գործով ՀՀ վարչական դատարանը գտել է, որ հայցը ենթակա է մերժման: Դատարանը, վերլուծելով վերաբերելի օրենսդրական դրույթները, 34-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ,11-րդ մասերի, և դրանք համադրելով վարչական գործի փաստերի հետ՝ արձանագրել է, որ հայցվոր Հայկ Ալումյանը, հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամ և ըստ այդմ՝ գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ, 2021 թվականի գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի տարեկան հայտարարագիրը օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել, իսկ 10.04.2024 թվականին կայացվել է վիճարկվող որոշումը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված ժամկետի պահպանմամբ:

Նման պայմաններում դատարանը եզրահանգել է, որ վարչական իրավախախտումն իրավաչափորեն է վերագրվել Հայցվորին, ինչը նշանակում է, որ սույն դեպքում առկա չեն վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով սահմանված հիմքերը:

Ամբողջ վերը նշվածի հիման վրա դատարանը գտել է, որ վիճարկվող որոշումն իրավաչափ է, հետևաբար հայցն անհիմն է և ենթակա մերժման: Նշված վճիռը բողոքարկվել է Հայցվորի կողմից և այժմ գտնվում է քննության փուլում: Հատկանշական է, որ Հայկ Ալումյանի կողմից Հանձնաժողովի դեմ ներկայացված նույնական իրավական հիմքերով հայցը բավարարվել է Վարչական դատարանի մեկ այլ նախագահող դատավորի կողմից, որն այժմ գտնվում է բողոքարկման փուլում: Այսինքն միևնույն հիմքերի պայմաններում Վարչական դատարանի կողմից կայացվել են միմյանց հակասող վճիռներ:

5.3 Այլ իրավական ապահովման աշխատանքներ

Բացի դատական ներկայացուցչությունից, հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից ապահովվել են նաև համապատասխան հիմքերի առկայությամբ՝ վարույթների իրականացման ընթացքում առերևույթ հանցագործության դեպքերով՝ Գլխավոր դատախազություն հաղորդումների ներկայացումը, որոշ դեպքերում՝ հաղորդման արդյունքներով կայացված որոշումների բողոքարկումն ինչպես վերադասության կարգով, այնպես էլ դատական կարգով:

Որպես հաշվետու ժամանակահատվածի արդյունք, հարկ է նաև նշել, որ Հանձնաժողովի կողմից նախկինում ներկայացված՝ հանցագործության մասին հաղորդման հիման վրա հարուցված քրեական վարույթի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից ներկայացված՝ հանցագործության մասին հաղորդման սուբյեկտ հանդիսացող նախկին պաշտոնատար անձի կողմից, որպես պետությանը պատճառված վնաս, հատուցվել է 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ՝ իր կողմից պետությանը պատճառված վնասը:

VI. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

6.1 Բարեվարքության եզրակացությունների և դրանց հիման վրա կատարված նշանակումների վերաբերյալ տեղեկություններ

Հանձնաժողովը 2024 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում պետական պաշտոններում նշանակվել հավակնող անձանց (թեկնածուների) բարեվարքության ուսումնասիրության լիազորության շրջանակներում իրականացրել է թվով 72 անձանց բարեվարքության ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ են ներկայացվել նույնքան խորհրդատվական բնույթի եզրակացություններ:

Հարկ է նշել, որ բարեվարքության ուսումնասիրության արդյունքում Գլխավոր դատախազություն է ներկայացվել թվով 1 հաղորդում:

Ներկայացված 72 եզրակացություններից՝ 61-ը եղել են դրական, 11-ը՝ բացասական:

Ներկայացված եզրակացություններից՝

- 15-ը՝ **Վճռաբեկ դատարանում** դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց,
- 21-ը՝ **դատախազների թեկնածությունների ցուցակում** ընդգրկվել հավակնող անձանց,

- 21-ը՝ **դատախազների առաջխաղացման ցուցակում** ընդգրկվել հավակնող դատախազներին,
- 9-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի **օպերատիվ-հետախուզական** գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող անձանց,
- 3-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի **ինքնավար պաշտոնները** համալրել հավակնող անձանց,
- 1-ը՝ Քննչական կոմիտեի **նախագահի** թեկնածու,
- 2-ը՝ Քննչական կոմիտեի **նախագահի տեղակալի** թեկնածու:



Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 15 եզրակացություններից 11-ը եղել են դրական, թեկնածուներից 5-ն ընդգրկվել են ցուցակում, որից 1 թեկնածու նշանակվել է պաշտոնում, 4-ը՝ բացասական, որից ցուցակում ընդգրկվել են 2-ը, այնուհետև 1 թեկնածու նշանակվել է պաշտոնում:



Դատախազների թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 21 եզրակացություններից 18-ը եղել են դրական, որից 4-ը նշանակվել են պաշտոնում, 3-ը՝ բացասական, հաշվետվության ներկայացման պահին նշանակման վերաբերյալ տվյալներ առկա չեն։



Դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 21 եզրակացություններից 18-ը եղել են դրական, թվով 10 թեկնածու նշանակվել է պաշտոնում, 3-ը՝ բացասական, հաշվետվության ներկայացման պահին նշանակման վերաբերյալ տվյալներ չկան:





Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 3

եզրակացությունները եղել են դրական, 3-ն էլ նշանակվել են համապատասխան պաշտոններում:



Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 9 եզրակացություններից 8-ը եղել են դրական, բոլոր թեկնածուները նշանակվել պաշտոնում, 1-ը՝ բացասական, թեկնածուն չի ընդգրկվել ցուցակում:



Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բարեվարքության վերաբերյալ եզրակացությունները հրապարկման ենթակա չեն, որոշ պաշտոնների վերաբերյալ վիճակագրական տվյալներ չեն կարող հրապարակվել՝ անձանց հնարավոր նույնականացումը բացառելու նպատակով:

Բացի այդ հարկ է նշել նաև, որ շուրջ 300 անձի բարեվարքության ուսումնասիրության գործընթացի (այդ թվում՝ ընթացիկ ուսումնասիրության) մեկնարկը տրվել է 2024 թվականին, որի արդյունքների ամփոփումը կիրականացվի 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում:

6.2 Բարեվարքության ուսումնասիրության նոր կառուցակարգերի ներդրումն ու կիրարկումը

Հատկանշական է, որ 2024 թվականի ապրիլի 11-ին Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ

կատարելու մասին», «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների շրջանակներում ներդրվեց բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության գործընթացը:

Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության գործընթացի կարևորությունը կայանում է նրանում, որ բացի նրանից, որ գործող պաշտոնատար անձանց համար պարտադիր բարեվարքության ուսումնասիրության գործընթացի նախատեսումը համակարգերի համար կարող է հանդիսանալ ինքնամաքրման կարևորագույն մեխանիզմ, այլև, ի տարբերություն գործող բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության, Հանձնաժողովի կողմից տրվող եզրակացության տեսակից կախված այն կարող առաջացնել որոշակի հետևանքներ՝ ընդհուպ մինչև պաշտոնից ազատում: Մասնավորապես, նոր ընդունված իրավակարգավորումների համատեքստում Հանձնաժողովին է վերապահվել դատավորների բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքում, բացառապես գույքային դրության հիմքով, խորհրդատվական բնույթի բացասական եզրակացություն ներկայացնելու դեպքում կարգապահական վարույթ հարուցելու, այնուհետև վարույթի ընթացքում ձեռք բերված նյութերը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդության հետ Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնելու իրավասություն: Մյուս պաշտոնների դեպքում իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի համար սահմանվել է պարտականություն հարուցելու կարգապահական վարույթ կամ ծառայողական քննություն այն բոլոր դեպքերում, երբ Հանձնաժողովի կողմից կտրամադրվի խորհրդատվական բնույթի բացասական եզրակացություն:

Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության մեկնարկը տրվեց Քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանցով: Նշված թիրախային խմբի առաջնահերթությունը պայմանավորված էր նաև «Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների իրականացմանը. Փուլ II»-ի («Support to Justice Sector Reforms in Armenia: Phase II») ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսավորման համաձայնագրով նախատեսված դրույթով առ այն, որ մինչև 2024 թվականի ավարտը Քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 14 տոկոսը պետք է ենթարկվեին բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության:

Վերը նշվածի համատեքստում 2024 թվականի սեպտեմբերից մինչև 2024 թվականի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում Հանձնաժողովն իրականացրել է Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող թվով **119** անձանց բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն (Քննչական կոմիտեի նախագահի հրամանի համաձայն՝ որպես առաջնահերթություն ընտրվել

էին այն քննիչները, որոնք ենթակա էին ատեստավորման, և որոնք հավակնում էին ընդգրկվել առաջխաղացման ցուցակներում), ինչի արդյունքում Քննչական կոմիտե են ներկայացվել նույնքան խորհրդատվական բնույթի եզրակացություններ:



Ներկայացված 119 եզրակացություններից՝ 100-ը եղել են դրական, 14-ը՝ բացասական, թվով 5 անձի վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված:

Հանձնաժողովի կողմից տրված բացասական եզրակացությունների հիման վրա իրականացված ծառայողական քննությունների և դրանց արդյունքների վերաբերյալ տվյալները դեռևս ամփոփված չեն՝ հաշվի առնելով իրավասու մարմնում իրականացվող գործընթացների (ծառայողական քննություն, կարգապահական վարույթ) տևողությունը:

6.3 Բարեվարքության ուսումնասիրության գործընթացի զարգացման և առաջընթացի արդյունքները

2024 թվականի ապրիլի 11-ին Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված և մայիսի 17-ին ուժի մեջ մտած՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և

փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքներով նախատեսված իրավակարգավորումների շրջանակներում Հանձնաժողովը 2024 թվականի երկրորդ կիսամյակի սկզբին ձեռնամուխ եղավ բարեվարքության ուսումնասիրության գործընթացում էական նշանակություն ունեցող մի շարք իրավական ակտերի ընդունմանը և վերը նշված օրենքներով նոր ներդրված կառուցակարգերի կիրարկմանը:

Մասնավորապես, 2024 թվականի հուլիսի 19-ին Հանձնաժողովի կողմից ընդունվեց «Բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի և բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկի ձևանմուշները և դրանցում ներառվող տվյալների մանրամասները սահմանելու մասին» թիվ 04-Ն որոշումը, որում մանրամասն ներկայացվեցին Օրենքի համապատասխան իրավակարգավորումներից բխող և բարեվարքության ուսումնասիրության գործընթացի շրջանակներում պահանջվող տվյալները: Բացի այդ, հիմք ընդունելով Օրենքի պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով Հանձնաժողովի նախկինում ունեցած պրակտիկան առ այն, որ բարեվարքության հարցաթերթիկ ներկայացնող անձինք գործընթացի շրջանակներում բախվում են լրացման կարգի հետ կապված ինչպես տեխնիկական, այնպես էլ բովանդակային մի շարք խնդիրների՝ Հանձնաժողովը սահմանեց նաև իր կողմից հաստատված հարցաթերթիկների լրացման և ներկայացման կարգը (տես՝ Հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 19-ի «Բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի և բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկի լրացման և ներկայացման կարգը սահմանելու մասին» թիվ 04-Լ որոշում): Որոշման 2 հավելվածներով մանրամասն անդրադարձ է կատարվել հարցաթերթիկների բոլոր գլուխներին և դրանցում ներառվող տեղեկություններին:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովի վերը նշված որոշումների հրապարակումն ապահովված է ինչպես պաշտոնական տեղեկագրում (Հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 19-ի «Բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի և բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկի ձևանմուշները և դրանցում ներառվող տվյալների մանրամասները սահմանելու մասին» թիվ 04-Ն որոշում), այնպես էլ Հանձնաժողովի պաշտոնական կայքէջի համապատասխան բաժնում: Հատկանշական է, որ վերը նշված օրենքների ընդունման շրջանակներում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի

մասին» օրենքի 26.1-ին հոդվածով հստակ ամրագրվեցին այն սկզբունքները, որոնց առկայության կամ բացակայության պայմաններում Հանձնաժողովը հանգում է թեկնածուի (անձի) բարեվարքության վերաբերյալ դրական կամ բացասական բնույթի եզրակացությանը: Միաժամանակ, Հանձնաժողովի կողմից նախկինում տրվող «դրական վերապահումով» բնույթի եզրակացություններն օրենքով չնախատեսելը գործնականում Հանձնաժողովի համար առաջացնում է որոշակի խոչընդոտներ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է այն բոլոր դեպքերին, երբ առկա տեղեկությունները բավարար չեն լինում անձի/թեկնածուի բարեվարքության վերաբերյալ բացասական բնույթի եզրակացության ներկայացման համար, բայց նաև դրանց առկայության պայմաններում հնարավոր չէ միանշանակ հանգել բարեվարքության վերաբերյալ դրական եզրակացության:

Ի ապահովումն վերը նշված սկզբունքների, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից նախկինում տրամադրված եզրակացությունների և դրանցում առկա գնահատականների և արձանագրումների հաշվառմամբ կազմվեց և Հանձնաժողովի կողմից հաստատվեց բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության և գնահատման մեթոդաբանությունը (տե՛ս Հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի թիվ 05-Լ որոշում): Մեթոդաբանության հաստատմամբ և հրապարակմամբ օբյեկտիվ իրականության մեջ կրճատվում է Հանձնաժողովի՝ որպես կոլեգիալ մարմնի կողմից բարեվարքության ուսումնասիրության արդյունքում տրվող եզրակացությունների կազմման փուլում հայեցողական լիազորությունների իրականացումը: Ավելին, մեթոդաբանության հաստատմամբ անձանց համար, ովքեր հավակնում են նշանակվել պետական այնպիսի պաշտոններում, որպիսի գործընթացում առկա է բարեվարքության ուսումնասիրություն անցնելու պարտադիր պահանջ՝ մեթոդաբանություն առկա տվյալների և տեղեկությունների համատեքստում կարող է կանխատեսելի լինել իրենց վերաբերելի տվյալների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի կողմից տրվող եզրակացությունը:

Միաժամանակ, Հանձնաժողովին վերապահված վերը նշված լիազորությունների շրջանակներում հարկ ենք համարում անդրադառնալ նաև իրավասու ստորաբաժանման աշխատակիցների թվաքանակի ավելացմանը: Մասնավորապես, բարեվարքության ուսումնասիրության ենթակա անձանց թվի աննախադեպ ավելացման հանգամանքով պայմանավորված՝ Կառավարության 2024 թվականի օգոստոսի 8-ի թիվ 1210-Ա որոշմամբ վարչության աշխատակիցների թվաքանակն ավելացվեց 5-ով, իսկ հաստիքները Հանձնաժողովի կողմից օրենքով սահմանված կարգով համալրվեցին 2024 թվականի նոյեմբեր ամսին:

VII. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԶՍՊՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2024 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում Հանձնաժողովն ամփոփել է պետական մասնակցությամբ մեկ ընկերության և պետական (համայնքային) ոչ առևտրային երկու կազմակերպությունների կողմից՝ Հանձնաժողովի և ԵՄ թվինինգ ծրագրի կողմից ձևավորված աջակցող թիմի հետ համատեղ 2023 թվականին իրականացված կոռուպցիոն ռիսկերի փորձնական գնահատման արդյունքները: Քանի որ գնահատման արդյունքները ցույց են տվել, որ բացահայտված մի շարք խնդիրներ համակարգային լուծումներ են պահանջում, ինչպես նաև առկա է նշված կազմակերպություններում բարեվարքության և հակակոռուպցիոն համապատասխանության միջազգային ստանդարտների ներդրման անհրաժեշտություն, Հանձնաժողովը փորձնական գնահատման արդյունքները ներկայացրել է զեկույցի միջոցով՝ անդրադառնալով նաև ոլորտում առկա բացերին և միջազգային հիմնական ստանդարտներին: Զեկույցը հասանելի է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ հետևյալ հղմամբ. https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/12/CRA_REPORT-26.12.2024.pdf :

2024 թվականի երկրորդ կիսամյակում Հանձնաժողովը շարունակել է համագործակցությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ՝ անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգում կոռուպցիոն ռիսկերի փորձնական գնահատման շրջանակում: Գնահատման առաջին փուլում բացահայտված խնդիրների խորքային պատճառների վերլուծության և արդյունավետ լուծումների մշակման նպատակով Հանձնաժողովը գնահատման երկրորդ փուլի իրականացումը պատվիրակել է հետազոտական կազմակերպության՝ ԱՄՆ ՄԶԳ «Բարեվարքություն Հայաստան» ծրագրի աջակցությամբ: 2024 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում ամփոփվել են շահառու խմբերի, իրավասու պետական մարմինների և ոլորտային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ իրականացված՝ 35 խորին հարցազրույցների, առանցքային տեղեկատուների 12 հարցազրույցների, 8 խմբային հարցազրույցների և 2 ֆոկուս խմբային քննարկումների արդյունքները: Գնահատումն իրականացվել է անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի հետևյալ գործընթացներում՝ ուղեգրում, ամփոփագրի մշակում, ֆունկցիոնալության գնահատում, ծառայությունների անհատական ծրագրերի մշակում և իրականացում, բողոքարկում, երրորդ կողմերի մասնակցություն, ֆունկցիոնալության գնահատման համակարգի թվայնացում, առանձին խմբերի անձանց ֆունկցիոնալության գնահատում, անձի ֆունկցիոնալության գնահատման նոր համակարգի ընդհանուր արդյունավետություն: Գնահատման արդյունքում մշակվել է համապարփակ զեկույց, որի հիման վրա իրավասու մարմինների հետ համագործակցությամբ նախատեսվում է մշակել հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիր՝ հասցեագրելով գնահատման ընթացքում բացահայտված ռիսկերը:

VIII. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

8.1 Կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրերը և համագործակցային շրջանակը

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, ընդլայնելով համագործակցային շրջանակը, հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է մի շարք կրթական և իրազեկման ծրագրեր՝ կազմակերպված տարբեր թիրախային խմբերի համար:

Կրթական միջոցառումների և հանրային իրազեկման հիմնական նպատակը հասարակության շրջանում կոռուպցիայի նկատմամբ «զրո» հանդուրժողականության ձևավորումն ու ամրապնդումն է:

Հաշվի առնելով, որ երիտասարդները հանրության շարժիչ ուժն են, Հանձնաժողովն իր գաղափարներն ու ռեսուրսները մշտապես ուղղում է նաև սովորողների համար համապատասխան միջավայր ապահովող շրջանակների, այն է՝ ուսուցիչների ու ծնողների մասնագիտական և անձնական զարգացմանը, քանի որ առանց նրանց կողմից ստեղծված կոռուպցիայի նկատմամբ «զրո» հանդուրժողականությամբ օժտված միջավայրի, Հանձնաժողովի կողմից մշակվող կրթական ծրագրերը աշակերտների և ուսանողների համար կդառնան բացառապես գիտելիք՝ առանց համապատասխան միջավայրի:

Այս համատեքստում՝

«Մանկավարժների և ծնողների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում» խորագրով հանդիպումների շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են թվով 3 միջոցառումներ՝ Կապանի, Սիսիանի և Երևանի դպրոցներում: Հանդիպումներին մասնակցել են շուրջ 9 տասնյակ մանկավարժներ և դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողներ: Մասնակիցները կիսվել են կոռուպցիայի վերաբերյալ իրենց պատկերացումներով, խրախուսել նման հանդիպումների շարունակականությունը և փոխհամագործակցությունը: Կարևորելով երիտասարդների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում՝ Հանձնաժողովի կողմից մշակվել և իրականացվել են «Դարձի՛ր փոփոխության առաջնորդ» կամ «Երիտասարդների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում» խորագրերով ոչ ֆորմալ կրթական ծրագրերը: Ծրագրերն իրականացվել են տարբեր ՔՀԿ ներկայացուցիչների հետ համագործակցության շրջանակներում՝ վերջիններիս առաջարկությամբ:

Մասնավորապես.

«Բոլորը հանուն հավասար իրավունքների» հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում սեպտեմբերի 25-ին առցանց ձևաչափով՝ Գյումրու 4 դպրոցներում և սեպտեմբերի 27-ին Հանձնաժողովում՝ Հայաստանի 4 դպրոցներում ձևավորված (Արարատ քաղաքի թիվ 2, Երևանի Ա. Շավարշյանի անվան թիվ 40, Վրեժ Համբարձումյանի անվան թիվ 17, Զաբել Եսայանի անվան թիվ 180 հիմնական դպրոցներ) Բարեվարքության ակումբների շուրջ 90 աշակերտների և մենթորների հետ անցկացվել են իրազեկման հանդիպումներ: Հանդիպումների նպատակն էր նպաստել աշակերտների, կոռուպցիայի վերաբերյալ, իրազեկման բարձրացմանը, կոռուպցիայի նկատմամբ զրո հանդուրժողականության ձևավորմանը և բարեվարքության խթանմանը: Այցելությունն ու առցանց հանդիպումն իրականացվել են «Բարեվարքության դեսպանները Հայաստանում» ծրագրի շրջանակներում՝ ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ:

- 2024 թվականի հոկտեմբերի 17-ին և նոյեմբերի 27-ին Հանձնաժողովի աշխատակիցները «Կոռուպցիա. Կոռուպցիայի բացասական հետևանքները» թեմայով բանախոսությամբ են հանդես եկել «Ֆրիդմ հաուս» միջազգային իրավապաշտպան կազմակերպության աջակցությամբ իրականացված «Ժողովրդավարական մշակույթի զարգացումը Հայաստանում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի կողմից կազմակերպված դասընթացներին՝ համապատասխանաբար Դիլիջանի և Արարատի ավագ դպրոցներում:

- 2024թ. հուլիսի 15-ին և 16-ին անցկացվել են դասընթացներ՝ «Ռեստարտ Իջևան» և «Ռեստարտ Գյումրի» երիտասարդական-քաղաքացիական կենտրոն հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Դասընթացներին մասնակցել են Շիրակի և Տավուշի մարզերի շուրջ 50 երիտասարդներ:

- Շարունակելով համագործակցությունը, Հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են նաև Տավուշի և Շիրակի մարզերի երիտասարդների համար հոկտեմբերի 11-ին կազմակերպված հակակոռուպցիոն երիտասարդական ճամբարին, հանդես են եկել բանախոսությամբ՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթները» և «Կոռուպցիայի բացասական հետևանքները» թեմաներով: Հանդիպմանը մասնակցել են վերոնշյալ մարզերի դպրոցների, քոլեջների և ԲՈՒՀ-երի, 14-25 տարեկան շուրջ 100 երիտասարդներ: «Շիրակի և Տավուշի մարզերի հակակոռուպցիոն երիտասարդական ցանց» ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ի «Հայաստան բարեվարքություն» ծրագրի շրջանակներում:

Հակակոռուպցիոն կրթական ծրագրերի իրականացման կարևոր թիրախ են հանդիսանում նաև լրատվամիջոցների և քաղհասարակության ներկայացուցիչները՝ կարևորելով վերջիններիս դերը և մասնակցությունը կոռուպցիայի կանխարգելման գործում: Այսպես.

- Հանձնաժողովը մասնակցություն է ունեցել «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության կողմից լրագրողների համար կազմակերպված «Հակակոռուպցիոն բարեփոխումների ընթացքը Հայաստանում» խորագրով սեմինար-քննարկմանը, որի ընթացքում ներկայացվել է Հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղությունները:

Հոկտեմբերի 28-ին և 30-ին Հանձնաժողովը կազմակերպել էր աշխատաժողովներ՝ համապատասխանաբար ՁԼՄ և ՔՀԿ ներկայացուցիչների համար՝ «Կոռուպցիայի կանխարգելման կարևորությունը և ԿԿՀ-ի դերը» խորագրով: Հանդիպումների ընթացքում մասնակիցներին ներկայացվել են հետևյալ թեմաները՝

- Անհամատեղելիության պահանջները՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ,
- Բարեվարքության ուսումնասիրությունը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ,
- Շահերի բախումը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ,
- Հայտարարագրման համակարգը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ,
- Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողությունը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ:

Կարևորելով երկուստեք համագործակցությունը՝ նմանատիպ հանդիպում-քննարկումները կրելու են շարունակական բնույթ:

Հանրային ծառայողների շրջանում, առաջին անգամ կազմակերպվել է «Կանխարգելի՛ր Կոռուպցիան» խաղ-մրցույթը՝ նոյեմբերի 20-30-ն ընկած ժամանակահատվածում, որին մասնակցություն են ունեցել շուրջ 330 հանրային ծառայողներ՝ տարբեր պետական մարմիններից: Մրցույթն իրականացվել է «Կորիզ» կրթական ծրագրի հետ համագործակցությամբ՝ «Կորիզ» հավելվածի և տվյալ խաղի կանոնների համաձայն: «Կորիզ» խաղ-մրցույթի 500 թեստային հարցերի կազմումը և մրցույթի ընթացիկ հարցերի կազմակերպումն իրականացրել են Հանձնաժողովի աշխատակիցները:

Խաղ-մրցույթի նպատակն էր ամրապնդել և բարելավել հանրային ծառայողների գիտելիքները վարքագծի կանոնների և բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ: Ուսուցման գործընթացն առավել հետաքրքիր և բովանդակալից դարձնելու նպատակով այն անցկացվել է խաղայնացման եղանակով:
Նախաձեռնությունն առաջին անգամ էր իրականացվում և փորձնական բնույթ էր կրում: Բոլոր խնդիրները գույքագրվել են՝ հետագայում շտկելու և ավելի անթերի կազմակերպելու նպատակով: Խաղ-մրցույթի ավարտից հետո, արդյունքների հիման վրա, կազմվել են վիճակագրական տվյալներ՝ գիտելիքների և գրանցված առաջընթացի վերաբերյալ: Այդ տվյալները հնարավորություն կտան հետագայում ավելի թիրախային դարձնել վերապատրաստման դասընթացների ընթացքում մատուցվող թեմաների ընտրությունը: Խաղի ընթացքում առավելագույն հավասար միավորներ հավաքած մասնակիցներին Հանձնաժողովի կողմից շնորհվել են խրախուսական մրցանակներ, իսկ առաջին երեք պատվավոր հորիզոնականները զբաղեցրած մասնակիցներին՝ հատուկ մրցանակներ:

-Դեկտեմբերի 9-ին, Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրը տեղի ունեցած «Կոռուպցիայի դեմ պայքարի մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները» խորագրով համաժողովի ընթացքում իրականացվել է նաև «Կորիզ» խաղ-մրցույթի հաղթողների մրցանակաբաշխությունը:

2024 թվականի դեկտեմբերի 19-20-ը տեղի է ունեցել «Կորպորատիվ կառավարումը պետական մասնակցությամբ ընկերություններում» աշխատաժողովը, որը կազմակերպվել է Կորպորատիվ կառավարման կենտրոնի, Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի, ԱՄՆ առևտրի դեպարտամենտի կոմերցիոն իրավունքի զարգացման ծրագրի, Ասիական զարգացման բանկի և Հանձնաժողովի համագործակցությամբ: Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ պետական և համայնքային մասնակցությամբ ընկերությունների, պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և փորձագիտական շրջանակի ներկայացուցիչներ:

Այսպիսով, 2024 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում Հանձնաժողովի կողմից կազմակերպված, և Հանձնաժողովի աշխատակիցների մասնակցությամբ անցկացված հանդիպումներին և միջոցառումներին մասնակցություն են ունեցել Երևան քաղաքի և մարզերի շուրջ 16 դպրոցների ավելի քան 300 աշակերտներ, բուհերի շուրջ 138 ուսանողներ, Երևան քաղաքի և մարզերի շուրջ 33 դպրոցների ավելի քան 87 մանկավարժներ և ծնողներ, ԶԼՄ-ների և ՔՀԿ-ների 44 ներկայացուցիչներ և շուրջ 500 հանրային ծառայողներ: Գծապատկերը ստորև՝



8.2 Հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերը

Հաշվի առնելով, որ արդյունավետ հակակոռուպցիոն պայքարի գործում առանցքային նշանակություն ունի կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ իրազեկման քաղաքականության մշակումը և իրականացումը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը շարունակել է հանրային իրազեկման արշավների, միջոցառումների իրականացումը՝ ուղղված կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության մշակույթի ձևավորմանը և հաշվետվողականության ամրապնդմանը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են մի շարք միջոցառումներ, վերապատրաստումներ, աշխատաժողովներ, իրազեկման արշավներ, Հանձնաժողովում հյուրընկալվել են միջազգային կազմակերպություններից, քաղաքացիական հասարակությունից և գործընկեր կառույցներից ներկայացուցիչներ: Հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են մի շարք դասընթացների, անցկացրել կրթական հանդիպումներ՝ նախատեսված միջին և ավագ դպրոցների աշակերտների համար, ունեցել միջազգային հանդիպումներ և

ուսումնական այցեր:
Իրազեկման արշավների շրջանակներում, Հանձնաժողովն իր ակտիվ մասնակցությունն է ունեցել նաև «Համախմբենք ուժերը՝ կանխենք կոռուպցիան» համապետական մեկամսյա իրազեկման արշավին, որը մեկնարկել էր «Երիտասարդներն ընդդեմ կոռուպցիայի» մարաթոնով և ավարտվել Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրը՝ դեկտեմբերի 9-ին: Համապետական արշավի արդյունքներն ամփոփվել են «Կոռուպցիայի դեմ պայքարի մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները» խորագրով համաժողովին, որի ընթացքում ներկայացվել ենՀանձնաժողովի կողմից 2024 թվականի ընթացքում իրականացված աշխատանքներն ու ձեռքբերումները, առկա մարտահրավերները և դրանց դիմակայելու հիմնական ուղղությունները:
Համապետական մեկամսյա իրազեկման արշավի ընթացքում կազմակերպվել է նաև «Հակակոռուպցիոն իրազեկման շաբաթ», որի շրջանակներում Հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են մի շարք միջոցառումներին: Մասնավորապես, «Հակակոռուպցիոն իրազեկման շաբաթվա» ընթացքում Հանձնաժողովի անդամները ընդունել են Երևանի պետական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետի ուսանողներին, իսկ Հանձնաժողովի աշխատակիցները տարբեր հանդիպումներ են կազմակերպել թվով 7 ուսումնական հաստատությունների շուրջ 180 սովորողների հետ:
Իրազեկման շաբաթվա շրջանակներում Հանձնաժողովի աշխատակիցները բանախոսությամբ հանդես են եկել նաև «Բիզնես բարեվարքությունը պետական քաղաքականության մեջ և գործարար պրակտիկայում» և «Նվերների ընդունման սահմանափակումների վերաբերյալ առկա կառուցակարգերը և իրականացված օրենսդրական վերջին փոփոխությունները» աշխատաժողովներին:
«Ազդարարի՛ր, Հայաստան» ծրագրի և ազդարարման համակարգի համապետական իրազեկման արշավի շրջանակներում մեկնարկած Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի 10-րդ հատուկ հոսքի ունկնդիրների համար դեկտեմբերի 13-ին կազմակերպվել էր նաև առցանց հանդիպում: Հանրային իրազեկման ծրագրերի շրջանակներում ավելի լայն զանգվածներ ներգրավելու նպատակով՝ Հանձնաժողովը Փաբլիսիս ընկերության հետ համատեղ, ԱՄՆ ՄԶԳ «Հայաստան բարեվարքություն» ծրագրի աջակցությամբ, մշակել է Հանձնաժողովի դերի և կարևորության բարձրացմանն ուղղված տեսանյութեր, անիմացիաներ, ինֆոգրաֆիկաներ, ստատիկ վիզուալներ, որոնց ընդհանուր դիտումների քանակը եղել է 8.289.529: Համաձայն մեդիա պլանի՝ առաջին փուլով լուսաբանվել է հեռուստատեսության (Հանրային և Շանթ հեռուստաալիքների) միջոցով, իսկ երկրորդ փուլով՝ թվային (Digital) հարթակների միջոցով և որպես թիրախային խումբ ընտրվել են 18-65 տարեկան անձինք: Իրազեկման արշավների արդյունավետությունը չափելու լավագույն գործիք է համարվում հանրային կարծիքի ուսումնասիրությունը: Այս համատեքստում, Հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 18-ի N 07-Լ որոշմամբ հաստատավել է կոռուպցիայի

վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրության մեթոդաբանությունը և հարցաթերթը: 2025 թվականին նախատեսված հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքները իրազեկման արշավների իրականացման համար կհանդիսանան ցուցիչներ՝ առավել արդյունավետ և թիրախային արշավներ կազմակերպելու համար:
Հանձնաժողովը մշակել է նաև կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ կրթական/ուսուցողական տեսանյութեր, որոնք ուղղված են սովորողների շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Տեսանյութերը տրամադրվել են նաև վերապատրաստում անցած մանկավարժներին՝ համապետական իրազեկման արշավի ընթացքում առավել բովանդակային դասեր կազմակերպելու նպատակով:
Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը շարունակել է սերտ համագործակցությունը լրատվամիջոցների հետ, կազմակերպել մի շարք հարցազրույցներ, քննարկումներ:
Բացի այդ, օրական երկանգամյա պարբերականությամբ իրականացվել է շուրջ 30 լրատվամիջոցների մամուլի մշտադիտարկում և Հանձնաժողովի գործառույթներին և լիազորություններին վերաբերելի հրապարակումների վերաբերյալ ամեն անգամ կազմվել է տեղեկանք:

IX Հանձնաժողովի գործունեության թվայնացում

9.1 Հայտարարագրման էլեկտրոնային համակարգ

Հայտարարագրման էլեկտրոնային համակարգը (այսուհետ՝ Համակարգ) զգալիորեն կատարելագործվել է 2024 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում:

Մասնավորապես.

- ապահովվել է ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության և ՀՀ ներքին գործերի նախարարության ճանապարհային ոստիկանության տվյալների շտեմարանների ինտեգրումը Համակարգի՝ տվյալների ավտոմատ ներբեռնման ֆունկցիոնալությանը: Ինտեգրման արդյունքում նշված գերատեսչություններից ևս անհրաժեշտ տվյալներն ինքնաշխատ եղանակով գեներացվում և արտացոլվում են հայտարարատու անձանց հայտարարագրերում:

- Համակարգում ակտիվացվել է արդեն իսկ հրապարակված հայտարարագրերում փոփոխություններ կատարելու ֆունկցիոնալությունը, ինչի արդյունքում հնարավոր է դարձել ապահովելու նախորդիվ ներկայացված հայտարարագրերում ուղղում կատարելու վերաբերյալ 300-ից ավելի դիմումներում նշված ուղղումների կատարումը:
- Ավտոմատացվել է հայտարարագրերում տվյալների փոփոխության վերաբերյալ դիմումների ներկայացման գործընթացը, ինչը նշանակում է, որ նշված դիմումները ներկայացվում են Համակարգի միջոցով, իսկ դրանց ամբողջ ընթացքն ապահովվում է Համակարգում համապատասխան գործողությունների և դրանցից բխող ավտոմատացված ծանուցումների կիրառությամբ:
- Կատարելագործվել է հաշվետվությունների համակարգը՝ հնարավորություն ընձեռելով գեներացնել ցանկացած բնույթի հաշվետվություններ, օրինակ՝ առանձնացնել սահմանված ժամկետից ուշ հանձնված հայտարարագրերի ցանկը, տվյալ պահին չներկայացված և ժամկետանց հայտարարագրերի ցանկը, նվիրատվություններ ստացած հայտարարատուների ցանկը և նմանատիպ այլ ցանկեր:
- Համակարգի տեխնիկական զինման աշխատանքների արդյունքում ապահովվել է հայտարարագրերի հրապարակային տվյալների ամբողջական արտահանման հնարավորությունը:

Միաժամանակ, իրականացվել են նաև այլ լավարկումներ, որոնց արդյունքում նվազագույնի է հասնում հայտարարագրման գործընթացում անզգուշության արդյունքում սխալ կամ ոչ ամբողջական տվյալների ներկայացումը:

9.2 Կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների հարթակ

Հանձնաժողովի էլեկտրոնային համակարգում ներդրված կուսակցությունների տարեկան հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման բաղադրիչի իրական ռեժիմում գործարկելուց հետո, ապահովված է կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ներկայացման գործընթացի համար գործարկված էլեկտրոնային հարթակը: 2024 թվականի հաշվետվությունների հավաքագրումն իրականացվելու է այս հարթակի միջոցով, ինչը նշանակում է, որ հավաքագրվող տվյալները լինելու են միատեսակ, ստանդարտացված, մեքենայական ուսուցման

գործիքների համար ընթեռնելի, հնարավորություն են ընձեռելու գեներացնել ավտոմատացված հաշվետվություններ, իրականացնել թվային վերլուծություններ և վարքագծային կանխատեսումներ: Հանձնաժողովը նախաձեռնել է նաև 2021 թվականից ի վեր ներկայացված հաշվետվությունների ներբեռնումը նոր հարթակ՝ դրանց նկատմամբ առկա և նախատեսվող թվային լուծումները կիրառելու նպատակով:

Միաժամանակ հարկ է նշել, որ Կուսակցությունների ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում՝ այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի՝ էլեկտրոնային նոր համակարգի միջոցով ներկայացման բաղադրիչը նույնպես ներդրված և արդեն իսկ գործարկված է, ինչի արդյունքում Կուսակցությունների ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում՝ այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերը, արդեն իսկ ներկայացվում են նոր հարթակի միջոցով:

9.3 Նվերների հաշվառման ռեեստր

Հաշվետու ժամանակահատվածում ավարտին է հասցվել նվերների ռեեստրի կառուցման աշխատանքների համար՝ ԱՄՆ ՄԶԳ կողմից հայտարարված մրցույթը և մեկնարկել են նվերների ռեեստրի կառուցման աշխատանքները մրցույթում հաղթող ճանաչված Սիներջի ինթերնեյշնլ սիսթեմզ ընկերության հետ:

Էլեկտրոնային ռեեստրը նախատեսված է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված՝ 40.000 ՀՀ դրամը գերազանցող, ինչպես նաև նույն աղբյուրից վեց ամսվա ընթացքում պարբերաբար (հինգ և ավելի անգամ) ստացված նվերների գրանցման և հաշվառման համար:

Ռեեստրի կառուցման աշխատանքները համաձայն պայմանագրի՝ կավարտվեն 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում:

9.4 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պաշտոնական կայք

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը գործարկել է իր նոր պաշտոնական կայքէջը, որը դարձել է ավելի կիրառելի և համապատասխան

ժամանակակից միտումներին՝ www.cpcarmenia.am: Նոր կայքի գործարկման հիմնական նպատակն է օգտատերերի համար առավել դասակարգված, մատչելի և հասանելի դարձնել Հանձնաժողովի կողմից հրապարակվող տեղեկատվությունը, ինչպես նաև՝ առավել բարձրացնել Հանձնաժողովի հանրային հաշվետվողականության, թափանցիկության մակարդակը: Կայքում առանձնացված են Հանձնաժողովի կողմից վարվող ռեեստրերի, Հանձնաժողովի գործառույթներին վերաբերելի էլեկտրոնային համակարգեր մուտք գործելու և հակակոռուպցիոն կրթության համար նախատեսված հատուկ բաժիններ:





Կայքը համապատասխանում է պետական մարմինների կայքերին ներկայացվող պահանջներին: Առանձին բաժիններ են նախատեսվել Հանձնաժողովի մասնագիտական ստորաբաժանումների համար: Նոր կայքում Հանձնաժողովի որոշումներն ու եզրակացությունները հասանելի են ըստ վարույթների տեսակների, առկա են որոնման առավել հեշտացված լուծումներ:

Հանձնաժողովի նիստերի համար ևս առանձնացվել է կայքի հատուկ տարածք, որտեղ հրապարակվում են նիստերի օրակարգերը, ժամանակացույցերը և արձանագրությունները:



9.5 Կրթական էլեկտրոնային հարթակ

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շարունակական վերապատրաստման և կարողությունների զարգացման նպատակով Հանձնաժողովը 2024 թվականին ակտիվ աշխատանքներ է տարել էլեկտրոնային ուսուցման հարթակի ստեղծման ուղղությամբ:

Այս նպատակով, Հանձնաժողովը ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի աջակցությամբ դեռ նախորդ կիսամյակում սկսել է կրթական առցանց հարթակի կառուցման նախապատրաստական աշխատանքները: Արդեն 2024 թվականի օգոստոսին պայմանագիր է կնքվել հայտերի գնահատման փուլը հաղթած մասնակցի հետ և մեկնարկել են հարթակի

կառուցման աշխատանքները: Կրթական հարթակը ծառայելու է որպես Հանձնաժողովի կրթական գործառույթի ապահովման գործիք՝ տրամադրելով բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ կրթական մոդուլների, թվային գրադարանի, կրթական ինտերակտիվ լուծումների հասանելիություն:

2024 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ արդեն իսկ մշակվել են կրթական հարթակի հիմնական կառուցվածքը, նախատեսվող բաժիններն ու դասընթացների բովանդակությունները: Հարթակը հնարավորություն է ստեղծում ծանոթանալու Հանձնաժողովի հետ կապի բոլոր գործիքներին, ինչպես նաև տալիս է գործիքներ հարթակի և դասընթացների վերաբերյալ Հանձնաժողովին անմիջապես կարծիքներ և առաջարկություններ ուղղելու համար:

Ուսուցման հարթակն ունի նաև «Գրադարան» բաժին, որտեղ զետեղված են ոլորտային կարևոր և օգտակար միջազգային և տեղական փաստաթղթեր, զեկույցներ ու որոշումներ, կանոնագրքեր, ընթերցանության այլ նյութեր:

Հարթակը դասընթացներ է նախատեսում ոչ միայն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների, այլև ոլորտով հետաքրքրվող ցանկացած տարիքային խմբի և մասնագիտության անձանց՝ հանրության լայն շերտերի համար: Դասընթացների բովանդակությունը մշակվում է հակակոռուպցիոն ոլորտի միջազգային լավագույն օրինակների հիման վրա՝ թույլ տալով օգտագործողին գիտելիքներ ստանալ ոչ միայն հայաստանյան պրակտիկայի, այլև միջազգային փորձի վերաբերյալ: Դասընթացները հագեցած են ոչ միայն ընթերցանության նյութերով, այլև ինտերակտիվ խաղերով, դիդակտիկ նյութերով, հարցումներով և ուսուցողական հոլովակներով:

Հանձնաժողովի ուսուցման հարթակը նախատեսվում է գործարկել 2025 թվականի փետրվար ամսին՝ առանձին բաղադրիչներին ավելի վաղ հասանելիության ապահովման հնարավորությամբ:


USAID
Գլխավոր
Դասընթացներ
Գրադարան
Մեր Մասին
Կապ Մեզ Հետ
Մուտք
Մեր մասին
Մեր արժեքները
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իր ձևավորումից ի վեր կարևորել է տարբեր թիրախային խմբերի համար դասընթացների, աշխատարանների և վերապատրաստումների իրականացումը
230
Հանրային ծառայողներ
50
Բարեվարքության հարցերով կազմակերպիչներ
150
Դպրոցահասակ երիտասարդներ
60
Համայնքային ծառայողներ

USAID
Գլխավոր
Դասընթացներ
Գրադարան
Մեր Մասին
Կապ Մեզ Հետ
ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
Դասընթացների որոնում
All categories
Filters
2 Courses
Կոռուպցիա
Կոռուպցիա. կանխարգելման հիմնադրույթները
1 Մասնակից
Բարեվարքություն
Բարեվարքության տարրերը հանրային ծառայությունում
1 Մասնակից

«Տվյալներն ընդդեմ կոռուպցիայի» 24-ժամյա անընդմեջ հաքաթոն

2024 թվականի դեկտեմբերի 7-ից 8-ը Հանձնաժողովը, Ամերիկայի միացյալ նահանգների Միջազգային զարգացման գործակալությունը և «Ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամը համատեղ կազմակերպել են «Տվյալներն ընդդեմ կոռուպցիայի» 24-ժամյա անընդմեջ հաքաթոնը: Հաքաթոնի գլխավոր նպատակն էր առաջարկել կոռուպցիայի դեմ պայքարի թվային լուծումներ հետևյալ ուղղություններով.

Ռիսկերի ավտոմատացված գնահատում

Մեքենայական ուսուցման միջոցով կոռուպցիոն ռիսկերի հայտնաբերում տվյալների տարբեր շտեմարանների համադրմամբ.

Վիզուալիզացիայի և հաշվետվությունների առաջատար գործիքների մշակում:

Ներկայացված նախագծերը գնահատվել են հետևյալ չափորոշիչներով՝ նորարարություն, տեխնիկական իրացում, ազդեցություն, իրագործելիություն և ներկայացում:

Հաքաթոնը հնարավորություն տվեց մասնակիցներին մրցելու 15,000 ԱՄՆ դոլար ընդհանուր մրցանակային ֆոնդի համար, որը, քննող հանձնաժողովի որոշմամբ բաժանվեց չորս՝ լավագույն արդյունք արձանագրած թիմերի միջև:

X ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի 2-րդ կիսամյակում Հանձնաժողովը շարունակել է ակտիվ համագործակցել միջազգային գործընկերների հետ, մասնավորապես.

- Հանձնաժողովի անդամները հանդիպել են ԱՄՆ ՄԶԳ Եվրոպայի և Եվրասիայի բյուրոյի ղեկավար Էրին Մըքինի հետ՝ ներկայացնելով հանրային կառավարման համակարգում բարեվարքության խթանման, հայտարարագրման և բարեվարքության ուսումնասիրության ինստիտուտների կայացման և զարգացման, կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրման ուղղությամբ իրականացված քայլերը, առաջիկայում ձեռնարկվելիք միջոցառումները, առկա խոչընդոտները և մարտահրավերները: Հանդիպման ընթացքում քննարկվել են կրթական և հանրային իրազեկման ուղղությամբ համատեղ մեկնարկած ծրագրերի արդյունքները, դրանց հետագա ընթացքի ապահովմանն ուղղված աշխատանքները, նախանշվել են համագործակցության ուղղությունները:
- Հանձնաժողովում հյուրընկալվել են Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) պատվիրակության ներկայացուցիչները՝ ծրագրերի փոխնախագահ Կատերին Էլլենայի գլխավորությամբ: Հանձնաժողով կատարած այցի շրջանակներում քննարկվել են Հայաստանում կուսակցությունների ֆինանսավորմանն առնչվող օրենսդրական և գործնական մի շարք խնդիրների վերաբերյալ:
- Հանձնաժողովի անդամներն ընդունել են Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) և Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) համատեղ պատվիրակությանը, որի շրջանակներում քննարկվել է Հայաստանի Հանրապետության 2023-2026թթ. հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակում գործարար բարեվարքության ամրապնդմանն ուղղված գործողություններն ու դրանցից բխող օրենսդրական փոփոխությունների գործընթացը, քննարկվել են համագործակցության հնարավոր տարբերակներ:
- Տեղի է ունեցել հանդիպում ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող և «Միլենիում Փարթներս Քոնսալթինգի» կողմից իրականացվող «Դիմակայող հաստատությունները ռազմավարական կոռուպցիայի դեմ» ծրագրի Հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցիչների հետ, որի շրջանակներում Հանձնաժողովի անդամները կարևորել են նախաձեռնության շրջանակներում համագործակցության երկու կարևորագույն ուղղությունները. կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում տեղեկատվության փոխանակման հարցում տարածաշրջանային համագործակցությունը և

ոլորտային ռիսկերի կառավարումը: Համաձայնեցվել են համագործակցության ուղղությունները և նախանշվել են կոնկրետ ծրագրեր:

Միջազգային համագործակցության շրջանակներում Հանձնաժողովը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և «Ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամի հետ համատեղ կազմակերպել է «Տվյալներն ընդդեմ կոռուպցիայի» հաքաթոնը, որի ընթացքում մասնակիցները առաջարկել են ռիսկերի ավտոմատացված գնահատմանը, տվյալների բազաների համադրմամբ կոռուպցիոն ռիսկերի հայտնաբերմանը և վիզուալիզացիայի և հաշվետվությունների առաջատար գործիքների մշակմանն ուղղված թվային լուծումներ:

Բացի այդ, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հետ համատեղ՝ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի շրջանակներում, Հանձնաժողովը կազմակերպել է «Հանձնաժողովի կարողությունների հզորացում փաստերի ստուգման և տվյալների հետ աշխատանքի ուղղությամբ» կարողությունների զարգացման միջոցառում՝ երկամսյա դասընթաց, որն իրականացրել է Այ Էյ Բի բիզնեսի միջազգային Ակադեմիան: Դասընթացների նպատակն էր նպաստել Հանձնաժողովի աշխատակիցների փաստերի ստուգման և տվյալների վերլուծության կարողությունների զարգացմանը: Ծրագրի շրջանակներում ներկայացվել են մի շարք թեմաներ, որոնք վերաբերում են տվյալների բազաների հետ աշխատանքի առանձնահատկություններին, տվյալների հավաքագրման գործիքակազմերին, տվյալների բազաներին և հարթակներին, շուկաների աշխատանքի մեխանիզմներին և այլն:

Հաշվետու ժամանակաշրջանում Հանձնաժողովը՝ միջազգային համագործակցության շրջանակներում հրավերներ է ստացել մասնակցելու միջազգային գործընկերների կողմից կազմակերպված միջոցառումներին և հանդիպումներին, այդ թվում՝:

- ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) և Թրանսփարենսի ինթերնեշնլի (ԹԻ) կողմից Բեռլինում կազմակերպված՝ Քաղաքական բարեվարքության 6-րդ ճամբարին, որը նվիրված է եղել քաղաքական կուսակցությունների արդյունավետ վերահսկողությանը: Քննարկման շրջանակներում ներկայացվել են Հայաստանում՝ քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման արդյունավետ վերահսկողության ուղղությամբ իրականացված բարեփոխումները, ինչպես նաև Հանձնաժողովի իրավակիրառ պրակտիկայի արդյունքում կարգավորումներում հայտնաբերված բացերը, քաղաքական կուսակցությունների ֆինանսական

վերահսկողության գործառույթի իրականացման համար նախատեսվող նորարական լուծումները, այդ թվում՝ կուսակցությունների հաշվետվությունների հավաքագրման էլեկտրոնային համակարգի և նախատեսվող վերլուծական գործիքների շուրջ զարգացումները:

- Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության (ՏՀԶԿ) Բիզնեսի բարեվարքության խմբի «Բիզնես բարեվարքության խթանման և ապահովման գործում կառավարության դերը» խորագրով Փարիզում կազմակերպված աշխատաժողովին, որի ընթացքում ներկայացվել են բիզնեսի բարեվարքության խթանման գործում պետական մարմինների առանձնահատուկ դերը, Հայաստանի՝ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության և դրա գործողությունների ծրագրի շրջանակներում նախատեսված գործողությունները, ինչպես նաև պետական մասնակցությամբ ընկերություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման ոլորտում Հանձնաժողովի կողմից մինչ օրս իրականացված աշխատանքներն ու առաջիկա ծրագրերը: Հատկանշական է, որ Հանձնաժողովն արդեն երկրորդ տարին է մասնակցում է խմբի հանդիպումներին և հանդես է գալիս հատուկ զեկույցով: